



Ա. Բ. Լենին

ՊԵՏՈՒԽԹՅՈՒՆ
ՀՅԴ


ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ



Պառկետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Ա. Ի. ԼԵՆԻՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ




ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ Օ 1938



11-28747 гр

В. И. ЛЕНИН
ГОСУДАРСТВО И РЕВОЛЮЦИЯ
Артиз—Издательство политической литературы
Ереван, 1938





ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ. ՀԵՊԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ¹

ՄԱՐՔԵՏԻՉՄԱՆ ՌԱՍՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎՐԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ
ԽԵՂԱԳԱՅԻ ՀԵՎԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա.ՌԱԶԻՆ ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Պետության հարցը ներկայումս թե՛ թեորիական և թե՛ գործնական-քաղաքական տեսակետից առանձին կարելորություն է ստանում։ Իմպերիալիստական պատերազմը չափազանց արագացրել ու սրել է մոնոպոլիստական կապիտալիզմի՝ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի փոխարկվելու պրոցեսը։ Աշխատավոր մասսաների հրեշավոր ճնշումը պետության կողմից, վորն ավելի ու ավելի սերտորեն է ձուլվում կապիտալիստների ամենազոր միությունների հետ, քանի զնում, այնքան ավելի հրեշավոր է դառնում։ Առաջավոր յերկրները—մենք խոսում ենք նրանց «թիկունքի» մասին—բանվորների համար զինվորական առաջնակիր բանտերի յեն վերածվում։

Զգձգվող պատերազմի անլուր սարսափներն ու աղետները մասսաների դրությունն անտանելի յեն դարձնում, ուժեղացնում են նրանց ըմբոստությունը։ Ակնհայտնի առում է միջազգային պրոլետարական հեղափոխությունը։ Նրա վերաբերմունքի հարցը դեպի պետությունը գործնական նշանակություն է ստանում։

Տասնյակ տարիների համեմատաբար խաղաղ զարգացման ընթացքում կուտակված ոպորտունիզմի տարրերն ամբողջ աշխարհի պաշտոնական սոցիալիստական կուսակցությունների մեջ սոցիալ-շուլիզմի տիրող հոսանք են ստեղ-

1 «Պետության և հեղափոխություն» բրոշյուրը գրված է Հելսինգիուրությամ 1917 թ. սեպտեմբերին (չին տուժարով՝ ողոսառություն), առաջին անգամ տպագրվել և «Ժաման» և Յանայ» հրատարակչությամբ։ Լույս տեսել 1918 թ.։

Տեղ: Այդ հոսանքը (Բուօաստանում՝ Պէտիանով, Պոտրեսով, Բրեշկովսկայա, Ռուբանովիչ, ապա մի փոքր քողարկված ձեռով՝ պ. պ. Ծերեթելի, Զերնով ու Ընկ., Գերմանիայում՝ Շայլեման, Լեգին, Դավիդ և ուրիշները, Ֆրանսիայում ու Բելգիայում՝ Ռենորել, Գեղ, Վանդերվելդ, Անդիիայում՝ Հայնդման ու Փարիսկաններ և այլն, և այլն), վոր խոսքով սոցիալիզմի՝, գործով՝ շուրջնեղիք, աչքի յիշներում «սոցիալիզմի» «առաջնորդների» անարդյակեյական համակերպումով վո՛չ միայն «իրենց» ազգային բուրժուազիայի, այլ հատկապես «իրենց» պետության շահերին, վորովհետև այսպես կոչված մեծ պետությունների մեծամասնությունը վաղուց շահագործում ու սովորացնում ե ամբողջ մի շարք մանր ու թույլ ժողովուրդների: Իսկ իմակերիսալիստական պատերազմն իսկ և իսկ մի պատերազմ ե՝ այդ տեսակ ավարը բաժանելու և վերաբաժանելու համար: Անհնար և կոխիլ մղել աշխատավոր մասսաներին ընդհանրապես բուրժուազիայի և մասնավորապես իմպերիալիստական բուրժուազիայի ազգեցությունից աղատագրելու համար՝ առանց «պետության» նկատմամբ յեղած ոպորտունիստական նախապաշարմունքների գեմ պայքարելու:

Մենք նախապես քննության ենք առնում Մարքսի ու Ենգելսի ուսմունքը պետության մասին, առանձնապես մանրամասն կանգ առնելով այդ ուսմունքի մոռացված կամ ոպորտունիստական աղավաղման յենթարկված կողմերի վրա: Այսուհետև հատուկ քննության կառնենք այդ աղաղումների գլխավոր ներկայացուցչին, Կարլ Կառցկուն, Յերկորության բնակչության կառավագանության վերաբերյան պատերազմի ժամանակ: Վերջապես, մենք կամքինք գլխավոր գծերով 1905 և առանձնապես 1917 թվի ուսական հեղափոխությունների վորձը: Այս վերջինն, ըստ յերեսութիւն, ներկայումս (1917 թ. ողոսուուի սկզբին) ավարտում է իր զարգացման առաջին շրջանը, քայլ ամբողջ հեղափոխությունն ընդհանրապես կարելի կլինի ըմբռնել միմիայն իրեր իմպերիալիստական պատերազմի առաջացրած սոցիալիստական պրոլետարական

հեղափոխությունների շղթայի ովակներից մեկը: Պետությանը պրոլետարիատի սոցիալիստական հեղափոխության ցուցաբերելիք վերաբերմունքի հարցը, այսպիսով, վո՛չ միայն գործնական-քաղաքական, այլև ամենահրատապ նշանակություն ե ձեռք բերում, իրեւ մի հարց՝ մասսաներին բացարելու, թե նրանք ինչ պետք ե անեն մաստիւտ աղաղայում՝ կապիտալի լծից աղատագրվելու համար:

ՀԵՂԻՆԱԿ

1917 թ. ողոսուու

ԱՌԱՋԱԲԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Ներկա, յերկրորդ, հրատարակությունը տպագրվում է գրեթե առանց փոփոխության: Ավելացված ե միայն II գրլիի Յ-րդ պարագրաֆը:

ՀԵՂԻՆԱԿ

Եռոկիա, 1918 թ. գեկտեմբերի 30(17)

ԴԱՍՍԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍՍՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ-
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍՍԿԱՐԳԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ԱՆՀԱՇՏԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆ

Մարքսի ուսմունքի հետ այժմ կատարվում է այն, ինչ
պատմության մեջ շատ անգամ կատարվել է հեղափոխական
մտածողների ու ձնչված դասակարգերի առաջնորդների
ուսմունքների հետ՝ ազատագրության համար նրանց մղած
պայքարում։ Ճնշող դասակարգերը մեծ հեղափոխականների
կենդանության ժամանակ նրանց մշտական հետապնդում-
ներով են հատուցել, նրանց ուսմունքին վերաբերվել են
ամենավայրենի չարությամբ, ամենակառաղի ատելու-
թյամբ, ստի ու զրպարտության ամենամոլեզին արշա-
վանքով։ Նրանց մահից հետո փորձեր են արվում անվնաս
սրբապատկերներ դարձնելու նրանց, այսպես ասած՝ կանո-
նականացնելու, նրանց անվանը վորոշ փառք վերապահե-
լու՝ ձնչված դասակարգերի «օմիթարության» ու հիմա-
րացման համար, բայց ամլացնելով հեղափոխական ուս-
մունքի բովանդակությունը, բթացնելով նրա հեղափոխա-
կան սրածայրությունը, գոեհկացնելով այն։ Մարքսիզմի
այդպիսի «մշակման» գործում այժմ համամիտ են բուր-
ժուազիան ու բանվորական շարժման ներսում գտնվող ո-
պորտունիստները։ Մոռանում են, ջնջոտում, աղավաղում
ուսմունքի հեղափոխական կողմը, նրա հեղափոխական վո-
քին։ Առաջին պլանն են մղում, փառաբանում են այն, ինչ
վոր ընդունելի յե կամ ինչ վոր ընդունելի յե թվում բուր-
ժուազիայի համար։ Բոլոր սոցիալ-շովինիստները հիմա

«մարքսիստ» են, կատակ չանե՞ք: Յեվ գերմանական բուրժուական դիտնական մարքսիզմի բնաջնջման այդ յերեկվա մասնագետներն այժմ ավելի ու ավելի հաճախակի խոսում են «աղքային-դերմանական» Մարքսի մասին, վորները թե դաստիարակել ե այսպես հոյակապ կերպով կաղմակերպված բանվորական միությունները՝ կողոպտիչ պատերազմ մղելու համար:

Քանի վոր գործն այս դրության մեջ ե, քանի վոր անլուր չափով տարածված ե մարքսիզմի աղավաղումը, մեր խնդիրն ամենից առաջ այն պիտի լինի, վոր վերականգնենք Մարքսի իսկական ուսմունքը պետության մասին: Դրա համար անհրաժեշտ է ամբողջ մի շարք յերկար ցիտատներ բերել Մարքսի ու Ենգելսի սեփական յերկերից: Անշուշտ յերկար ցիտատները շարադրանքը դժվարամարս կդարձնեն և նրա հանրամատչելիությանն ամենելին չեն նպաստի: Բայց առանց նրանց կառավարվել միանդամայն անկարելի յե: Մարքսի ու Ենգելսի յերկերից պետք ե անպայման մեջ բերել պետության հարցին վերաբերող բոլոր, կամ գոռնենք վճռական նշանակություն ունեցող բոլոր հատվածներն ըստ կարելույն ավելի լրիվ, վորպեսզի ընթերցողը կարողանա ինքնուրույն գաղափար կազմել գիտական սոցիալիզմի հիմնադիրների հայացքների ամբողջության ու այդ հայացքների զարգացման մասին, նույնպես և նրա համար, վորպեսզի վավերագրերով ապացուցված ու ակներև ցույց տրված լինի այդ հայացքների աղավաղումը ներկայումս տիրապետող «կառուցկիականության» կողմից:

Սկսենք Ֆր. Ենգելսի ամենից ավելի տարածված՝ «Բնաւանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» յերկեց, վոր 1894 թ. Շտուտգարտում լույս ետեսել արդեն 6-րդ հրատարակությամբ: Մենք հարկադրված ենք ցիտատները թարգմանելու գերմաներեն բնագրերից, վորովհետեւ ուսւերեն թարգմանությունները, չնայած նրանց բաղմաթիվ լինելուն, մեծ մասամբ կամ լրիվ չեն, կամ ծայրահեղ չափով անբավարար են կատարված:

«Պետությունն, —ասում ե Ենգելսը, ամփոփելով իր պատմական վերլուծությունը, —ամենելին հասարակությանը գրսից փաթաթված մի ուժ չե: Պետությունը նմանապես «բարոյական դադափարի իրականու-

թյունը չե», «բանականության պատկերն ու իրականությունը», ինչպես պնդում ե Հեգելը: Պետությունը հասարակության արդյունքն ե զարգացման վերոշ աստիճանի ժամանակը պետությունը մի խոսով անությունն ե, թե այս հասարակությունն անլուծելի մի հակառակության մեջ ե խճճվել ինքն իրեն հետ, անհաշուելի հակառակությունների յի բաժնին, գորնցից նա անզոր և ազատվելու: Բայց վորպեսզի այդ հակառակությունները, միմյանց ներհակ տնտեսական չահեր ունեցող դասակարգերը չփոքն իրար ու հասարակությունն անպառը կոմի մեջ, դրա համար անհրաժեշտ դարձալ մի այնպիսի ուժ, վորն, ըստ յերկությն, հասարակությունից վեր և կանոնած, մի ուժ, վորը չափավորելու յեր բաղմումը, այն պահելու յեր «կարգի» սահմաններում: Յեվ այդ ուժը, վոր ծագել և հասարակությունից, բայց իրեն նրանից վեր և դասում, միշտ ավելի ու ավելի խորթանում և նրանից, —պետությունն ե» (գերմաներեն վեցերորդ հրատարակության եջ 177—178):

Այստեղ լիակատար պարզությամբ արտահայտված ե մարքսիզմի հիմնական գաղափարը պետության պատմական դերի ու նշանակության մասին: Պետությունը դասակարգային հակասությունների անհաշուելիության արդյունք ու արտահայտությունն ե: Պետությունն առաջ ե գալիս այնատեղ, այն ժամանակ և այն չափով, վորաեղ, յերբ ու վոր չափով դասակարգային հակասություններն ոբյեկտիվորեն չեն կարող հաշտեցվել: Յեվ ընդհակառակը, պետության գոյությունն ապացուցում ե, վոր դասակարգային հակասություններն անհաշուելի յեն:

Հատկապես հենց այս կարևորագույն ու հիմնական կետի վերաբերմամբ սկզբում և մարքսիզմի աղավաղումը, վոր յերկու գլխավոր գծով ե ընթանում:

Մի կողմից՝ բուրժուական ու հատկապես մանր-բուրժուական իդեոլոգները, վորոնք անվիճելի պատմական փաստերի ճնշման տակ հարկադրված են ընդունելու, վոր պետություն կա այնտեղ միայն, վորաեղ դասակարգային հակասություններ ու դասակարգային կոխվ կա, Մարքսին «սրբագրում են» այն ձեռով, վոր պետությունը դասակարգերի հաշտեցման որդան և դուրս գալիս: Բայց Մարքսի, պետությունը վո'չ կարող եր ծագել, վո'չ ել կանգուն մնալ, յեթե դասակարգերի հաշտեցումը հնարավոր լիներ: Գաղքենի ու Փիլիսոփեր¹ պրոֆեսորների ու հրատարակա-

1 Ֆիլիսոփեր—քաղքենի:

Արքինակը, բոլոր եսերներն (սոցիալիստ-հեղափոխականները) ու մենչեւիկները 1917 թվի հեղափոխության ժամանակ, յերբ հենց ծառացավ պետության նշանակության ու գերի հարցն իր ամբողջ մեծությամբ, ծառացավ գործնականության, իբրև անմիջական գործողության հարց և այն ել՝ մասսայական մասշտարով գործողության,—բոլորը միանդամից ու ամբողջությամբ գլուխեցին դեպի դասակարգերին «պետության» միջոցով «Հաշտեցնելու» մանր-բուրժուական թեորիան։ Այդ յերկու կուսակցությունների քաղաքագետների անհամար բանաձևերն ու հոդվածները մինչեւ ծուծը տողորված են «Հաշտեցման» այդ քաղքենիական ու ֆիլիսոփայական թեորիայով։ Վոր պետությունը տիրապետության որդան է վորոշ դասակարգի, վոր չի կարող հաշտեցվել իր հակոտնյայի հետ (իրեն հակարգիր դասակարգի հետ), այս բանը մանր-բուրժուական դեմոկրատիան յերբեք ի վիճակի չե ըմբռնելու։ Դեպի պետությունն ունեցած վերաբերմունքն ամենաակնբախ արտահայտություններից մեկն է այն բանի, վոր մեր եսերներն ու մենշևիկներն ամենեին սոցիալիստներ չեն (մի բան, վոր մենք, բոլցեւիկներու, միշտ ել ապացուցել ենք), այլ զրեթե սոցիալիստական ֆրակցիոնդիա բանեցնող մանր-բուրժուական դեմոկրատներ են։

Մյուս կողմից՝ մարքսիզմի «կառւցկետան» աղավա-

զումը շատ ավելի նուրբ է: «Թեորիապես» չի ժիտվում վո՛չ այն, վոր պետությունը դասակարգային տիրապետության որգան է, վո՛չ ել այն, վոր դասակարգային հակասություններն անհաջողելի յեն: Բայց աչքաթող է արվում կամ քողարկվում և հետևյալը՝ յեթե պետությունը դասակարգային հակասությունների անհաջողելիության արդյունք է, յեթե այն մի ուժ է, վոր հասարակությունից վեր և կանգնած և «ա վ ե լ ի ու ա վ ե լ ի խ ո ր բ ա ն ո ւ մ և հասարակությունից», ապա պարզ է, վոր ճնշված դասակարգի աղատագրումն անկարելի յե վո՛չ միայն առանց բռնի հեղափոխության, այլ և առանց պետական իշխանության այն աղարսատի վ ու չ ը ն չ ա ց մ ա ն, վոր ստեղծել և տիրող դասակարգը և վորի մեջ մարմնացած և այդ «խորթացումը»: Թեորիաս պես ինքնըստինքյան պարզ այս յեղակացությունն, ինչ պես մենք կահսնենք ստորև, արել և Մարքսն ամենակատարյալ վորոշակիությամբ՝ հեղափոխության խնդիրների կոնկրետ-պատմական վերլուծման հիման վրա: Յեկ հենց այս յեղակացությունն է, վոր Կառուցիկին-մենք այդ մանրամասնորեն ցույց կտանք հետագա շարադրանքի ընթացքում—«մոռացել ե» ու աղճատել:

2. ԶԻՒՎԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՏՈՒԿ ԶՈԿԱՏՆԵՐ,
ԲԱՆՏԵՐ ՅԵՎ ԱՅԼՆ

... «Հին գենոտիւ (տոհմային կամ կլանային) կազմակերպության ամենասուբյամբ—չարունակում և ննդելով—պետությունը տարբերված, ամենից առաջ, նրանով, վոր նա պետության հպատակներին բաժառում և ըստ տերիտորիայի»... Այդ բաժանումը մեղ «բնական» և պլուտ, բայց նա արդյունք է յերկարամեն պայթարի հին ցեղային ու ուհային կազմակերպության դեմ:

... «Եւրկըորդ տարրերից զիծը հասարակական իշխանության հասառաւմն է, վորոն այլև անմիջականորեն չի համընկնում ինքն իրեն ըրեւ զինված ուժ կազմակերպող բնակչության հետ: Այս հասառակ հարրակական իշխանությանն անհրաժեշտ է, վորովհետեւ դասարարութեան ամանգելուց հետո՝ բնակչության ինքնառողջության զինված կազմակերպության անկարելի յեր զարձել... Այս հասարակական իշխանությունը դպյություն ունի ամեն մի պետության մեջ: Այն բազկացած և վո՛չ իսայն զինված մարդկանցից, այլ նաև իրային Հավելվածներից, բան-

տերեց ու ամեն տեսակի այլ հարկադրիչ հիմնարկներից, վորոնք հասարակության առհմային (կլսնային) կազմակերպությանն անհայտ էյին...

Ենդելսը ծավալում եւ այն «ուժի» ըմբոնումը, վորը պետություն եւ կոչվում, այն ուժի, վորը բղիմել եւ հասարակությունից, բայց իրեն նրանից վեր եւ դասում և ավելի ու ավելի խորթանում եւ նրանից: Ի՞նչ եւ այդ ուժը գլխավորապես: Այդ զինված մարդկանց հասուկ ջոկատներ են, վորոնք իրենց տրամադրության տակ ունեն բանտեր և այլն:

Մենք իրավունք ունենք զինված մարդկանց հասուկ ջոկատների մասին խոսելու, վորովհետեւ ամեն մի պետությանն առանձնահատուկ հասարակական իշխանությունն «անմիջականորեն չի համընկնում» զինված բնակչության, նրա «ինքնազործոն զինված կազմակերպության» հետ:

Ինչպես բոլոր մեծ հեղափոխական մտածողները, Ենդելսն աշխատում եւ գիտակից բանվորների ուշադրությունը հրավիրել հենց այն բանի վրա, ինչ վոր ամենից ավելի նվազ ուշադրության արժանի յեւ թվում տիրապետող քաղքենիությանը, ամենից ավելի սովորական եւ, սրբագրծված վո՛չ միայն հաստատուն, այլ, կարելի յեւ ասել, քարացած նախազարմունքներով: Մշատական զորքն ու վոստիկանությունը պետական իշխանության ուժի գլխավոր զենքերն են, բայց—մի՞թե այդ կարող եւ այլ կերպ լինել:

XIX դարի վերջի յեվրոպացիների վիթխարի մեծամասնության տեսակետից, վորոնց դիմում եր Ենդելսը և վորոնք չեյին ապրել ու մոտիկից չեյին դիտել վոչ մի մեծ հեղափոխություն, այդ այլ կերպ լինել չի կարող: Նրանց համար բոլորովին անհասկանալի յեւ, թե ինչ բան եւ այդ «բնակչության ինքնազործոն զինված կազմակերպությունը»: Այն հարցին, թե ինչու հատուկ, հասարակությունից վեր դասված, հասարակությունից խորթացած զինված մարդկանց ջոկատների (վոստիկանություն, մշտական բանակ) հարկ յեղափ, արևմտայելվրոպական ու սուս Փիլիստերը հակված եւ պատասխանելու Սպենսերից կամ Միխայլովսկուց վոխ առած մի զույդ Փրազով, մատնանշելով հա-

սարակական կյանքի բարդացումը, Փունկցիաների ու Փերենցիացիան և այլն:

Այդպիսի մատնանշումը «գիտական» և թվում և հիանալի կերպով քննցնում և քաղքենուն, մթագնելով գլխավորն ու հիմնականը՝ հասարակության պառակտումն անհաշտելիութեն-թշնամական դասակարգերի:

Յեթե այդ պառակտումը չլիներ, «բնակչության ինքնազործոն զինված կազմակերպությունն» իր բարդությամբ, իր տեխնիկայի բարձրությամբ և այլն կուարտերվեր գագանակների հոտի, կամ նախադադրյան մարդկանց, կամ այն մարդկանց պրիմիտիվ կազմակերպությունից, վորոնք միանալով կլանային հասարակություններ են կազմում, բայց այդպիսի կազմակերպությունը հնարավոր կլիներ:

Այն անհնարին եւ, վորովհետեւ քաղաքակրթության չըջանի հասարակությունը պառակտված եւ թշնամական, և այն ել անհաշտ թշնամական գասակարգերի, վորոնց «ինքնազործոն» զինումը զինված կոկվ կառաջացներ նրանց միջև: Կազմակորպում եւ պետություն, ստեղծվում եւ հատուկ ուժ, զինված մարդկանց հասուկ ջոկատներ, և ամեն մի հեղափոխություն, խորտակելով պետական ապարատը, ակնբախ կերպով ցույց եւ տալիս մեզ, թե ինչպես տիրապետող գասակարգը ձգտում եւ վերականգնել զինված մարդկանց իրեն ծառայող հատուկ ջոկատները, թե ինչպես ճնշված գասակարգը ձգտում եւ այդ տեսակ մի նոր կազմակերպություն ստեղծել, վոր ընդունակ լինի ծառայելու վո՛չ թե շահագործողներին, այլ շահագործվողներին:

Մեջբերված դատողության մեջ Ենդելսը թեորիապես հենց այն հարցն եւ զնում, վորը գործնականորեն, ակնբախ կերպով և այն ել մասսայական գործողության մասշտաբով մեր առաջ և զնում ամեն մի մեծ հեղափոխություն, այն մեր առաջ մարդկանց «հատուկ» ջոկատների ու «բնակչության ինքնազործոն զինված կազմակերպության» վոխ-հարաբերության հարցը: Մենք կտեսնենք, թե ինչպես եւ այդ հարցը կոնկրետ կերպով լուսարանվում յեւփրոպական ու ուռասկան հեղափոխությունների փորձով:

Բայց վերագառնանք Ենդելսի շարադրանքին:

Նա նշում ե, վոր յերբեմն, որինակ՝ Հյուսիսային Ամերիկայի վորոշ վայրերում, այդ հասարակական իշխանությունը թույլ է (խոսքը վերաբերում է կապիտալիստական հասարակության համար հազվագեղ մի բացառության և միջնչմագիստրական շրջանի Հյուսիսային Ամերիկայի այն մասերին, վորտեղ գերիշխում եր ազատ կոլոնիալը), բայց, ընդհանրապես ասած, ուժեղանում ե.

... «Հասարակական իշխանությունն ուժեղանում և այն չափով, վորչափով դասակարգային հակասությունները սրվում են պետության ներսում, և վորչափով միմյանց սահմանական պետություններն ավելի մեծանում ու բազմաբարդ են դառնում: Նայեցեք թեկող այժմյան Յեղուազային, վորտեղ դասակարգային կոլոնն ու նվաճումների մրցումը հասարակական իշխանությունն այնպիսի բարձրության են հասցեւ, վոր նա սպառնում ե կլանել ամբողջ հասարակությունն ու մինչև անդամ պետությունը»...

Այս տողերը դրված են անցյալ դարի 90-ական թվականների սկզբից վոչ ուշ: Ենդեւսի վերջին առաջարանը թվադրված է 1891 թ. հունիսի 16: Այն ժամանակ ըրջադարձը դեպի իմպերիալիզմը—թե՛ արեստների լիակատար տիրապետության իմաստով, թե՛ խոշորագույն բանկերի ամենազորության իմաստով, թե՛ վիթխարի գաղութային քաղաքականության իմաստով և այլն—դեռ նոր-նոր եր սկզբնավորվում Ֆրանսիայում, ե՛լ այլին թույլ կերպով՝ Հյուսիսային Ամերիկայում ու Գերմանիայում: Դրանից հետո «նվաճումների մրցումը» հսկայական քայլ և արել դեպի առաջ, մանավանդ վոր յերկրագումդը Հայությունը յերկրորդ տասնամյակի սկզբին վերջնականապես բաժանված եր այդ «մրցող նվաճողների», այսինքն՝ մեծ կողոպտիչ պետությունների միջև: Ուազմական ու ծովային սպառազինումներն այն ժամանակվանից հետո անսելի չափերով աճել են, և 1914—1917 թ.թ. կողոպտիչ պատերազմը, վորը մզվում եր Անգլիայի կամ Գերմանիայի համաշխարհային տիրապետության համար, ավարի բաժանման համար, մոտեցրեց այն ժամը, յերբ պետական գիշատիչ իշխանության կողմից հասարակության բոլոր ուժերի «կլանումը» լիակատարաստրովի մոտեցրեց:

Դեռ 1891 թվին Ենդեւսի կարողանում եր նշել «նվա-

ճումների մրցումն» իբրև մեծ պետությունների արտաքին քաղաքականության կարևորագույն տարբերիչ գծերից մեկը, իսկ սոցիալ-շուլինիզմի սրբկանները 1914—1917 թվականներին, յերբ հենց այդ մրցումը, շատ ավելի սրվելով, առաջ բերեց իմպերիալիստական պատերազմը, «իրենց» բուժուազիայի կողոպտիչ շահերի պաշտպանությունը քողարկում են «Հայրենիքի պաշտպանության», «Հանրապետության ու հեղափոխության պաշտպանության» և այլ նման Փրազներով:

3. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՃՆՇՎԱԾ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԻՔ Ե

Հասարակությունից վեր կանգնած հատուկ հանարակական իշխանության պահպանման համար հարկավոր են հարկեր ու պետական պարտքեր:

... «Հասարակական իշխանություն և հարկեր հավաքելու իրավունք ունենալով, չինովնիկները—զրում ե Ենդեւսի կարգավորության նկատմամբ վերադաս են զառնում: Այն ազատ, հոգաբակամ հարգանքը, վոր տածվում եր գեպի տոհմական (կլանային) հասարակության որդանները, նրանց այլև չի բավարարում—նույնիսկ յեթե կարողանային այդ հարգանքը վաստակելու»... Ստեղծվում են հատուկ որենքներ՝ չինովնիկների սրբության ու անձեռնմխելիստյան մասին: «Վստիկանական ամենազորորմելի պաշտոնյան» ավելի մեծ «Հեղինակություն» ունի, քանի կլանի ներկայացուցիչները՝ բայց քարտակական իշխանության ուազմական իշխանության գլուխը կարգթված պետության նույնիսկ սպառազինության գլուխը կարուց ե առհմավագին նախանձել, վորը վայելում ե հասարակության հոժարակամ և վոչ թե «բանությամբ» ձեռք բերված հարգանքը:

Այստեղ դրված ե չինովնիկների արտոնյալ դրության հարցն, իբրև պետական իշխանության որդանների հարց: Իբրև հիմնականը նշված է, թե ինչն ե նրանց հասարակությունից վեր դասում: Մենք կտեսնենք, թե այդ թեորիական հարցն ինչպես եր լուծում Փարիզի կոմունան 1871 թվին գործնականորեն և ինչպես եր 1912 թվին Կաուցկին ուեակցիոն ձեռվ մթագնում այն:

... «Վորովչետե պետությունը ծագել է դասակարգային հակառակությունները սանձաւարելու պահանջից, վորովչետե այն միենալոյն ժամանակ ծագել է հենց այդ դասակարգերի բաղկառմերի մեջ, ուստի և ընդհանուր կանոնի համարյան, նա պետությունն ե ամենահզոր,

անտեսապես տիբապետով դասակարգի, վորը պետության ողջամբ քաղաքականական և իշխանական պահպանությամբ գործականացնելու և այդպիսով նոր միջոցներ և ձեռք բերում ճնշված դասակարգին ճնշելու և շահատրոքելու համար»... Վո՞չ միայն Հին ու Փետրալական պետություններն են սուրբերի ու Նորտերի շահագործման որդան յեզել, այլև «ժամանակակից ներկայացաւչական պետությունը կապիտալի կողմից վարձու աշխատանքը շահագործելու գործիք և Սահայն, իբրև բացառություն, լինում են ժամանակաշրջաններ, յերբ կովող դասակարգերն ուժերի այնպիսի հավասարակշռության են հասնում, վոր պետական իշխանությունը ժամանակավորապես վորոշ ինքնուրույնություն և ձեռք բերում յերկու դասակարգերի վերաբերմբ ել, իբրև կարծեցյալ միջնորդ նրանց միջն»... Այդպես եր XVII ու XVIII դարերի բացարձակ միապետությունը, առաջին ու յերկրորդ կայսրության բոնապարտիզմը՝ Ֆրանսիայում, Բիսմարկը՝ Գերմանիայում»:

Այդպես ե,—կալվելացնենք մեր կողմից,—կերենսկու կառավարությունը հանրապետական Ռուսաստանում այն ժամանակվանից, յերբ նա անցավ հեղափոխական պրոլետարիատի հալածմանը, այնպիսի մոմենտում, յերբ Խորհուրդները, մանր-բուրժուական դեմոկրատների ղեկավարության չնորհիվ, արդին անզոր են, իսկ բուրժուազիան դեռ բարականաչափ ուժեղ չե, վորպեսզի ուղղակի ցըլ:

Դեմոկրատական հանրապետության մեջ,—չարունակում և ենթելուր,—«հարստությունն իր իշխանությունից ոգտվում ե անողակի կերպով, բայց դրա փոխարեն ալելի հաստատապես»,—այսինքն՝ նախ «չինովնիկներին ուղղակի կաշառելով» (Ամերիկա), յերկրորդ՝ «կառավարության ու բարսայի դաշնիքի միջոցով» (Ֆրանսիա ու Ամերիկա):

Ներկայումս իմպերիալիզմն ու բանկերի տիբապետությունը, վո՞ր գեմոկրատական հանրապետության մեջ ելլինի, հարստության ամենակարողությունը պաշտպանելու կենսագործելու այդ յերկու յեղանակներն ել «զարդարել», արտակարգ արվեստի աստիճանի յեն հասցըլ: Յեթե, որինակ, Ռուսաստանի գեմոկրատական հանրապետության հենց առաջին ամիսներին, կարելի յե ասել՝ «սոցիալիստ» Էսերների ու մենշեկների և բուրժուազիայի պսակադրության մեջ պահպանին, կոալիցիոն կառավարության մեջ պահպանին սարսաթ եր անում այն բոլոր միջոցների դեմ, չինակին սարսաթ եր անում այն բոլոր միջոցների դեմ, վորոնք ձեռք ելին առնվում կապիտալիստներին ու նրանց մարողյուրությունը ուղղական մատակարարությունների միջո-

ցով նրանց կողմից դանձաբանի կօղոպտումը սահմանագալու համար, յեթե, այնուհետև, մինիստրությունից հեռացած պ. Պալչինսկին (վոր փոխարինվեց, իհարկե, մի այլ, բոլորովին նույն տեսակ Պալչինսկով) «պարզեատրված ե» կապիտալիստների կողմից տարեկան 120-000 ռուբլի ռոճիկ տվող պաշտոնով, —ի՞նչ և այդ արդյոք ուղղակի^o, թե անուղղակի կաշառում արդյոք այդ դաշինք է կառավարության ու սինդիկատների միջև, թե «միմիայն» բարեկամական հարաբերություններ: Ի՞նչ գեր են խաղում Զերնովներն ու Ծերեթելիները, Ավկսենյայելիներն ու Սկորելիվները:—Արդյոք նրանք գանձարաննը թալանող միլիոնատերների «ուղղակի^o» դաշնակիցներն են, թե միմիայն անուղղակի:

«Հարստության» ամենազորությունը զոմոկրատական հանրապետության մեջ ավելի հաստատուն և այն պատճառով, վարովհետև այն կախված չե կապիտալիզմի քաղաքական վարչ կեղեցից: Դեմոկրատական հանրապետությունը կապիտալիզմի հասրավոր ամենալավ քաղաքական կեղեն և, և այդ պատճառով ել կապիտալը, տիրելով (Պալչինսկիների, Զերնովների, Ծերեթելիների ու Բնկի միջոցով) այդ լավագույն կեղենին, ըստ իշխանությունն այնքան հուսալի, այնքան հաստատուն կերպով և հիմնավորում, վոր բուրժուական գեմոկրատական հանրապետության վո՞չ անձերի, վո՞չ հիմնարկների, վո՞չ կուսակցությունների և վոչ մի փոփոխումը այդ իշխանությունը չի սասանեցնի:

Պետք է նշել նաև այն, վոր Ենթելը լիակատար վորոշությամբ բուրժուազիայի տիրապետության գործիք և անվանում ընդհանուր ընտրական իրավունքը: Ընդհանուր ընտրական իրավունքն, —ասում ե նա, ակներեսորեն հաշվի առնելով գերմանական սոցիալ-գեմոկրատիայի յերկարատև փորձը, —

«Քանիոր դասակարգի հասունության ցուցանիշն ե: Նա ավելի բան առաջին ամիսներին, կարելի յե ասել՝ «սոցիալիստ»

Մեր ևսերների ու մենշեկների նման մանր-բուրժուական գեմոկրատական ինչպես նաև նրանց հարազատ յեղայրները՝ Արեմայան Յեկարոպայի ընտրությալ-չովինիստներն ու ոպորտունիստները, հենց ասելի բան» են սպասում



ընդհանուր ընտրական իրավունքից : Նրանք իրենք ընդունում են և ժողովրդին ել ներշնչում են այն սխալ միտքը՝ իր թե ընդհանուր ընտրական իրավունքն «այժմյան պետության մեջ» խօսապես կարող ե արտահայտել աշխատավորների մեծամասնության կամքը և ապահովել այդ կամքի կենսագործումը :

Մենք կարող ենք այստեղ միմիայն նշել այդ սխալ միտքը, կարող ենք միմիայն մատնացույց անել այն, վոր Ենգելսի միանդամայն պարզ, ճշգրիտ, կոնկրետ հայտարարությունն ամեն քայլափոխում աղավաղվում և «պաշտոնական» (այսինքն՝ ոպորտունիստական) սոցիալիստական կուսակցությունների պրոպագանդայի ու ագիտացիայի մեջ։ Ենգելսի կողմից այստեղ դեն չպրոտված այդ մտքի ամբողջ ստության մանրամասն պարզաբանումը մենք տալիս ենք Մարքսի ու Ենգելսի «այժմյան» պետության մասին ունեցած հայտացքների մեր հետազա շարադրանքի մեջ։

իր հայացքների ընդհանուր ամփոփումն Ենթելսը տա-
լիս և իր ամենահանրամատչելի յերկի մեջ հետեւյալ խռո-
քերով.

«Ուրեմն, պետությունը մշտնջենապես գոյություն չի ունեցել: Հասարակություններ են յեղել, վորոնք առանց նրան են կառավարվել, վորոնք վոչ մի դադարիար չեն ունեցել պետության ու պետական իշխանության մասին: Տնտեսական զարգացման վորոշ աստիճանի վրա, վորոնք հարաբեկարար կաված եր հասարակության դասակարգերի բաժանվելու հետ, պետությունն այս բաժանման շնորհիվ անհրաժեշտություն դարձավ: Մենք այժմ արագ քայլերով մոտենում ենք արտադրության զարգացման մի այնպիսի աստիճանի, վորի ժամանակ այս դասակարգերի գոյությունը վո՞չ միայն զադարել ե անհրաժեշտություն լինելուց, ուղղակի խոչընդուռ և զառնում արտադրության համար: Դասակարգերը կանհետանան այնպես անխուսափելի կերպով, ինչպես նրանք անցյալում անխուսափելիորեն ծագել են: Դասակարգերի անհետանալու հետ, անխուսափելիորեն կանհետանա պետությունը: Այն հասարակությունը, վորն արտադրությունը նոր ձևով կկազմակերպէ՝ արտադրողուների ազգայի ու համասար ընկերակցության հիման վրա, ամոռով պետական մեքանան կուղարկի այնտեղ, վորտեղ նրա խկական տեղը կլինի այնուհետեւ, այն ե՛ հնությունների թանգարանը, ճախարակի ու բրոնզե կացնի կողքին»:

Արդի սոցիալ-դեմոկրատիայի պրոպագանդիստական ու
ազիտացիոն գրականության մեջ գուք հաճախ չեք հանդի-

պի այս ցիտատին։ Բայց նույնիսկ այն ժամանակ, յերբ
այս ցիտատը պատահում է, մեծ մասամբ այն մեջ են բե-
րում այնպես, կարծես յերկրագագում են որբազրատկերին,
այսինքն՝ Ենդելսին պաշտոնապես պատիվ տալու համար,
ընալ չփորձելով խորապես մտածելու, թե «ամբողջ պետա-
կան մեքենան հնությունների թանգարանն ուղարկելու» այդ
միտքը հեղափոխության վորքա՛ն լայն ու խոր թափ է
յենթագրում։ Մեծ մասամբ չի ել յերկում, թե հասկանո՞ւմ
են արդյոք այն, ինչ վոր Ենդելսը պետական մեքենա յե-
անիվանում։

4. ՊԵՏՈՒԹՅԱՆ «ՄԱՀԱՅՈՒՄԸ» ՅԵՎ, ԲՈՒՆԻ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ենդելսի խոսքերը պետության «մահացման» մասին այնքան լայն են տարածված, այնքան հաճախ են քաղվածորեն մեջ բերվում, այնքան ցայտուն կերպով են ցույց տալիս մարքսիզմի ռպորտունիզմի տեղ անցկացնելու սովորական կեղծարարության ելյությունը, վոր անհրաժեշտ է մանրամասնորեն կանգ առնել նրանց վրա: Մեջ բերենք այն ամրող դատողությունը, վորից վերցված են դրանք.

«Գրոլետարթատը դրամովում և պետական իշխանությունը և արտադրության միջազներն ամենից առաջ պետության սեփականությունն է գարձնում։ Բայց հենց դրանով նա ինքն իրեն վոչչացնում և իրեւ պրոլետարիստ, հենց դրանով նա վոչչացնում և բոլոր գասակարգային տարրերություններն ու դասակարգային հակադրությունները, իսկ դրա հետ միասին նաև պետությունը։ Մինչև այժմ գոյություն ունեցած ու հիմա գոյություն ունեցող հասարակության համար, վոր շարժվում և դասակարգային հակադրությունների մեջ, անհրաժեշտ եր պետությունը, այսինքն շահագործող դասակարգի կազմակերպությունը՝ նրա արևոր, այսինքն շահագործող դասակարգի կազմակերպությունը՝ նրա արտաքին արտաքին պայմանները պահպանելու համար, ուրեմն՝ հատկապես շահագործվող դասակարգը բանությամբ ճնշման այն պայմանների մեջ պահելու համար, վոր պահանջում և արտադրության ավագանության մեջ պահանջությունը (ստրկություն, ճորտություն, վարձու աշխատանք)։ Միշտ կանոնակի կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչն Պետությունն ամրող հասարակության պաշտոնական ներկայացուցիչն է, նրա կենտրոնացումը մի տեսանելի կազմակերպության մեջ, բայց նա այդպիսին եր այն շափով միայն, վորչափով նա այն դասակարգի պետությունն եր, վորն իր ժամանակաշրջանի համար մենակ ներկայացնում եր ամրող հասարակությունը։ Հին աշխարհում նա պետության ամրականության, մեր որերում—բուրժուազիայի։ Յերբ պետության աղյօնականության, մեր որերում—բուրժուազիայի։

յունը, վերջապես, ամբողջ հասարակության ներկայացուցիչ և դասունում իսկապես, այն ժամանակ նա ինքն իրեն ավելորդ և դարձնում: Այն ժամանակվանից, յերբ այլևս ճշշման մեջ պահելու վոչ մի հասարակական դասակարգ չի լինի, այն ժամանակվանից, յերբ դասակարգին տիրապետության հետ միասին, արտագրության մինչայժմյան անարխիայի առաջացրած անհատական գոյաւթյան կովկ հետ միասին, կանհետանան այդ կովկից բղիսող ընդհարումներն ու քսցեմեները (չափազանցությունները), —այդ ժամանակվանից սկսած այլևս վոչինչ մի լինի ճնշելու, ուրեմն և ճնշման հատուկ ուժի՝ պետության կարիք չի լինի: Առաջին զարծողությունը, վորով պետությունը հանդես կա իսկապես իրեւ ամբողջ հասարակության ներկայացուցիչ—արագորության միջոցներին տիրապետելը հասարակության անունով—մինույն ժամանակ նրա, վորպես պետության, վերջին ինքնուրույն զարծողությունը կլինի: Պետական իշխանության միջամտությունը հասարակական հարաբերություններին այն ժամանակ սպիտարդ կդառնա մի բնագավառում մյուսի հետեւ կ ինքն իրեն կրնի: Անձերին կառավարելու տեղը կրոնի իրերի տնօրինումը և արտագրության պրոցեսների զեկավարումը: Պետությունը չի «վերացվում», նա մենաւմ է: Սրա հիման վրա պետք և դասաւագրական պետություն» կոչված Փրագը, վորը վարույթ ժամանակ ազիտատորական նորամակով գոյաւթյան իրավունք ուներ, բայց վերջին հաշվով՝ գիտական տեսակետից անանկ է: Դրա հիման վրա պետք և զնահատակ նաև այսպես կոչված անարխիաների պահանջը, թէ պետությունը պետք և անմիջապես, մի որվա ընթացքում վերացվի» («Անտի-Դյուրինգ», «Գիտության հեղաշրջումը պարոն Ոյցեն Գյուրինգի», յերբ՝ Յ-դ հասարակություն, Էջ 302—303):

Առանց սխալիքելուց վախենալու կարելի յե ասել, վոր Ենգելսի այս, մտքերով չափազանց հարուստ, դաստիղությունից արդի սոցիալիստական կուսակցությունների մեջ սոցիալիստական մտքի իրական սեփականություն և զարձել միմիայն այն, թե պետությունն, ըստ Մարքսի, մեռնում է, ի տարրերություն պետության «վերացման» անարխիստական ուսմունքից։ Այդպես խուզել մարքսիզմը, նշանակում է այն ոպորտունիզմի վերածել, վորովճետե այդպիսի «մեկնաբանության» գեպքում միմիայն դանդաղ, սահուն, աստիճանական փոփոխման մի աղոտ պատկերացում և մնում, մի աղոտ պատկերացում թուիչքների ու փոթորիկների բացակայության, հեղափոխության բացակայության մասին։ Պետության «մահացումը» սովորական, ընդհանուր տարածված, յեթե կարելի յե այսպես ասել, մասսայական ըմբռնումով՝ նշանակում է, անկասկած, հեղափոխության մթագնումը, յեթե վոչ նրա ժխտումը։

Ա ինչպես այդպիսի «մեկնաբանությունը» մարքսիզմի ամենակոպիտ, միմիայն բուրժուազիայի համար ձեռնտու, աղավաղությն և, վոր թեորիապես հիմնված և այն կարեռ-ուագույն հանգամանքների ու կշռադատությունների մոռա-ցության վրա, վորոնք մատնանշված են Ենգելսի թեկող-էենց նույն, մեր կողմից ամբողջությամբ բերված «ամփո-փիչ» դատողությունների մեջ:

Առաջին: Այդ դատողության հենց սկզբում Ենգելսն ասում է, թե պետական իշխանությունը գրավելով՝ պրոլետարիատը «Հենց դրանով վոչնչացնում է պետությունն իրեւ պետություն»: Թէ ինչ է նշանակում այս, այդ մասին «ընդունված չե» մտածել: Սովորաբար այդ բանը կամ ըստ ըրովդին անտեսում են, կամ համարում են Ենգելսի «հետեւյանական» թուրքության նման մի բան: Խոկապես, այդ խոսքերի մեջ հակիրճ կերպով արտահայտված է պրոլետարական մեծագույն հեղափոխություններից մեկի փորձը, 1871 թվի Փարիզի կոմունայի վորձը, վորի մասին մենք ավելի մանրամասն կխոսենք իր տեղում: Իրոք՝ Ենգելսն այստեղ խոսում է բուրժուազիայի պետության «վոչնչացման» մասին պրոլետարական հեղափոխության կողմեց, մինչդեռ մահացման մասին ասված խոսքերը վերաբերում են պրոլետարական պետականության մնացորդներին՝ սոցիալիստական հեղափոխությունից հետո: Բուրժուական պետությունը, ըստ Ենգելսի, վո՞չ թե «մահանում է», այլ հեղափոխության մեջ «վոչնչացվում է» պրոլետարիատի ձեռքով: Այդ հեղափոխությունից հետո մահանում է պրոլետարական պետությունը կամ կխաղետությունը:

ՅԵՐԱՊՈՐԴ: Պետությունը «Ճնշման հատուկ ուժ է»:
Այս հոյակապ ու վերին աստիճանի խոր բնորոշումն այս-
տեղ Ենթելու ավել և ամենակատարյալ պարզությամբ։ Իսկ
դրանից բղխում ե, վոր պրոլետարիատին բուրժուազիայի-
կողմից «Ճնշելու հատուկ ուժը», միլիոննավոր աշխատավոր-
ներին մի բուռ հարուստների ձեռքով «Ճնշելու հատուկ
ուժը» պետք է փոխարինվի պրոլետարիատի կողմից բուր-
ժուազիային «Ճնշելու հատուկ ուժով» (պրոլետարիատի
դիկտատուրան)։ Հենց այս և «պետության վոչնչացումն
իրեն պետություն»։ Հենց այս և հասարակության անունից

արտադրության միջոցներին տիրանալու «գործողությունը»: Յեվ ինքնըստինքյան ակներեւ ե, վոր մի (բուրժուական) «հատուկ ուժի» այդպիսի փոխարինումը մի այլ պրոցեսարական) «հատուկ ուժով» ամեննեին չի կարող մահացման ձեռվ կատարմէլ:

Զորբորդ: Առաջադրելով իր հոչակավոր գրույթը՝ «պետությունը մահանում ե», Ենդելսն անմիջապես կոնկրետ կերպով բացատրում է, վոր այդ գրույթն ուղղված ե թե՛ ուղղությունիստների և թե՛ անարխիստների դեմ։ Հստվորում Ենդելսը «պետության մահացման» գրույթից այն յեզրակացությունն ե առաջին տեղը գրել, վորն ուղղված ե ոպորտունիստների դեմ։

Կարելի յե զբաղ գալ, վոր պետության «մահացման» մասին կարգացած ու լած 10.000 ժարդկանցից 9990-ը բռնորովին չգիտեն, կամ չեն հիշում, վոր Ենթելոն այս գրութից հանած իր յեղբակացություններն ուղղում եր վոչ մի-

այն անարխիստների գեմ։ Իսկ մնացած տասը հոգուց, ան-
շուշտ, ինը չգիտե, թե ինչ բան է «ազատ ժողովրդական
պետությունը» և ինչու հարձակումն այդ լոգունդի գեմ։ Այս-
հարձակումն ե պարունակում ոպրոտունիստների գեմ։ Այս-
պէս և գրվում պատմությունը։ Ահա այսպէս հեղափոխա-
կան մեծ ուսմունքը աննկատելի կերպով կեղծվում-հարմա-
րեցվում ե տիրապետող քաղքենիությանը։ Անարխիստների
գեմ ուղղված յեղրակացությունը բյուր անդամ կրկնվել ե,
այլանդակվել, ամենագուեցիկ ձևով մարդկանց գլուխն ե
մտցվել, նախապաշարմունքի հաստատություն ձեռք բերել։
Իսկ ոպրոտունիստների գեմ ուղղված յեղրակացությունը
աքողել են ու «մոռացե՛լ»։

բերգած դասողությունը պետության մահացման մասին հիշում են բոլորը, դատողություն կա բանի հեղափոխության նշանակության մասին։ Նրա դերի պատմական դնաշատությունը Ենդելսի մոտ բռնի հեղափոխությանն ուղղված մի խևական ներբող է դառնում։ Այդ բանը «վոչ վոք չի հիշում», այդ մտքի նշանակության մասին խոսելն ու մինչեւ անդամ մտածելն ընդունված չեւ արդի սոցիալստական կուսակցությունների մեջ, այդ մտքերը վոչ մի դեր չեն խաղում մասսաների մեջ կատարվող ամենորյա պրոպագանդայում ու ագիտացիայում։ Մինչեւ նրանք անփուլիորեն կապված են պետության «մահացման» հետ ու մի ներդաշնակ ամբողջություն են կազմում։

Ահա Ենդելսի այդ դատողությունը.

... «Վոր բռնությունը պատմության մեջ մի ուրիշ գեր ել և կատարում («Քայլի չարիք գործելուց»), հատկապես հեղափոխական դեր, վոր այն, ինչպես ասում ե Մարքսը, ամեն մի հին հասարակության տաճարն ե, յերբ այդ հինը նորովն ե զիի, վոր բռնությունն այն դենքն ե, վարի միջնորդ հասարակական շարժումն իրեն համար ճանապարհ ե բաց անում և փշում ե քարացած, մեռած քաղաքական ձեռքը, — այս բոլորի մասին վոչ մի խորք չկա պարոն Դյուրենդի մոտ։ Միայն հառաջանքով ու հեծեծանքով նա հնարաւոր է համարում, վոր շահագործող տնտեսությունը տապալելու համար, զուցե, բռնության կարիք զգացվել գերախառալա՞ր, տեսնո՞ւմ եք, վորովհետեւ բռնության ամեն մի գործադրում բարոյալքում ե, իբր թե, նրան, ով այդ բռնությունը գործադրում է։ Յեկ այս ասվում ե, չնայած բարոյական ու իդեական այն բարձր խանդավառության, վոր ամեն մի հաղթական հեղափոխության հետևանք եր լինում։ Յեկ այս ասվում է Գերմանիայում, վորանի բռնի ընդհարումը, վոր կարող է պատահել ժողովրդի վզին փաթթեն, առնվազն այն առավելությունը կուսակցությանը, վոր յերբելից տեսել է պատմությունը» (Յ-րդ դերմ. հրատարակություն, Էջ 193, II բաժնի 4-րդ գլուխ վերջը)։

Ի՞նչպես կարելի յե մեկ ուսմունքի մեջ միացնել պետության «մահացման» թեօրիան և բռնի հեղափոխությանն ուղղված այս ներքողը, վոր Ենդելսը համառորեն մատուցում եր գերմանական սոցիալ-դեմոկրատներին՝ սկսած 1878 թվից մինչեւ 1894 թիվը, այսինքն՝ մինչեւ իր մահը։

Մեկն ու մյուսը սովորաբար միացնում են եկեղեկախիցիմի միջոցով, անգաղափարական կամ սովետական յեղանակով քմահաճորեն (կամ իշխանություն ունեցողներին հաճոյանալու նպատակով) դուրս քաշելով մեկ այս, մեկ մյուս դատողությունը, ըստվորում հարյուրից իննառունինը գեպքում, յեթե վոչ ավելի հաճախ, հատկապես «մահացումն» ե առաջին պլանը մղվում։ Դիալեկտիկան փոխարինվում է եկեղեկախիցիմով, մեր որերի պաշտոնական սոցիալ-դեմոկրատական գրականության մեջ այս ամենասովորական, ամենատարածված յեթեռությն ե մարքսիզմի վերաբերմամբ։ Այդպիսի փոխարինումն, իհարկե, նորություն չեւ այն նկատվել է նույնական կասիկ փելիսովայության պատմության մեջ։ Մարքսիզմը խարզախելով սպրոտունիզմի վերածելիս, եկեղեկախիցիմին կերպ դիալեկտիկայի ձև տալն ամենից ավելի հեշտությամբ է խարում մասսաներին, կարծեցյալ բավարարություն է տալիս, իբր թե հաշվի յե առնում պրոցեսի բոլոր կողմերը, զարգացման բոլոր տեղենցները, բոլոր հակասական աղղեցությունները և այլն, բայց իրականում հասարակական զարգացման պրոցեսի վոչ մի ամբողջական ու հեղափոխական ըմբռնում չի տալիս։

Մենք վերեւում արդեն ասացինք և հետագա շարադրանքի մեջ ավելի մանրամասն ցույց կտանք, վոր Մարքսի ու Ենդելսի ուսմունքը բռնի հեղափոխության անփուսափելիության մասին՝ բուրժուական պետությանն է վերաբերում։ Այն չի կարող պրոլետարական պետությամբ (պրոլետարիատի դիկտատուրայով) փոխարինվել «մահացման» միջոցով, այլ կարող ե, ընդհանուր կանոնի համաձայն, միմիայն բռնի հեղափոխությամբ։ Այն ներողը, վոր կարդում է Ենդելսը բռնի հեղափոխությանը, և վորը լիովին համապատասխանում է Մարքսի բազմաթիվ հայտարարություններին, — (Հիշենք, «Փիլիսոփայության լըշվառության» ու «Կոմունիստական մանիֆեստի» վերջը, վորտեղ հպարտությամբ, բացիիբաց հայտարարված և բռնի հեղափոխության անհրաժեշտության մասին, հիշենք Դրայի ծրագրի քննադատությունը 1875 թվին, գրեթե 30 տարի անց, վորտեղ Մարքսն անխնա կերպով խարսա-

նում և այդ ծրագրի ռազմականիզմը), —այդ ներբողն ամենեին «վոգելության» արդյունք չե, ամենելին դեկտամացիա չե, բանավիճական մի յելույթ չե: Բռնի հեղափախության վերաբերմամբ մասսաներին այդպիսի և համկապես հենց այդպիսի հայացքով սխատեմատիկորեն կըրթելու անհրաժեշտությունն է, վոր կազմում և Մարքսի ու Ենդելսի ամբողջ ուսմունքի հիմքը: Ներկայումս տիրապետող սոցիալ-շովինիստական ու կառուցկիական հոսանքների դավաճանությունը Մարքսի ու Ենդելսի ուսմունքին՝ առանձնապես ցցուն կերպով արտահայտվում է նրանով, վոր թե՛ մեկ և թե՛ մյուս հոսանքը մոռացության և տալիս այդպիսի պրոպագանդանդան, այդպիսի ագիտացիան:

Բուրժուական պետության փոխարինումը պրոլետարական պետությամբ անկարելի յե առանց բռնի հեղափոխության: Պրոլետարական պետության վոչնչացումն, այսինքն՝ ամեն մի պետության վոչնչացումն անկարելի յե այլ կերպ, քան «մահացման» ուղիով:

Մարքսն ու Ենդելսն այդ հայացքների մանրամասն ու կոնկրետ զարգացումը տվել են, ուսումնասիրելով հեղափոխական ամեն մի առանձին սիսուացիա, վերլուծելով ամեն մի առանձին հեղափոխության փորձի գասերը: Մենք հիմա անցնում ենք նրանց ուսմունքի հենց այս, անպայման ամենակարևոր, մասին:

II ԳԼՈՒԽ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ:
1848—1851 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ

1. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԸ

Հասուն մարքսիզմի առաջին աշխատությունները, «Փիլիպիայության թշվառությունն» ու «Կոմունիստական մանիֆեստ», լույս են տեսել 1848 թվի հեղափոխության հենց նախորյակին: Այդ հանդամանքի շնորհիվ, մարքսիզմի ընդհանուր հիմունքների շարադրանքի հետ միասին, մենք այսուղ վորոշ չափով գտնում ենք այն ժամանակվա հեղափոխական կոնկրետ սիսուացիայի արտացոլումը, և այդ պատճառով ել՝ ավելի նորատակահարմար կլինի, թերես, քննարկել այն, թե ինչ են առում այդ աշխատությունների հեղինակները պետության մասին 1848—1851 թվականների փորձից իրենց հանած յեղակացություններից անմիջապես առաջ:

... «Բանվոր դասակարգը, —դրում ե Մարքսը «Փիլիպիայության թշվառության» մեջ, —զարդացման ընթացքում հին բուրժուական հասարակության տեղը կլինի այնպիսի մի սոցիացիա, վորը բացառութե դասակարգերն ու նրանց հակադրությունը, այլևս չե լինի վոչ մի հոկապես քաղաքական իշխանություն, վորովհետև հենց քաղաքական իշխանությունն ե դասակարգերի հակադրության պաշտոնական արտահայտությունը բուրժուական հասարակության ներսում» (1885 թ. դերմ. հրատարակություն, եջ 182):

Ուսանելի կլինի դասակարգերի վոչնչացումից հետո պետությունն անհետանալու մտքի այս ընդհանուր շարադրանքը զուգադրել այն շարադրանքի հետ, վոր արված և միքանի ամիս անց, այս ե՝ 1847 թվի նոյեմբերին, Մարքսի ու Ենդելսի գրած «Կոմունիստական մանիֆեստի» մեջ,

... «Գծագրելով պրոլետարիատի գարդացման ամենաընդհանուր փուլերը, մենք հետամուս յեղանք արդի հասարակության ծոցում տեղի ունեցող առավել կամ նվազ չափով քողարկված քաղաքացիական կողմն մինչև այն կերը, յերբ այն վեր և ածվում բացահայտ հեղափոխության, և պրոլետարիատը, բռնությամբ ասպալելով բուրժուազիայն, հաստատում և յուր իշխանությունը»...

... «Մենք արդեն վերը տեսանք, վոր բանվորական հեղափոխության մեջ առաջին քայլը պրոլետարիատի փոխարկումն ե» (բառացի՝ բարձրացումը) «տիրող դասակարգի, դեմոկրատիայի նվաճումը»:

«Պրոլետարիատն իր քաղաքական տիրապետությունն ողտադործելու յև նրա համար, վորպեսզի բուրժուազիայից հետզետե խլի ամբողջ կապիտալը, արտադրության բոլոր միջոցները կենտրոնացնի պետության, այսինքն՝ իրեն տիրող դասակարգ կազմակերպված պրոլետարիատ ձեռքում, և հարավորության չափով ավելի արագ մեծացնի արտադրողական ուժերի գումարը» (1906 թ. դեմ. 7-րդ հրատարակություն, էջ 31 և 37):

Այստեղ մենք տեսնում ենք մարքսիզմի՝ պետության հարցին վերաբերող՝ ամենանշանավոր ու կարևորագույն դաշտաբանիրից մեկի, այն ե՝ «պրոլետարիատի դիկտատուրայի» գաղափարի ձեակերպումը (ինչպես Մարքսն ու Ենդելսն սկսեցին ասել Փարբերի կոմունայից հետո) և ապա՝ պետության վերին աստիճանի հետաքրքրական բնորոշումը, վոր նույնպես մարքսիզմի «մոռացված խոսքերի» թվին և պատկանում—«Պետություն, այսինքն՝ իրեն տիրող դասակարգ կազմակերպված պրոլետարիատ»:

Պետության այս բնորոշումը վո՞չ միայն յերբեք չեր լուսաբանվում պաշտօնական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների պրոպագանդիստական ու ագիտացիոն տիրապետող գրականության մեջ: Այդ դեռ քիչ ե: Այն հատկապես մոռացված եր, վորովհետեւ բոլորովին անհաշտելի յեւ ուժորմեզմի հետ, այն՝ «գեմոկրատիայի խաղաղ գարգացման» սովորական ոպորտունիստական նախալաւարմունքների ու քաղքենիական ցնորդների համար մի ապահ ե:

Պրոլետարիատին պետք ե պետություն, այս բանը կրկնում են բոլոր ոպորտունիստները, սոցիալ-շոլինիստներն ու կառուցկիականները, հավատացնելով, թե այդ ե Մարքսի աւսմունքը, և «մոռանալով» ավելացնել, թե, նախ, ըստ Մարքսի, պրոլետարիատին հարկադիր ե մի-

միայն ժահացող պետություն, այսինքն՝ այն ձեռվ կառուցված մի պետություն, վոր անմիջապես սկսի մահանալ և անկարող լինի չմահանալ: Իսկ, յերկրորդ, աշխատավորներին հարկավոր ե «պետություն», «այսինքն՝ իրեւ տիրող դասակարգ կազմակերպված պրոլետարիատ»:

Պետությունն ուժի հատուկ կազմակերպություն է, բոնության կազմակերպություն՝ վորեւ դասակարգի ձբնչելու համար: Վո՞ր դասակարգին պետք ե ձնչի պրոլետարիատը: Իհարկե, միմիայն շահագործող դասակարգին, այսինքն՝ բուրժուազիային: Աշխատավորներին պետությունը պետք ե միմիայն շահագործողների դիմագրությունը ձնչելու համար. իսկ այդ ձնչումը զեկավարել, այն կենսագործել ի վիճակի յև միմիայն պրոլետարիատն իրուկ մինչեւ վերջը հեղափոխական դասակարգ, միակ դասակարգը, վոր ընդունակ ե միացնելու բոլոր աշխատավորներին ու շահագործվողներին՝ բուրժուազիայի դեմ պայքարելու, նրան լիովին վերացնելու համար:

Շահագործող դասակարգերին քաղաքական տիրապետությունը հարկավոր ե շահագործումը պաշտպանելու, այն ե՝ ժողովրդի ամենավիթխարի մեծամասնության դեմ չնչին փոքրամասնության շահագործությունը պաշտպանելու համար: Շահագործվող դասակարգերին քաղաքական տիրապետությունը պետք ե ամեն մի շահագործում միովին փոչնչացնելու համար, այսինքն՝ հոգուտ ժողովրդի ամենավիթխարի մեծամասնության՝ ընդդեմ արդի ստրկատերերի, այն ե՝ կարգածատերերի ու կապիտալիստների, չընչին փոքրամասնության:

Մանր-բուրժուազական գեմոկրատները, այդ իրը թե սոցիալիստները, վորոնք դասակարգային կոխվը փոխարինել են ցնորդներով դասակարգերի համաձայնության մասին, սոցիալիստական փոխակերպումն ել ցնորդական ձեռվ ելին պատկերացնում, վո՞չ թե շահագործող դասակարգի տապարման, այլ փոքրամասնության խաղաղ յենթարկման ձեռվ՝ իր անելիքները հասկացած մեծամասնությանը: Այս մանր-բուրժուազական ուստափիան, վորն անխզելիորեն կապված է դասակարգերից վեր գտնվող պետություն ընդունելու հետ, զորնականում հասցնում եր աշխատավոր դա-

սակարգերի շահերի դավաճանությանը, ինչպես այդ հենց ցուց տվեց, որինակ, 1848 ու 1871 թվականների Փրանսական հեղափոխությունների պատմությունը, ինչպես այդ ցուց տվեց բուրժուական մինիստրությունների մեջ «սոցիալիստների» մասնակցության փորձն Անդլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և ուրիշ յերկրներում XIX դարի վերջին ու XX դարի սկզբին:

Մարքսն իր ամբողջ կյանքում պայքարում էր մանրբուրժուական սոցիալիզմի դեմ, վորն այժմ վերածնիկ և Ռուսաստանում եսերների ու մենչեւների կուսակցությունների ջանքերով: Մարքսը դասակարգային կովկի ուսմունքը հետևողականորեն գարգացրել-հասցրել և կիսլ մինչեւ քաղաքական իշխանության, պետության ուսմունքը:

Բուրժուազիայի տիրապետությունը կարող է տապալել միմիայն պրոլետարիատն իրեն հատուկ դասակարգ, վորի գոյության տնտեսական պայմանները նախապատրաստում են նրան այդպիսի տապալման համար, հնարավորություն և ուժ են տալիս նրան այդ բանը կատարելու: Մինչեւ բուրժուազիան բաժան-բաժան և անում ու փոշիացնում ե գյուղացիությանն ու բոլոր մանր-բուրժուական շերտերը, նույն բուրժուազիան համախմբում, միացնում, կազմակերպում է պրոլետարիատին: Միմիայն պրոլետարիատն և, վոր չնորհիվ խոչըր արտադրության մեջ կատարած իր տնտեսական դերի, ընդունակ և առաջնորդը լինելու այն բոլոր աշխատավոր ու շահագործվող մասսաներին, վորոնց բուրժուազիան հաճախ վոչ թե պակաս չափով և շահագործում, ճնշում ու նեղում, քան պրոլետարներին, այլ ավելի ուժեղ չափով, բայց վորոնք իրենց աղատազրության համար ինձնուրույն պայքար մղելու անընդունակ են:

Դասակարգային կովկի ուսմունքը, վորը Մարքսը գործադրել և պետության ու սոցիալիստական հեղափոխության հարցի վերաբերմամբ, անհրաժեշտաբար տանում է դեպի պրոլետարիատի քաղաքական տիրապետության, նրա դիկտատորայի ճանաչումը, այսինքն՝ մի իշխանության, վորը նա վոչ վոքի հետ չի բաժանելու և վորն անմիջականորեն հենալում է մասսաների դինված ուժը վրա: Բուրժուազիայի տապալումը կարելի յէ իրագործել միմիայն

պրոլետարիատին տիրող դասակարգ դարձնելով, վորն ընդունակ լինի ճնշելու բուրժուազիայի անխուսափելի, հուսահատական դիմադրությունը և կազմակերպելու բարորաշխատավոր ու շահագործվող մասսաներին՝ տնտեսության նոր կացութաձևի համար:

Պրոլետարիատին անհրաժեշտ և պետական իշխանություն, ուժի կենարոնացրած կազմակերպություն, բռնության կազմակերպություն թե՛ շահագործողների դիմադրությունը ճնշելու և թե՛ բնակչության վիթխարի մասսային՝ գյուղացիությանը, մանր բուրժուազիային, կիսապրոլետարներին դիկավարելու համար՝ սոցիալիստական տնտեսությունը «կարգի գցելու» գործում:

Դաստիարակելով բանվորական կուսակցությունը, մարքսիզմը դաստիարակում է պրոլետարիատի ավանդարդը, վորն ընդունակ է գրավելու իշխանությունը և ամբողջ ժողովրդին դեպի սոցիալիզմ առաջնորդելու, կազմակերպելու և ուղղություն տալու նոր հասարակակարգին, լինելու բոլոր աշխատավորների ու շահագործվողների ուսուցիչ, զեկավար, առաջնորդ՝ նրանց հասարակական կյանքն առանց բուրժուազիայի ու բուրժուազիայի դեմ կազմակերպելու գործում: Ընդհակառակը, այժմ տիրող ուսպորտնիզմը բանվորական կուսակցությունից կրթում և մասսայից կտրվող, ավելի լավ վարձատրվող բանվորների ներկայացուցիչներ, վորոնք տանելի կերպով «սարքում են» կապիտալիզմի ժամանակ, վորոնք իրենց անդրանկության իրավունքը ծախում են վոսպե ապուրով, այսինքն՝ հրաժարվում են ընդգեմ բուրժուազիայի ժողովրդի հեղափոխական առաջնորդների դերը կատարելուց:

«Գետությունը, այսինքն՝ իրեն տիրող դաստիարակ կազմակերպված պրոլետարիատը», — Մարքսի այս թեօրիան անխզելիորեն կապված է նրա ամբողջ ուսմունքի հետ պատմության մեջ պրոլետարիատի ունեցած հեղափոխական դերի մասին: Այդ դերի ավարտումը պրոլետարական դիկտատորան և, պրոլետարիատի քաղաքական տիրապետությունը:

Բայց յեթե պրոլետարիատին հարկավոր է պետությունն, իրեն բռնության հատուկ կազմակերպություն

ընդունել բուրժուազիայի, ապա այստեղից ինքնըստինքյան բոլիում՝ այն յեղրակացությունը, թէ հնարավո՞ր ե արդյոք այդպիսի կազմակերպության ստեղծումն առանց նախորոք վոչնչացնելու, առանց խորտակելու այն պետական մեքենան, վոր ստեղծել ե բուրժուազիան իրեն համար: Այս յեղրակացությանն ընդհուպ մոտեցնում է «Կոմունիստական մանիֆեստը», և այս յեղրակացության մասին է խոսում Մարքսը, յերբ ամփոփում է 1848—1851 թ. թ. Հեղափոխությունից:

2. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Պետության մասին մեզ հետաքրքրող հարցի վերաբերմամբ Մարքսը 1848—1851 թ. թ. Հեղափոխության ամփոփումը տալիս ե հետեւյալ դատողության մեջ, վոր քաղում ենք նրա «Լուի Բոնապարտի Բյուլենի 18-ը» աշխատությունից:

...«Բայց հեղափոխությունը հիմնավոր բան է: Նա գեռ իր ուղեղորությունն ե կատարում քավարանի միջով: Նա իր գործը կատարում է մեթոդիկորեն: Մինչեւ 1851 թվի գեկտեմբերի 2-ը» (այն որը, յերբ լույն Բոնապարտը կատարեց իր սկսական հեղաշրջումը) «Նա վերջացրել եր իր նախապատրաստական աշխատանքի կեսը, այժմ նա վերջացնում ե մյուս կեսը: Նա սկզբից կատարելության և հասցնում պատշաճնական իշխանությունը, վորպեսզի կարողանա տասկակել այն: Այժմ, յերբ նա հասել է արգեն այդ նպատակին, նա կատարելագործման և հասցնում գարծադիր իշխանությունը, վեր և ածում այն իր ամենամըսդիրին արտահայտության, մեկուսացնում ե այն, հանդիպաղը ուրիշ իրեն իրեն միակ հասամքանքը, վորպեսզի նրա դեմ կենտրոնացնի կործանման բալար ուժերը» (ընդգծումը մերն է): «Յեզ յերբ հեղափոխությունն ավարտի իր նախապատրաստական աշխատանքի այս յերկրորդ կեսը, այն ժամանակ Յեղրատը վատի կկանգնի իր տեղից և հետաձևական դուրս է կարդի բուրժուազիանը, հին խլուրդը»:

Այս գործադիր իշխանությունն իր հսկայական բյուրսկրատական ու պինդորական կազմակերպությամբ, իր բարձրաբարդ ու արգեսատական պետական մեքենայով, սահմանադրությունը այս բանակով՝ սկսական մեքենայով, սահմանադրությունը այս բանակով՝ կեսմելիքունոց գորաբանակի կողքին, այս սոսկալի մակարութական սորտամիջովը, վոր իրեն մի գանց պատում է Փանասական հաստատական առարակության ամբողջով և մագանության առաջարկում մեջ յանդի կատարությանը առաջարկում է փակում նրա բոլոր ծակառիները, — այս գործադիր իշխանությունն առաջ յեկավ ինքնական միապետության դեպալիզ քայլքայտն պահճին, վորի անկումը նա դատապահութեցը: Ֆեռգալիզմի քայլքայտն պահճին, վորի անկումը նա դատապահութեց:

բոնացումը, «բայց միաժամանակ ընդլայնեց նրա ծավալը, առըիբութեցն ու կառավարական իշխանության սպասարկուների քանակությունը: Նապալեոնը կատարելագործման հասցեց այս պետական մեքենան»: Հեղափոխիմ միապետությունն ու հուլիսյան միապետությունը «վոչինչ նոր բան չավելացրեն, բայց աշխատանքի ամելի մեծ բաժանում ից»...

... «Երջիկվերջո՞ սպասարկենստական հանրապետությունը, հեղափոխության գեմ պայքարելիս՝ սովորված յեղափ, բռնի միջոցների հետ միասին, ուժեղացնել նաև կատարակական իշխանության միջոցներն ու կենարունացումը: Բոլոր հեղափառության մեջ նա ապր ծովական այդ մեջ են առն, փախանակ զարդում փշուր անելու այն հայրը» (ընդգծումը մերն է): «Այն կուսակցությունները, վորոնք միմյանց հաջորդելով մաքառում ենին իշխանությունները, մեռք բներելու համար, հաղթողի գիտակր ալարը համարում ենին այդ աշակեն պետական չեղափի գրավումը» («Առեւ Բոնապարտի բրումերի 18-ը», 4-րդ հրատ., Համբուրգ 1907 թ., էջ 98—99):

Այս յերեսելի դատողության մեջ մարքսիզմը՝ «Կոմունիստական մանիֆեստի» համեմատությամբ՝ մի պիթխարիքայլ ե անում դեպի առաջ: Այնտեղ պետության հարցը գրվում եր զեռևս ծայրահեղ վերացականորեն, ամենաընդհանությունը հասկացողություններով ու արտահայտություններով: Այստեղ հարցը գրվում է կոնկրետ կերպով և չափաղանց ճշգրիտ, վորոշ, գործնականորեն՝ շոշափելի յեղակացությունն ե արվում: բոլոր նախկին հեղափոխությունները կատարելագործել են պետական մեքենան, մինչդեռ պետք ե ջարդել, փշուր այն:

Այս յեղրակացությունն ե գլխավորը, հիմնականը մարքսիզմի ուսմունքի մեջ պետության մասին: Յեզ հենց այս հիմնականն է, վոր վո՛չ միայն բոլորովին մոռացված ե տիրող պաշտոնական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների կողմից, այլև ուղղակի աղավաղված ե (ինչպես կտեսնենք ստորև): Ո ինտերնացիոնալի ականավորագույն թեորետիկ կ. Կառուցկու կողմից:

«Կոմունիստական մանիֆեստում» պատմության ընդհանուր ամփոփամներ են արված, վորոնք հարկադրում են պետության մեջ դասակարգային տիրապետության որդան տեսնել և բերում են այն անհրաժեշտ յեղրակացությանը, վոր պլրութարիքատը չի կարող տապալել բուրժուազիային, առանց նախալիս քաղաքական իշխանություն ձեռք նվաճելու, առանց քաղաքական տիրապետություն ձեռք

բնելու, առանց պետությունն «իբրև տիրող գասակարտ կազմակերպված պրոլետարիատի» փոխարիելու, և վորագույն պրոլետարական պետությունն իր հաղթությունից հետո ամենի շապէս հետո կոչով մահանալ, վորովհետեւ դասակարգային հակասություններից ազատ հասարակության մեջ պետություն պետք չ' ու անհնար ե: Այստեղ հարց չի դըրքում այն մասին, թե—պատմական զարդացման տեսակետից—ինչպէս պետք ե բուրժուական պետությունը պրոլետարականի փոխի:

Հենց այդպիսի հարց եւ զնում ու վճռում Մարքսը 1852 թվին։ Հավատարիմ դիալեկտիկական մատերիալիզմի կր փիլսոփայությանը՝ Մարքսն իբրև Հիմք վերցնում է 1848—1851 թ. թ. հեղափոխության մեծ տարիների պատմական փորձը։ Մարքսի ուսմունքն այստեղ ևս, ինչպես և միշտ, փիլսոփայական խոր աշխարհայացքով ու պատմության ճոխ դիտությամբ լուսաբանված փորձի հանրագումարումն է հանդիսանում։

Պետության հարցը դրվում է կոնկրետ կերպով. պատմականորեն ի՞նչպես ե ծագել բուրժուական պետությունը, բուրժուազիայի տիրապետության համար անհրաժեշտ պետական մեքենան. վորո՞նք են նրա կրած փոխիտությունները, ի՞նչ եվոլուցիայի յե յենթարկվել նա բուրժուական հեղափոխությունների ընթացքում և ճնշված դասակարգերի խնդնուրույն յելույթների հանդեպ. վորո՞նք են պրոլետարիատի խնդիրներն այս պետական մեքենայի վերաբերմամբ:

Բուրժուական հասարակությանը հատուկ կենտրոնաց-
րած պետական իշխանությունը ծագել է աբսոլուտիզմի
անկման դարաշանում։ Այդ պետական մեքենայի համար
ամենից ավելի բնորոշ են յերկու հաստատություն՝ չինով-
նիկությունն ու մշտական դորարանակը։ Թե ինչպես այդ
հաստատությունները հաղարավոր թելերով կապված են
հատկապես Հենց բուրժուազիայի հետ, այդ մասին բազ-
մից խոսվում է Մարքսի ու Ենդելսի յերկերում։ Ամեն մի
բանվորի փորձ ակնբախությամբ ու ազդուությամբ պար-
գարանում է այդ կապը։ Բանվոր դաստիարակն իր կազմի

վրա յե սովորում ճանաչել այդ կապը, — ահա թե ինչո՞ւ
նա այնքան հեշտությամբ է ըմբռնում ու այնպես հաստա-
տուն կերպով յուրացնում այդ կապի անխուսափելիության
գիտությունը, մի գիտություն, վոր մանր-բուրժուական
դեմոկրատները կամ տղիտությամբ ու թեթևամտությամբ
ժխտում են, կամ ել ավելի մեծ թեթևամտությամբ ըն-
դունում են «ընդհանրապես», մոռանալով համապատասխան
գործնական յեղբակացություններ անել:

Զինովյանիկությունն ու մշտական զորաբանակը «պարագիտ» են բուրժուական հասարակության մարմնի վրա, ոլորադիտ, վոր ծնունդ և այդ հասարակությունը ծվատող ներքին հակասությունների, բայց հենց այն պարագիտը, վոր «փակում ե» կենսական ծակոտիները։ Պաշտոնական սոցիալ-դեմոկրատիայի մեջ ներկայումս տիրապետող կառուցկիական ոսպորտունիզմը պետությունն իրեն մակարուծական որգանիզմ դիտող հայեցակետը համարում է անարխիզմի առանձնահատուկ ու բացառիկ սեփականությունը։ Հասկանալի յէ, վոր մարզուիզմի այս խեղաթյուրումը չափազանց ոգտակար և այն քաղքենիների համար, վորոնք սոցիալիզմը հասցըին խմբերիալիստական պատերազմն արդարացնելու և գունազարդելու անլուր խայտառակությանը՝ նրա վերաբերմամբ գործադրելով «հայրենիքի պաշտպանության» հասկացողությունը. բայց, այնուամենային, այդ անպայման խեղաթյուրումն ե:

Բոլոր բուրժուական հեղափոխությունների միջով, վորոնք բարձրից տեսել ե Յեպրոպան Փեռլալիպմի անկումից հետո, անցնում ե այս չինովնիկական ու ռազմական ազարատի զարգացումը, կատարելազործումն ու ամբացումը: Մասնավորապես, հենց մանր բուրժուազիան դրավիճում և խոչը բուրժուազիայի կողմն ու յենթարկվում նրան՝ խոչը չափով այդ ապարատի միջոցով, վորը գյուղացիության, մանր արէնստավորների, առետրականների ու այլոց վերին խավերին համեմատաբար հարմար, հանդիսաւ ու պատվավոր տեղեր, վորոնք իրենց տերերին ժողովրդից վեր են դասում: Վերցրեք այն, ինչ տեղի ունեցավ Ռուսաստանում 1917 թ. փետրվարի 27-ից հետո յիշող կես տարվա ընթացքում՝ չինովնիկական այն տեղերը,

վորոնք առաջ առավելապես սկզբյուրյակայիններին ե-
յին արլում, կաղետների, մենչեփիների ու եսերների ա-
վարի առարկա դարձան: Նրանք վոչ մի լուրջ ու Փորմի
մասին ըստ Եյության չեյին մտածում, աշխատելով ձլգ-
ձել ու Փորմները «մինչև Սահմանադիր ժողովը». իսկ
Սահմանադիր ժողովը ձգձել քիչ-քիչ մինչև պատերազմի
վերջը: Իսկ ավարը բաժանելու գործում, մինիստրների,
մինիստրի ողնականների, գեներալնահանգապետների և այն
և այլն տեղերը դրավելիս չեյին դանդաղում և վոչ մի Սահ-
մանադիր ժողովի չեյին սպասում: Կառավարության կաղ-
մին վերաբերող կոմքինացիաների խաղն, լսու Եյության,
միմիայն «ավարի» այդ բաժանման ու վերաբաժանման ար-
տահայտությունն եր, վորը տեղի յեր ունենում թե՛ վերե-
վում և թե՛ ներքեռում, ամբողջ յերկրում, ամբողջ կենտրո-
նական ու տեղական վարչության մեջ: 1917 թ. փետրվարի
27—ողոստոսի 27-ը տեղող կիսամյակի ամփոփումը, որինե-
տիվ ամփոփումն անկասկած եւ ու Փորմները հետաձգված
են, չինովնիկական տեղերի բաժանումը կատարված եւ եւ
բաժանման ժամանակ տեղի ունեցած «սիսալներն» ուղղված
են միքանի վերաբաժանումների միջոցով:

Բայց վորքան չինովնիկական առարատի ավելի շատ
«վերաբաժանումներ» են տեղի ունենում զանազան բուր-
գուական ու մանր-բուրգուական կուսակցությունների մի-
տուական ու մանր-բուրգուական կուսակցությունների մի-
ջև (կաղետների, եսերների ու մենչեփիների միջև, յեթե
վերցնենք ուստական որինակը), այնքան ավելի յե սլարդ-
վում ճնշված դասակարգերի ու նրանց գլուխ կանոնած
պրոլետարիատի համար՝ նրանց անհաջող թշնամական գիր-
պրոլետարիատի համար՝ դասակարգությունը: Այս-
քը դեպի ամբողջ բուրգուական հասարակությունը: Այս-
տեղից՝ անհրաժեշտություն է ծագում բոլոր բուրգուական
կուսակցությունների համար, դրանց թվում նույնիսկ ա-
նենադեմոկրատական ու անենադեմոկրատական»
կուսակցությունների համար—ուժեղացնել ուղղենիցները
կուսակցությունների համար—ուժեղացնել ուղղենիցները
հեղափոխական պրոլետարիատի դեմ, ամբաջնել ուղղե-
նիաների ապարատը, այսինքն՝ հենց նույն պետական մի-
սիաների ապարատը, այսինքն՝ հենց նույն պետական մի-
սիաների ապարատը, այսինքն՝ հենց նույն պետական մի-
սիաների ապարատը, իրերի այդպիսի ընթացքն ստիպում է հեղափո-
քենան: Իրերի այդպիսի ընթացքն ստիպում է հեղափո-
քենան: «կրթանման բոլոր ուժեղները կենտրոնացնելու»
խությանը՝ «կրթանման բոլոր ուժեղները կենտրոնացնելու»
խությանը՝ իշխանության դեմ, հարկադրում է խնդիր դնել

վո՞չ թե պետական մեքենայի բարելավման, այլ նրա կրո-
ծանման, վոչնչացման մասին:

Տրամաբանական գատողությունները չեն, այլ անցքե-
սի երական զարգացումը, 1848—1851 թվականների կենդա-
նի փորձն ե, վոր ստիպել ե խնդիրն այդ ձեռվ դնել: Թե
վոր աստիճան խիստ կերպով ե կանգնած Մարքսը պատմա-
կան փորձի իրական բազիսի վրա, այդ յերեսում ե նրանից,
վոր նա 1852 թվին գեռ կոնկրետ կերպով այն հարցը չի
գնում, թե ինչով պետք ե փոխարինել վոչնչացման յե-
թակա այդ պետական մեքենան: Փորձն այն ժամանակ դեռ
նյութ չեր տալիս այդպիսի հարց զնելու համար, վոր
պատմությունն որակարգի մեջ գրեց ավելի ուշ, 1871
թվին: 1852 թվին բնապատմական դիսողության ճշգր-
տությամբ կարելի յեր միմիայն հավաստել, վոր պրոլե-
տարական հեղափոխությունը վ ո տ ե ց ե լ ե «կոր-
ծանման բոլոր ուժեղները» պետական իշխանության դեմ
«կենտրոնացնելու» խնդրին, պետական մեքենան «ցարդու-
փշուր անելու» խնդրին:

Այստեղ հարց կարող ե առաջ դալ, թե ճիշտ ե ար-
դյոք փորձի, գիտողությունների ու յերրակացությունների
այն ընդհանրացումը, վոր կատարել ե Մարքսը, այն, վոր
այդ բոլորը նա տարածում ե ամենի լայն սահմանների վրա,
այն ֆրանսիայի յերեք տարվա պատմությունը, 1848—1851
քան Ֆրանսիայի յերեք տարվա պատմությունը, 1848—1851
թվականները: Այս հարցի քննարկման համար նախ կհի-
շեցնենք ենդելսի մի դիսողությունը, և ապա կանցնենք
դիսողության տվյալներին:

... «Քրանսիխան, —դրել ե ենդելսը «Բյումերի 18-ի» 3-րդ հրա-
տարակության առաջարանում, —Ֆրանսիան այն յերկիրն ե, վրատեղ դա-
սակարգերի պատմական կովկը, ավելի քան այլ յերկրներում, յուրա-
քանչյուր անգամ մզգել ե մինչև վճռական վախճանը: Ֆրանսիայում
ամենավորագի գծերով կովկել են այն փոփոխլող քաղաքական ձեռ-
բանությունը ընթանում եր դասակարգային այդ կովկը և վարեց-
ման իրենց արտահայտությունն են զտել նրա հետեւնքները: Լինելով
ֆեոդալիզմի կենտրոնը միջին դարերում, միասնական դասային միակե-
տության որինակելի յերկիրը վերածնության դարաշրջանից սկսած,
Ֆրանսիան Մեծ հեղափոխության ժամանակ ջարգություր արեց Փեո-
դալիզմը և բուրժուազիայի մաքուր տիրապետություն հիմնեց այնպիսի
կասմիկ պարզությամբ, ինչպես վոչ մի այլ յերկիրը: Յեզ

դլուխ բարձրացնող պրոլետարիատի կովկն ել տիրապետով բուրժուազիայի դեմ հանդես և գալիս այստեղ այնպիսի սուր ձևով, վոր անհայտ և մյուս յերկրներին» (1907 թ. Հրատարակություն, եջ 4):

Վերջին դիտողությունը հնացել է, վորչափով 1871 թվից սկսած ընդհատում ե առաջ յեկել ֆրանսական պրոլետարիատի հեղափոխական կովկի մեջ, թեև այդ ընդհատումը, վորքան ել յերկարատև լինի այն, ամենենին չի վերացնում այն հնարավորությունը, վոր դալիք պրոլետարական հեղափոխության մեջ Ֆրանսիան ցուցաբերի իրեն իրեւ դասակարգերի մինչև վճռական վախճանը մդվող կովկի կլասիկ յերկիրը:

Բայց, ընդհանուր հայացք գցենք առաջավոր յերկրների XIX դարի վերջի ու XX դարի սկզբի պատմության վրա: Մենք կտեսնենք, վոր ավելի դանդաղ, ավելի բազմածե կերպով շատ ավելի լայն ասպարեզի վրա կատարվում եր այդ նորուն պրոցեսը. մի կողմից, «պառլամենտական իշխանության» մշակման պրոցեսն ինչպես հանրապետական յերկրներում (Ֆրանսիա, Ամերիկա, Շվեյցարիա), այնպես և մշապետական յերկրներում (Անգլիա, վորոշչափով Գերմանիա, Իտալիա, Սկանդինավյան յերկրներ և այլն), —մյուս կողմից, զանազան բուրժուական ու մանրրութուական կուսակցությունների՝ իշխանության համար մզած կովկի պրոցեսը, կուսակցություններ, վորոնք բաժանում ու վերաբաժանում եյին չինովնիկական տեղերի «ավարը», մինչդեռ բուրժուական հասարակարդի հիմքերն անփոփոխ եյին մնում, —վերջապես՝ «գործադիր իշխանության», նրա չինովնիկական ու ուազմական ապարատի կատարելագործման ու ամրացման պրոցեսը:

Վոչ մի կասկած չկա, վոր սրանք առհասարակ կապիտալիստական պետությունների ամբողջ նորագույն եվոլյուցիայի ընդհանուր գծերն են: Յերեք տարվա ընթացքում, 1848—1851 թ. թ., Ֆրանսիան արագ, սուր, կոնցենտրացած ձևով ցույց տվեց զարգացման հենց այն պրոցեսները, վորոնք հատուկ են ամբողջ կապիտալիստական աշխարհին:

Իսկ առանձնապես իմպերիալիզմը, բանկային կապի-

տալի գարաշը լանը, կապիտալիստական հսկայական մենաշնորհների գարաշը լանը, այն դարաշը լանը, յերբ մոնոպոլիստական կապիտալիզմը, գերածելով, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի յե փոխարկվում, «պետական մեքենայի» արտասովոր ուժեղացում և ցույց տալիս, նրա չինովնիկական ու ուազմական ապարատի շտեսնված աճում, վոր կապակցված ե պրոլետարիատի գեմ ուղղված ուղղուաներին ուժեղացման հետ ինչպես միապետական, այնպես նաև ամենաազատ, հանրապետական յերկրներում:

Համաշխարհային պատմությունն, անկասկած, աքմանամեմատ ավելի լայն մասշտաբով, քան 1852 թվին, տանում ե դեպի պրոլետարական հեղափոխության «քոլոր ուժերի համակենտրոնացումը»՝ պետական մեքենան «կործանելու» համար:

Թե ինչով է փոխարինելու պրոլետարիատն այդ մեքենան, դրա համար ամենաուսանելի նյութ ե տվել Փարիզի կոմունան:

3. ՄԱՐՔՍՆ ԻՆՉՊԵՍ Ե ԴՆՈՒՄ ՀԱՐՑԸ 1852 ԹՎԻՆ

1907 թվին Մերինգը «Neue Zeit» ժուռնալում (XXV, 2, 164) քաղվածքներ հրատարակեց Մարքսի՝ Վայլեմայերին ուղղված՝ 1852 թ. մարտի 5-ի թվակիր նամակից: Այդ նամակին, իմիջի այլոց, պարունակում ե 4ետևյալ ուշագրավ դատողությունը.

«Ինչ վերաբերում ե ինձ, ապա ինձ չի պատկանում վո՞չ այն ծառայությունը, վոր յես եմ գտել գասակարգերի գոյությունն արդի հարակության մեջ, վո՞չ ել այն, վոր յես եմ գտել նրանց փոխազարձ կովկը: Բուրժուական պատմաբաններն ինձնից շատ առաջ շարադրել են գասակարգերի այդ կովկի պատմական զարգացումը, իսկ բուրժուական պատմաբանները ավել են դասակարգերի անտեսական անառօժիան: Այս նոր գործը, վոր կատարել եմ յես, յեղել ե այն, վոր յես ապացուցել եմ հետևյալը: 1) վոր դասակարգերի գոյությունը կապակցված ե լրկ պատմական վորոշ ժարտերի հետ, վորոնք հասուկ են արտադրության զարգացմանը (historische Entwicklungskämpfe der Produktion), 2) վոր դասակարգային կովկն անհրաժեշտութեան ուժում և դեպի պրոլետարիատի համար անհրաժեշտութեան:

1 Ավելացված յերկրորդ հրատարակությունը:

տարիատի գիկասառուբան, 3) վոր այդ գիկասառուբան ինքը սոսկ մի անցումն և գեղի ամեն տեսակ գասակարգերի վոչչացումն ու գեղի առանց գասակարգերի հասարակությունը»...»

Այս խոսքերով Մարքսին հաջողվել է զարմանալի ցցունությամբ արտահայտել նախ՝ իր ուսմունքի գլխավոր ու արմատական տարբերությունը բուրժուազիայի առաջավոր ու ամենից ավելի խորաթափանց մտածողների ուսմունքից, և յերկրորդ՝ պետության մասին իր մշակած ուսմունքի եյությունը:

Գլխավորը Մարքսի ուսմունքի մեջ գասակարգային կոիմն է: Այսպես են ասում ու գրում շատ հաճախ: Բայց այդ ճիշտ չե: Յեվ այդ անձշտությունից միշտ ու շարունակ ծագում և մարքսիզմի ոպորտունիստական խեղաթյուրումը, նրա խարդախումը՝ բուրժուազիայի համար ընդունելի դարձնելու վոգով: Վորովչետև գասակարգային կըսվի ուսմունքն ստեղծել և վո'չ թե Մարքսը, այլ բուրժուազիան նախքան Մարքսը, և այդ ուսմունքն, ընդհանրապես առած, բուրժուազիայի համար ընդունելի յե: Ով ընդունում և միմիայն գասակարգերի կոխվը, նա գեռ մարքսիստ չե, նա կարող է զեռ բուրժուական մտածողության ու բուրժուական քաղաքականության շրջանակներից գուրայեկած չլինել: Սահմանափակել մարքսիզմը գասակարգերի կովի ուսմունքով—նշանակում է խուզել մարքսիզմը, խեղաթյուրել այն, հանգեցնել նրան այն բանին, ինչ վոր ընդունելի յե բուրժուազիայի համար: Մարքսիստ և միմիայն նա, ով գասակարգերի կովի ճանաչումն ընդարձակում և մինչև պրոլետարիատի գիկատուրայի ճանաչումը: Այս և մարքսիստի ամենախորը տարբերությունը սովորական մանր (հենց նաև խոշոր) բուրժուազից: Այս փորձաքարի վրա պետք է փորձարկել մարքսիզմի խևական հասկացողությունն ու ճանաչումը: Յեվ գարմանալի չե, վոր յերբ Յեվրոպայի պատմությունը բանվոր գասակարգերին գործնականորեն բերեց-հասցընեց ավյալ հարցին, այն ժամանակ վո'չ միայն բոլոր ոպորտունիստներն ու ոեփորմիստները, այլև բոլոր «կառւցկիսականները» (մարդիկ, վորոնք տարութերվում են ոեփորմիզմի ու մարքսիզմի միջև) պրոլետա-

րիատի գիկատուրան Ժխտայ վողորմելի ֆիլիստերներ ու մանր-բուրժուական գեմոկրատներ դուրս յեկան: Կառւցկու «Պրոլետարիատի գիկատուրան» բրոցյուրը, վոր լույս է տեսել 1918 թ. ոգոստոսին, այսինքն՝ այս գրքույկի առաջին համարակալությունից շատ հետո, մարքսիզմի քաղքենիական աղավաղման ու գործով նրանից ստորոտիթյումը հարժարվելու, բայց խոսքով այն կեղծավորաբար ճանաչելու մենմուշ և (ամեն իմ «Պրոլետարական հեղափոխությունն ու ունենալա կառւցկին» բրոցյուրում, Պետրոգրադ և Մոսկվա, 1918 թ.)¹⁾:

Արդի ոպորտունիզմը հանձին իր գլխավոր ներկայացուցի, նախկին մարքսիստ կ. կառւցկու, ամբողջովին համապատասխանում և բուրժուական գիրքի այն բնութագրմանը, վոր տալիս և Մարքսը վերևում, վորովհետև այդ ոպորտունիզմը դասակարգային պայքարի ճանաչման բնագավառը սահմանափակում և բուրժուական հարաբերությունների բնագավառով: (Իսկ այդ բնագավառի ներսում, նրա շրջանակներում վոչ մի կրթված լիբերալ չի հրաժարվի «սկզբունքով» ընդունել դասակարգային կոիլը): Ուղորտունիզմը դասակարգային կովի ընդունումը չի հասցընում հենց ամենազլամուր կետին, կապիտալիզմից կոմունիզմին անցնելու շրջանին, բուրժուազիայի տապալման ու նրա լիակատար վոչչացման շրջանին: Իրականության մեջ այդ շրջանն անխուսափելիորեն դասակարգային չտեսնելոված զաժան կովի, նրա չտեսնլած սուր ձեերի շրջան և հանդիսանում, հետեւալես և, այդ շրջանի պետություննել անխուսափելիորեն պետք և նոր ձեի գեմոկրատական (պրոլետարների ու առհասարակ չունեորների համար) և նոր ձեի գիկատուրական պետություն լինի (ընդդեմ բուրժուազիայի):

Այնուհետև: Մարքսի ուսմունքի եյությունը պետության մասին միմիայն նա յե յուրացըել, ով ըմբռնել է, վոր մեկ դասակարգի գիկատուրան անհրաժեշտ և վո'չ միայն ընդհանրապես ամեն մի դասակարգային հասարակության համար, վո'չ միայն բուրժուազիային տապալմա-

1 Յերկեր, Համ. ԽIII, էջ 331:

պրոլետարիատի համար, այլև մի ամբողջ պատմական ժամանակաշրջանի համար, վոր բաժանում ե կապիտալիզմն «առանց դասակարգերի հասարակությունից»՝ կոմունիզմից: Բուրժուատական պետությունների ձևերը չափազանց բազմազան են, բայց նրանց եյտթյունը մեկ է. այդ բոլոր պետություններն այսպես թե այնպես, բայց վերջին հաշվով անպայման բուրժուագիայի դիկտատորա յեն հանգիստում: Կապիտալիզմից կոմունիզմին անցնելն, իհարկե, չի կարող քաղաքական ձևերի ահազին առատություն ու բազմազանություն չբերել, բայց դրանց բոլորի եյտթյունն անխուսափելու մեկ է՝ պրոլետարիատի դիկտատորան:

III Գլուխութեան

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ:
1871 ԹՎ.Ի ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՅԻ ՓՈՐՁԲ:
ՄԱՐՔՍԻ ԱՆԱԼԻԶԸ

1. ՎՈ՞ՐՆ Ե ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՀԵՐԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայոնի յե, վոր Կոմունայից միքանի ամիս առաջ, 1870 թվի աշնանը, Մարքսը նախազգուշացնում եր Փարիզի բանվորներին, ապացուցելով, թե կառավարությունը տապալելու փորձը հուսահատությունից բղխող հիմարություն կլիներ: Բայց յերբ 1871 թվի մարտին բանվորների վզին փաքաքեցին վճռական ճակատամարտը և նրանք ընդունեցին այն, յերբ ապստամբությունն իրողություն գարձավ, Մարքսը, չնայած վատ նախանշաններին, մեծագույն հիացմունքով վողջունեց պրոլետարական հեղափոխությունը: Մարքսը պեղանուական համառությամբ չդատապարտեց «անժամանակ» շարժումը, ինչպես մարքսիզմի ոռուական տիրահռչակ ունեղատ Պլեխանովը, վորը 1905 թվի նոյեմբերին գրում եր բանվորների ու դյուզացիների պայքարը խրախուսելու գողով, իսկ 1905 թվի գեկտեմբերից հետո լիբերալների նման գոռում եր. «պետք չեր զնոք վերցնել»:

Մակայն, Մարքսը լոկ չեր զմայի ում, ըստ իր արտահայտության, «յերկինքը գրոհի յենթարկող» կոմունարների հերոսությամբ: Մասայական հեղափոխական շարժման մեջ, թեպեակ այն իր նպատակին չհասալ, նա հսկայական կարևորություն ունեցող պատմական փորձ եր տեսնում, համաշխարհային պրոլետարական հեղափոխության մի վորչ քայլ զնոպի առաջ, գործնական մի քայլ, վոր ավելի կարենը եր, քան հարյուրավոր ծրագրեր ու դատողու-

թյամներ։ Վերլուծել այդ փորձը, նրանից տակտիկայի դառներ քաղել, նրա հիման վրա վերանայել իր թեորիան—ահա թե ինչպես եր զնում Մարքսն իր խնդիրը։

Միակ «ուղղումը», վոր Մարքսն անհրաժեշտ համարեց մտցնել «Կոմունիստական մանիֆեստի» վերաբերմամբ, այն մեկ ուղղումն ե, վոր նա կատարեց Փարիզի կոմունարների հեղափոխական փորձի հման վրա։

«Կոմունիստական մանիֆեստի» գերմաներեն նոր հրատարակության վերջին առաջարանը, վորն ստորագրել են նրա յերկու հեղինակներն ել, թվադրված է 1872 թվի հունիսի 24։ Այդ առաջարանում հեղինակները, կարև Մարքսու Ֆրիդրիխ Ենդելսն, ասում են, թե «Կոմունիստական մանիֆեստի» ծրագիրն «այժմ տեղ-տեղ հնացել է»։

...«Առաճնապես—շարունակում են նրանք—կոմունան ապացուցեց, վոր «քանիվոր դասակարգը չի կարող պարզապես զրավել պատրաստի սրբական մեքնան և այն ընթացքի մեջ դնել՝ սիվական նորական կամքացար»...»

Այս ցիտատի յերկրորդ չափերտների մեջ առնված բառը հեղինակները փոխ են առել Մարքսի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» աշխատությունից։

Այսպես ուրեմն, Մարքսն ու Ենդելսը Փարիզի կոմունայի մեկ հիմնական ու գլխավոր դասն այնքան հոկայական կարևորություն ունեցող Եյխն համարում, վոր նրանք այն, իբրև Եյական ուղղում, մտցրին «Կոմունիստական մանիֆեստի» մեջ։

Զավադանց բնորոշ ե, վոր հենց այս Եյական ուղղումն են աղավաղել ոպորտունիստները, և նրա իմաստն, անշուշտ, հայտնի չե «Կոմունիստական մանիֆեստը» կարդացողներից իննը տասերորդին, յեթե վոչ իննառնինը հարյուրերորդին։ Այդ աղավաղման մասին մանրամասն մենք կիսունք ներքենում, այն գլխում, վորը հատկապես նվիրված է աղավաղումներին։ Այժմ բավական կլինի նշել, վոր Մարքսի վերկում մեջ բերված հոչակավոր առույթի տարածված, գուհիկ «ըմբռնումն» այն ե, վոր իբր թե Մարքսն այսուղ շեշտում է դանդաղաքայլ զարդացման դաղափարն իբրև հակադրություն իշխանության դրավման և այն։

Իսկապես ն ի շ տ դ ր ա հ ա ռ ա կ ն ե ։ Մարքսի

միտքն այն ե, թե բանվոր դասակարգը պետք է շ ա ր դ ի վ շ թ ի պատրաստի պետական մեքենան», և վոչ թե սահմանափակվի պարզապես այն դրավելուի։

1871 թ. ապրիլի 12-ին, այսինքն՝ հենց Կոմունայի ժամանակ, Մարքսը գրում եր Կուգելմանին։

...«Յեթե գու աչքի անցկացնես իմ «Բրյումերի 18-ի» վերջին դլուխը, կուսանես, վոր յեւ ֆրանսական հեղափոխության առաջիկա փորձը հայտարարում եմ հետեւալը. մի ձեռքից մյուսը չհանձնել բյուրոկրատական-ռազմական մեքենան, ինչպես լինում եր մինչեւ այժմ, այլ շ ա ր դ ո ւ փ շ ո ւ թ ա ն ե լ ա յ ն » (ընդուռմը Մարքսին ե, ընազրում առաջարկ և zerbrechen) «և հենց այդ ե մայր ց ամաքի վրա կատարված ամեն մի խական ժողովրդական հեղափոխության նախադայմանը։ Յեվ հենց այդ ե նաև Փարիզի մեր հերոսական ընկերների փորձը» (եջ 709, «Neue Zeit», XX, 1, 1901—1902 թ.)։ Մարքսի նամակները Կուգելմանին ուսւերեն լույս են տեսել առնվազն յերկու հրատարակությամբ, վորոնցից մեկն իմ խմբագրությամբ ու իմ առաջարանով։

Այդ խոսքերում՝ «Ճարդուփչուր անել բրյուրոկրատական-ռազմական պետական մեքենան»՝ ամփոփված է մարքսիզմի հակիմ արտահայտված գլխավոր դասն այն հարցի մասին, թե վորոնք են պրոլետարիատի խնդիրները հեղափոխության մեջ պետառթյան վերաբերմամբ։ Յեվ հենց այս դասը վո՞չ միայն բոլորովին մոռացված է, այլև ուղղակի աղավաղված է մարքսիզմի տիրող, կառցկիսական «մեկնարանությամբ»։

Ինչ վերաբերում է Մարքսի «Բրյումերի 18-ի» մատնանշումին, մենք վերեկում լրիվ մեջ բերինք համապատասիմն հատվածը։

Հետաքրքրական է առանձնապես նշել յերկուտեղ Մարքսի մեջը բերված դատողության մեջ։ Առաջին՝ նա իր յեղակացությունը սահմանափակում է մայր ցամաքով։ Այս բանը հատկանալի յեր 1871 թվին, յերբ Անդիհան դեռ զուտ կալիսալիստական որինակելի յերկիր եր, բայց առանց զինկարագանության և նշանակալից չափով՝ առանց բյուրոկրատիայի։ Այդ պատճառով ել Մարքսը բացառում եր Անդիհան, վորտեղ հեղափոխությունը, և նույնիսկ ժողովրդական հեղափոխությունը, պատկերացվում եր հնարավոր

և այն ժամանակ հնարավոր եր՝ առանց «պատրաստի պետական մեքենան» կործանելու նախապայմանի:

Այժմ, 1917 թվին, առաջին մեծ իմպերիալիստական պատերազմի դարաշրջանում, Մարքսի այդ սահմանափակումը վերանում է: Թե՛ Անդլիան, թե՛ Ամերիկան, ամբողջ աշխարհում անգլո-սաքսոնական «ազատության» խոչըրադրույն ու վերջին ներկայացուցիչները՝ զինվորականության ու բյուրոկրատիզմի բացակայության իմաստով, թավարդուր ընկան ամեն ինչ իրենց յենթարկող, ամեն բան ձնշող բյուրոկրատական ուազմական հիմնարկությունների համայնքուական կեղտու, արյունու ճահճը: Հիմա թե՛ Անդլիայում, թե՛ Ամերիկայում «ամեն մի իսկապես ժողովրդական հեղափոխության նախապայման» ե զ ա րդ ե լ, խ ո ր տ ա կ ե լ «պատրաստի պետական մեքենան» (վոր պատրաստված ե այստեղ 1914—1917 թվականներին ու հասցված «յելլոպական» համալմպերիալիստական կատարելության):

Յերկրորդ՝ հատուկ ուշադրության ե արժանի Մարքսի այն չափագանց խորիմաստ դիտողությունը, թե՛ բյուրոկրատական-ուազմական պետական մեքենայի խորսակումն «ամեն մի իսկական ժողովրդական հեղափոխության նախապայմանն ե»: «Ժողովրդական» հեղափոխության այս հասկացողությունը տարօրինակ ե թվում Մարքսի բներանում, և ոուս պլեխանովականներն ու մենշևիկները, Ստրումկի այդ հետևորդները, վորոնք ուզում են մարքսիստ համարիկ, կարող ելին, թերևս այդ արտահայտությունը Մարքսի մոտ «սխալասություն» («օօմօլվկա») հայտարարել: Նրանք մարքսիզմն այնպիսի խղճուկ-լիբերալական աղափաղման են վերածել, վոր նրանց համար, բացի բուժուական ու պրոլետարական հեղափոխության հակադրումից, ուրիշ վոչինչ գոյություն չունի, բայց հենց այդ հակադրումն ել նրանք չափազանց մեռելային կերպով են ըմբռնում:

Յեթե որինակի համար վերցնենք XX դարի հեղափոխությունները, ապա հարկ կլինի, իհարկե, պորտուգալական ու տաճկական հեղափոխություններն ել բուժուական

համարել: Բայց նրանցից վո՞չ մեկը, վո՞չ ել մյուսը «ժողովրդական» չեն, վորովհետև ժողովրդի մասան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույնորեն, իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելի կերպով հանդես չի յեկել այդ հեղափոխություններից և վոչ մեկի մեջ: Ընդհակառակը, 1905—1907 թվականների ոռուսական բուժուական հեղափոխությունը, թե՛ն նա այնպիսի «փայլուն» հաջողություններ չի ունեցել, ինչ-ովիսիք մերթընդմերթ բաժին ընկան պորտուգալական ու տաճկական հեղափոխություններին, անկասկած «իսկական ժողովրդական» հեղափոխությունն եր, վորովհետև ժողովրդի մասսան, նրա մեծամասնությունը, ճնշման ու շահագործման միջոցով տրորված ամենախորին հասարակական «ներքնախավերը» վորովի ելին յենում ինքնուրույնաբար, հեղափոխության ամբողջ ընթացքի վրա դրին իրենց պահանջների կնիքը, խորտակլող հին հասարակության տեղ՝ իրենց ուղած ձեռվ նոր հասարակություն կառուցելու իրենց արած փորձերի կնիքը:

Յեփրոպայում 1871 թվին մայր ցամաքի վոչ մի յերկրում ել պրոլետարիատը ժողովրդի մեծամասնությունը չեր կազմում: «Ժողովրդական» հեղափոխությունը, վոր շարժման մեջ ե քաշում իսկապես մեծամասնությանը, կարող եր «ժողովրդական» լինել միմիայն ընդգրկելով թե պրոլետարիատը, թե՛ զյուլացցիությունը: Հենց այդ յերկու դաստիարակերն ելին, վոր այն ժամանակ «ժողովուրդ» ելին կազմում: Յերկու դասակարգերը միացած են նրանով, վոր «բյուրոկրատական-ուազմական պետական մեքենան» ճնշում, ճգնաժամ, շահագործում և նրանց: Զարդել այդ մեքենան, վշրել այն—այդ և «ժողովրդի», նրա մեծամասնության, բոլոր բանվորների և դյուլացիների մեծամասնության իսկական շահը, այդ և ամենաչքավոր զյուլացիների ու պրոլետարների ազատ դաշինքի «նախապայմանը», առանց այդպիսի զաշինքի անհատատ և դեմոկրատիան ու անհնարին՝ սոցիալիստական վերակազմությունը:

Ինչպես հայտնի յե, հենց այդպիսի զաշինքի ճանապարհ եր բաց անում իր համար Փարիզի կոմունան, վորը

ներքին ու արտաքին ընույթ ունեցող մի շաբք պատճառ-
ների չնորհիվ իր նալատակին չհասավ:

Հետեաբար, խոսելով «իսկական ժողովրդական հեղա-
փոխության» մասին, Մարքսը, բոլորովին չմոռամալով
մանր բուրժուազիայի առանձնահատկությունները (գրանց
մասին նա խոսել է շատ ու հաճախ), ամենախիստ
կերպով հաշվի յեր առնում դասակարգերի փաստական
փոխարաբերությունը Յելլոսբայի ցամաքային պետու-
թյունների մեծամասնության մեջ 1871 թվին: Իսկ մյուս
կողմից, նա հայտառում եր, վոր պետական մեքենան
«ջարդուփշուր» անել պահանջում են թե՛ բանվորների,
թե՛ գյուղացիների շահերը, վոր այդ բանը միացնում է
նրանց, ընդհանուր խորիս ե դնում նրանց առաջ՝ վերաց-
նել «պարագիտը» և այն մի վորեւ նոր բանով փոխարինել:
Բայց ինչո՞վ:

2. ԻՆՉՈ՞Վ ՓՈԽԱՐԻՆԵԼ ԶԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆ

Այս հարցին Մարքսը 1847 թվին, «Կոմունիստական
մանիֆեստի» մեջ, գեռ միանդամայն վերացական պատաս-
խան եր տալիս, մի պատասխան, վոր ավելի ճիշտ՝ խըն-
դիրներն եր մատնանշում, բայց վոչ թե նրանց լուծման յե-
ղանակները: Փոխարինել «պրոլետարիատի կազմակերպ-
մամբ իրեւ տիրող դասակարգ», «դեմոկրատիայի նվաճու-
մով»—ահա այս եր «Կոմունիստական Մանիֆեստի» պա-
տասխանը:

Առանց ուտոպիաների մեջ ընկնելու, Մարքսը մասսա-
յական շարժման փորձից եր պատասխան սպասում այն
հարցին, թե ինչպիսի կոնկրետ ձևեր կսկսի ընդունել պլո-
յետարիատի այդ կազմակերպությունն իրեւ տիրող դասա-
կարդ, հատկապես ինչ կերպով այդ կազմակերպությունը
կհամատեղվի ամենալրիվ ու հետեղական «դեմոկրատիա
նվաճելու» հետ:

Կոմունայի փորձը, վորքան ել այն փոքր եր, Մարքսը
«Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» դրվածքի

մեջ ամենառաջադիր վերլուծման և յենթարկում: Մեջ բե-
րենք ամենակարևոր տեղերն այդ գրվածքից:

XIX դարում զարգացավ միջին զարերից տառաջացած «կենտրոնաց-
ած պետական իշխանությունն էր ամեն տեղ գանվող որդաններով—
մշտական զորաբանակով, վոստիկանությամբ, բյուրոկրատիայով, հո-
գեռականությամբ, զտասլորական դասով»: Կամիտալի ու աշխատան-
քի դասակարգային հակամարտության զարգացմամբ, «պետական իշ-
խանությունն ավելի հասարակական իշխանության ընույթ եր
ընդունում՝ աշխատանքը ճնշելու համար, ընդունում եր դասակարգային
տիրապետության մեջնայի ընույթ: Ամեն մի հեղափոխությունից
հետո, վոր մի վորոշ առաջարկի մուտքուն և հանդիսանում դասակար-
գային պայքարի մեջ, ակտական իշխանության դուռ ճնշող ընույթն
ավելի ու ավելի բացահայտ և յերեան դալիս: Պետական իշխանու-
թյունը 1848—1849 թ. թ. հեղափոխությունից հետո դառնում և «կա-
պիտալի» աշխատանքի դեմ մզած պատերազմի ազգային զենքը: Յերկ-
րորդ կայսրությունն ամրապնդում և այդ:

«Կայսրության ուղղակի հակադրությունը կոմունան եր»: «Նա վո-
րոշակի ձևն եր այնպիսի հանրապետության, վորը պետք ե վերացներ
վո՛չ միայն դասակարգային տիրապետության միապետական ձևը, այլև
հենց դասակարգային տիրապետությունը»...

Վո՞րն եր պրոլետարական, սոցիալիստական հանրա-
պետության այդ «վորոշ» ձեւը: Վո՞րն եր այն պետությունը,
վորը նա սկսել եր սուեղծել:

...զկոմունայի առաջին դեկեմբեր մշտական զորքի վոչնչացումն ու
այն զինված ժողովրդով փոխարինելն եր»...

Այս պահանջն այժմ դրված ե սոցիալիստական կոչվել
ցանկացող բոլոր կուսակցությունների ծրագրերում: Բայց
թե ինչ արժեն նրանց ծրագրերը, ամենից լավ յերեսում
ե մեր եսերների ու մենչեկների վարմունքից, վորոնք
հենց փետրվարի 27-ի (Հ. տ.) հեղափոխությունից հետո
կրապես հրաժարվեցին այդ պահանջը կենսագործելուց:

...զկոմունան կազմված եր Փարիզի զանազան շբջանների քաղաքա-
յին ձայնավորներից, վորոնք ընտրված եյին ընդհանուր ընտրական ե-
րավունքը հիման վրա: Նրանք պատասխանառու եյին և ամեն ժամանակի
փոփոխելի: Նրանց մեծամասնությունն, ինքնըստինքյան հասկանալի յե-
րազանցած եր բանվորներից կամ բանվոր դասակարգի անաշված ներ-
կայացուցիչներից»...

...«կոստիկանությունը, վոր մինչև այժմ պետական կառավարու-
թյան զօրծիքն եր, այժմ անմիջապես զրկվեց իր բուռը քաղաքական
փունկցիաներից և գարձավ կոմունայի պատասխանառու որդանը, վոր

կարելի յեր ամեն ժամանակ փոխել... Նույնպես և—կառավարչության բոլոր մյուս ճյուղերի չինովնիկները... Սկսած Կոմունայի անդամներից, վերակից մինչև ներքեւ, հասարակական ծառայությունը պետք է կատարվեր բանվարի աշխատավարձով: Գետական բարձր պաշտոնատար անձերէ ձեռք բերած ամեն տեսակ արտանություններն ու ներկայացուցության համար տրվող զրամներն անհետացան այդ պաշտոնյաների հետ միասին... Մշտական գորքն ու վոստիկանությունը, Հին կառավարության նյութական իշխանության այդ գործիքները, վերացնելուց հետո Կոմունան անմիջապես ձեռնարկեց խորամիւրու հոգեսոր ճնշման գործիքը, տերտերների ուժը... Դատական պաշտոնյաները կորցրին իրենց յերեսութական անկախությունը... այսուհետեւ նրանք պետք ե բաց կերպով ընտրվելին, պատասխանատու և փոփոխելի լինելին»...

Այդպես ուրեմն, Կոմունան պետական ջարդումիշուր արված մեքենան կարծես թե փոխարինեց «միմիայն» ալեւլի լիակատար դեմոկրատիայով, այն ե՛ մշտական զորաբանակի վոչնչացումով, բոլոր պաշտոնատար անձերի լիակատար ընտրելիությամբ ու փոփոխելիությամբ: Բայց իսկապես այդ «միմիայն» նշանակում ե մի տեսակ հիմնարկների հակայական փոխարինումն սկզբունքորեն այլ տեսակի հիմնարկներով: Այստեղ մենք տեսնում ենք հենց այն դեպքերից մեկը, յերբ «քանակը վորակի յե փոխարկ-վում»՝ դեմոկրատիան, զորն իրականացված ե այնպիսի ամենամեծ լիակատարությամբ ու հետևողականությամբ, վորպիսին ընդհանրապես հնարավոր ե յերեակայել, բուրժուական դեմոկրատիայից փոխվում ե սրբության պետությունից (=հատուկ ուժ՝ վորոշ դասակարգ ճնշելու համար) փոխվում ե մի այնպիսի բանի, վորն այլևս իսկապես պետություն չե:

Ճնշել բուրժուազիային ու նրա դիմադրությունը դեռևս անհրաժեշտ ե: Այս բանն առանձնապես կարևոր եր Կոմունայի համար, և նրա պարտության պատճառներից մեկն այն ե, զոր նա բավականաչափ վճռականորեն չեր անում այդ բանը: Բայց այստեղ ճնշող որդան հանդիսանում ե արդեն բնակչության մեծամասնությունը, և վոչ թե փոքրամասնությունը, ինչպես լինում եր միշտ թե՛ ստրկության, թե՛ ճորտության, թե՛ վարձու ստրկության ժամանակ: Իսկ քանի զոր ժողովրդի մեծամասնությունն ինեն և ճնշում իրեն ճնշողներին, ապա ճնշման

կարիք այլևս չկա: Այս իմաստով պետությունն ակտում ե մահանալ: Արտոնյալ փոքրամասնության հատուկ հիմնարկների փոխարին (արտոնյալ չինովնիկություն, մշտական զորաբանակի հրամանատարություն) մեծամասնությունն ինքն անմիջականորեն կարող ե կատարել այդ բանը, և վորքան ավելի համաժողովրդական ե դառնում պետական իշխանության Փունկցիաների հենց կատարումը, այնքան ավելի պահան կարեւոր ե դառնում այդ իշխանությունը:

Այդ տեսակետից առանձնապես ուշադրավ ե Կոմունայի ձեռնարկած այն միջոցը, զորն ընդդեկ ե Մարքսը. ներկայացուցության համար տրվող ամեն տեսակ դրամների, չինովնիկների ամեն տեսակ դրամական արտոնությունների վերացումը, բոլոր պաշտոնատար անձերի վարձատրությունը պետության մեջ «բանվորի աշխատավարձի» չափին իջեցնելը: Հենց այստեղ ե, վոր ամենից ավելի ակնրախ կերպով ե արտահայտվում բեկումը—բուրժուական դեմոկրատիայից դեպի սկզբանական դեմոկրատիան, ճնշողական դեմոկրատիայից՝ դեպի ճնշված դասակարգերի դեմոկրատիան, պետությունից, իրեն վորոշ դասակարգ ճնշելու «հատուկ ուժից»՝ դեպի ճնշողներին ժողովրդի մեծամասնության, բանվորների ու զյուղացիների, ընդհանուր ուժով ճնշելը: Յեկամության հարցին վերաբերող հենց այս, առանձնապես ակնրախ, թերևս ամենակարևոր կետում ե, վոր Մարքսի դասերն ամենից ավելի յեն մոռացված: Զանրամատչելի մեկնաբանությունների մեջ, վորոնց թիվը ու համար չկա, այդ մասին չեն խոսում: «Բնդուվածք ե» լուել այդ մասին, իրեն իր ժամանակն անցելացրած մի «միամտության» մասին, այնպես, ինչպես վոր քրիստոնյաները, պետական կրոնի զիրք ձեռք բերելով, «մոռացան» նախնական քրիստոնեյության «միամտությունները» նրա դեմոկրատական-հեղափոխական վոդու հետ միասին:

Պետական բարձրագույն պաշտոնյաների վարձատրության իջեցումը պարզամիտ, պրիմիտիվ դեմոկրատիզմի պահանջ ե թվում «պարզապես»: Նորագույն ոպորտունիդ-

մի «Հիմնադիրներից» մեկը, նախկին ոսցիալ-դեմոկրատ Եղ. Բերնշտայնը, շատ անդամ և վարժություններ արել՝ կըրկ-նելով բուրժուական դռեհիկ հեգությունները «պրիմի-տիվ» դեմոկրատիզմի հասցեյին։ Ինչպես բոլոր ողորշու-նիստները, ինչպես այժմյան կառուցկիականները, նա ել բոլորովին չըմբռնեց այն, վոր նախ՝ անցումը կապիտա-լիզմից դեպի սոցիալիզմ անհնար ե, առանց վորոշ «վերա-դարձի» դեպի «սլրիմիտիվ» դեմոկրատիզմը (վորովհետե-այլ կերպ ի՞նչպես պետք ե անցնել պետական Փունկցիանե-այլ կերպ ի՞նչպես պետք ե անցնել պետական Փունկցիանե-այլ կատարմանը բնակչության մեծամասնության և գլխո-վին ամբողջ բնակչության կողմից), իսկ յերկրորդ՝ վոր «պրիմիտիվ դեմոկրատիզմը» կապիտալիզմի ու կապիտա-լիստական կուլտուրայի հիման վրա—այն չե, ինչ վոր պրիմիտիվ դեմոկրատիզմը նախնադարյան կամ մինչկապի-տալիստական ժամանակներում եր։ Կապիտալիստական կուլտուրան ստեղծել ե խոշոր արտադրություն, դործա-րաններ, յերկաթուղիներ, փոստ, հեռախոսներ և այլն, իսկ այդ քաջայի վրա հին «պետական իշխանության» Փունկցիաների հոկայական մեծամասնությունն այնքան Փունկցիաների, վոր այդ Փունկցիաները միանդամայն մատչե-թյունների, վոր այդ Փունկցիաները միանդամայն մատչե-լի կդառնան բոլոր գրագետ մարդկանց, վոր այդ Փունկ-ցիաները լիովին կարելի կլինի «բանվորի» սովորական «աշխատավարձով» կատարել, վոր կարելի յե (և պետք ե) այդ Փունկցիաներից իւել ինչվոր արտօնվածության, այդ Փունկցիաներից ամեն մի սովոր:

Առանց բացառության բոլոր պաշտոնատար բնձերի լիակատար ընտրովիությունը, ամեն ժամանակ փոփոխե-լիությունը, նրանց ոռճիկը «բանվորի» սովորական «աշ-խատավարձին» իջեցնելը, այդ պարզ ու «ինքնըստինքյան հասկանալի» դեմոկրատական միջոցառումները, լիովին միավորելով բանվորների և գյուղացիության մեծամասնու-միավորելով բանվորների և ծառայության մեծամասնու-թյան շահերը, միենալին ժամանակ ծառայում են իրեն շահերը, միենալին ժամանակ ծառայում են դեպի սոցիալիզ-մը։ Այդ միջոցառումները վերաբերության դեմոկրատական պետականության ամեն միանության ժամանակ մի քայլ ե անում դեպի պետականության սոցիալիստական վերակառուցումը։

պետական, զուտ քաղաքական վերակառուցմանը, բայց նրանք, իհարկե, իրենց ամբողջ իմաստն ու նշանակու-թյունն ստանում են միմիայն «սեփականազրկողների սե-փականազրկման» իրականացման կամ նախապատրաստման կապակցությամբ, այսինքն՝ արտադրության միջոցների վրա ունեցած կապիտալիստական մասնավոր սեփականու-թյան՝ հասարակական սեփականություն դառնալու կա-պակցությամբ։

«Կոմունան—զբում եր Մարքսը—ճշմարտություն դարձրեց բոլոր տուրքուական հեղափոխությունների լողուզը՝ եժան կառավարությու-նը, զոնչացնելով ծախքերի յերկու ամենախոշոր հոդվածները՝ բանակն ու չինովնիկությունը»։

Գյուղացիությունից, ինչպես նաև մանր բուրժուազի-այի մյուս շերտերից միմիայն չնչին փոքրամասնությունն ե «վեր բարձրանում», «մարդ դառնում» բուրժուական իմաստով, այսինքն՝ կամ ունեոր մարդ, բուրժուա յե դառնում, կամ ապահովված ու արտոնյալ չինովնիկ։ Գյուղացիության վիթխարի մեծամասնությունն ամեն մի կապիտալիստական յերկրում, վորտեղ միայն գյուղացիու-թյուն կա (իսկ կապիտալիստական յերկրների մեծամաս-նությունն այդպես ե), ճնշված ե կառավարության կող-մից և տենչում ե նրա տապալումը, փափագում ե (յայդետ) «եժան» կառավարության։ Այդ բանը կարող է իրականացնել միմիայն պրոլետարիատը, իսկ իրակա-նացնելով այն՝ նա միենալին ժամանակ մի քայլ ե անում դեպի պետականության սոցիալիստական վերակառուցումը։

Յ. ՊԱՌԱԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ՎՈՉՆՉԱՑՈՒՄԸ

«Կոմունան—զբում եր Մարքսը—պետք ե լիներ փո'չ թե պառա-ժենարական, այլ աշխատող մի կորպորացիա, և միենույն ժամանակ թե՛ որենսողիք եր, թե՛ որենքները գործադրող»...

...«Փոխանակ յերեք կամ վեց տարին մի անգամ վարչելու, թե ափող գասակարգի վոր անդամն ե ներկայացնելու և տրոբելու (ver-and zertreten) ժողովրդին պառամենառում, դրա փոխաբեն ընդհանուր ընտրական իրավունքը պետք ե ծառայելը կոմունաներում կազմակերպ-ված ժողովրդին, վորպեսզի վերջինս կարողանար իր ձեռնարկություն-ների համար բանվորներ, հոկիչներ, հաշվառականներ դանել, ինչպես վոր

անհատական ընտրական իրավունքն այդ նույն նույնական և ծառայում ամեն մի ուրիշ աշխատանք տվողի համար»:

Պառակամենստարիզմի այս յերևելի քննադատությունը, վոր տրված է 1871 թվականին, այժմ, սոցիալ-շովիզմի ու ոպորտունիզմի տիրապետության շնորհիվ, նույնականատկան մարքսիզմի «մոռացված խոսքերի» շարքին: Պրոֆեսիալյով մինիստրներն ու պառակամենստարական գործիչները, պրոլետարիատի գալաճաններն ու մեր որերի «գործարար» սոցիալիստները պառակամենստարիզմի քննադատությունն ամբողջությամբ անարխիստներին են թողել, և այդ գարմանալի խելոք հիմունքով, պառակամենստարիզմի ամեն մի քննադատություն «անարխիզմ» հայտարարել: Վոչ մի տարրինակ բան չկա, վոր «առաջակըր» պառակամենստարական յերկրների պրոլետարիատը, զգվանք զգալով այնպիսի սոցիալիստներ տեսնելիս, ինչպիսիներն են՝ Շայլեմանները, Դավիդները, Լեգինները, Սամբանները, Ռենորենները, Հենդերսոնները, Վանդերվելենները, Ստաունինդները, Բրանտինդները, Բիսոոլատինները և Ընկ., ավելի ու ավելի հաճախակի իր համակրանքը նվիրում եր անարխոսինդիկալիզմին, չնայած այն հանդամանքին, վոր նա ոպորտունիզմի հարազատ յեղբայրն եր:

Բայց Մարքսի համար հեղափոխական դիալեկտիկան յերբեք այն դատարկ մոռային Փրազը, այն չխկչչիկան խաղալիքը չի յեղել, ինչպիսին այն դարձրել են Պլեխանովը, Կառեցիկին և ուրիշները: Մարքսը գիտեր անխնա կերպով իր կապերը խոնկ անարխիզմի հետ, յերբ վերջինս չեր կարողանում ոգտագործել նույնիսկ բուրժուական պառակամենստարիզմի «ախոռը», առանձնապես այն ժամանակ, յերբ ակնհայտորեն բացակայում ե հեղափոխական սիտուացիան, բայց միենույն ժամանակ նա գիտեր նաև տալ պառակամենստարիզմի իսկական հեղափոխական-պրոլետարական քննադատությունը:

Միքանի տարին մի անդամ վորոշել, թե տիրող դատակարդի վոր անդամը պետք ե պառակամենստում ճնշի, ճզմի ժողովրդին—ահա բուրժուական պառակամենստարիզմի իսկական ելությունը, վո՛չ միայն պառակամենստարական-սահմանա-

դրական միապետությունների, այլև ամենաղեմոկրատական չանրապետությունների մեջ:

Բայց յեթե զնենք պետության հարցը, յեթե քննարկենք պառակամենստարիզմն, իբրև պետության հիմնարկներից մեկը, այդ բնագավառում պրոլետարիատի անելիքների տեսակետից, ապա վո՞րտեղ ե յելքը պառակամենստարիզմից, ի՞նչպես կարելի յե առանց նրան կառավարվել:

Կրկին ու կրկին հարկավոր ե ասել. Կոմունայի ուսումնասիրության վրա հիմնված Մարքսի դասերն այնքան մոռացված են, վոր արդի «սոցիալ-դեմոկրատի» (կարդա՝ սոցիալիզմի արդի գալաճանի) համար ուղղակի անհասկանալի յե պառակամենստարիզմի այլ քննադատություն, բացի անարխիստական կամ ուսակցիոն քննադատությունից:

Յելքը պառակամենստարիզմից, իհարկե, ներկայացուցչական հիմնարկների ու ընտրականության վոչնչացման մեջ չե, այլ ներկայացուցչական հիմնարկները խոսարաններից «աշխատող» հիմնարկներ դարձնելու մեջ: «Կոմունան պետք ե վո՛չ թե պառակամենստարական հիմնարկ լիներ, այլ աշխատող, միաժամանակ որենքները և որենքները կատարող»:

«Վոչ թե պառակամենստարական, այլ աշխատող» հիմնարկ—այս խոսքն ի՞սկը տեղին ե ասված արդի պառակամենստարական «սենյակի ների ու սոցիալ-դեմոկրատիայի պառակամենստարական յերկրնեշնիկների» հասցեյին: Դիտեցեք պառակամենստարական յերկրնեշնիկներից հասցեյին: Դիտեցեք պառակամենստարական յերկրնեշնիկներից վորը կուզեք, Ամերիկայից մինչև Շվեյցարիա, Ֆրանքից վորը կուզեք, Ամերիկայից մինչև Անգլիա, Նորվեգիա և այլն. իսկական «ակեսիայից մինչև Անգլիա, Նորվեգիա և այլն. իսկական» աշխատանքը կատարում են կուլիսների հետևում և կատարում են դեպարտամենտները, գրասենյակները, շտաբները: Պառակամենտներում միմիայն դատարկաբանում են՝ «հասարակ ժողովրդին» խարելու հատուկ նպատակով: Այդ այն աստիճան ճիշտ ե, վոր մինչև անդամ ուղարկան հանրապետության մեջ, բուրժուական-դեմոկրատական հանրապետության մեջ, նախքան նրա իսկական պառակամենստական կարողանալը, իսկույն յերևան յեկան պառակամենստարիզմի այդ բոլոր մեղքերը: Փատճ քաղքենիության այնպիսի հերոսներ, ինչպիսիներն են Սկորեկիսներն ու Ծերեկիսները, Զերնովներն ու Ավկսենտյելիսները, կարողացան

մինչեւ անգամ Խորհուրդներն ել ապականել ամենագարշեցք բուրժուական պառլամենտարիզմի որինակով, Խորհուրդները դատարկ խոսարաններ դարձնելով։ Խորհուրդներում պարոնայք «սոցիալիստական» մինիստրները Փրազյությամբ ու բանաձեռքով խարխռում են դյուրահավատ մուժիկներին։ Կառավարության մեջ պերմանենա կադրիլ են խաղում, մի կողմէից, փորպեսզի յեկամտարեր ու պատվավոր պաշտոնների «գաթայի մոտ» հերթով վորքան կարելի յե շատ եսերներ ու մենշևիկներ նստեցնեն, մյուս կողմից, վորպեսզի ժողովրդի «ուշադրությունն զբաղեցնեն»։ Իսկ գրասենյակներում, շտաբներում «սետակա՞ն» դործ են «գործում»։

«Դելօ Արօդա»-ն, «սոցիալիստ-հեղափոխականների» կառավարող կուսակցության որդանը, վերջերս խմբադրական առաջնորդողում խոստովանեց՝ «Հավաք հասարակության» պատկանող մարդկանց աննման անկեղծությամբ, հասարակություն, վորի մեջ «բոլորը» քաղաքական պոռնկությամբ են պարապում, —վոր նույնիսկ այն մինիստրություններում, վորոնք (ներեցե՛ք արտահայտությանս համար) «սոցիալիստներին» են պատկանում, վոր նույնիսկ նրանց մեջ ամբողջ չինովնիկական ապարատն ըստ եյության հինն ե մուռամ, գործում ե հին ձևով, միանգամայն «ազատորեն» սարստածի յե յենթարկում հեղափոխական ձեռնարկումները։ Բայց յեթե մինչեւ անգամ այդ խոսովանությունը չիներ, մի՞թե կառավարության մեջ եսերների ու մենշևիկների մասնակցելու փաստական պատմությունը չի ապացուցում այդ բանը։ Բնորոշ ե այստեղ միմիայն այն, վոր մինիստրական հասարակության մեջ լինելով կաղետների հետ, պարոնայք Զերնովները, Ռուսանովները, Զենդինովներն ու «Դելօ Արօդա»-յի մյուս խմբադիրներն այն աստիճան կորցրել են ամոթը, վոր չեն քաշվում հրապարակով, առանց կարմրելու, իբրև մի աննշան բան պատմել, վոր «իրենց մոտ» մինիստրությունների մեջ ամեն ինչ հին կարդով ե գնում։ Հեղափոխական-դեմոկրատական Փրազ՝ դյուրական Հակոններին տխմարացնելու համար, և չինովնիկան գրասենյակին ձգձում՝ կապիտալիստական «դու-

հայնելու» համար—ահա ձեզ «աղնիվ» կոալիցիայի եյությունը։

Կոմունան բուրժուական հասարակության ծախու և փոտած պառլամենտարիզմը փոխարինում ե այնպիսի հիմնարկներով, վորոնց մեջ դատողության ու քննարկման ազատությունը չի այլասերվում, խաբեյությունը չի դառնում, վորովհետեւ պառլամենտականներն իրենք պետք ե աշխատեն, իրենք պետք ե կատարեն իրենց որենքները, իրենք պետք ե ստուգեն, թե ինչ ե ստացվում դրանից կյանքում, իրենք պետք ե անմիջականորեն պատասխանատու լինեն իրենց ընտրողների առաջ։ Ներկայացուցչական հիմնարկները մնում են, բայց այստեղ չկա պառլամենտարիզմը, իբրև առանձին սիստեմ, իբրև որենսդիր ու գործադիր աշխատանքի բաժանման, իբրև պատղամավորների արտոնյալ դրության սիստեմ։ Առանց ներկայացուցչական հիմնարկների մենք չենք կարող դեմոկրատիա պատկերացնել, նույնիսկ պրոլետարական դեմոկրատիա։ իսկ առանց պառլամենտարիզմի՝ կարող ենք և պարտական ենք, յեթե բուրժուական հասարակության քննադատությունը մեզ համար դատարկ իրավու չեն, յեթե բուրժուազիայի տիրապետությունը տապալելու ձգտումը մեր լուրջ ու անկեղծ ձգտումն ե, և վոչ թե «ընտրական» Փրազ՝ բանվորների ձայները վարսայու համար, ինչպես վոր ե մենշևիկների ու եսերների համար, ինչպես վոր ե Շայլեմանների ու Լեզինների, Սամբանների ու Վանդերվելդների համար։

Զավագանց ուսանելի յե, վոր խոսելով այն չինովնիկության Փունկցիաների մասին, վորը հարկավոր ե թե՛ կոմունային, թե՛ պրոլետարական դեմոկրատիային, Մարքսի համեմատության համար վերցնում ե «ամեն մի այլ աշխատանք տվողի» ծառայողներին, այսինքն՝ սովորական կապիտալիստական մի ձեռնարկություն իր «բանվորներով, Հոկիչներով ու հաշվապահներով»։

Մարքսի մոտ մի կաթիլ անգամ ուսուպիզմ չկա այն իմաստով, վոր նա հնարեր, յերեակայությամբ «նոր» հասարակություն ստեղծեր։ Վո՛չ, նա ուսումնասիրում ե, իբրև մի բնապատմական պրոցես, նոր հասարակության

ծնութեք հմից, այդ Հնից դեպի նորը տանող անցման ձևերը: Նա վերցնում է մասսայական պրոլետարական շարժման իրական փորձը և աշխատում է նրանից գործնական դասեր քաղել: Նա «սովորում է» Կոմունայից, ինչպես վոր բոլոր մեծ հեղափոխական մտածողները չելին վախենում սովորել ճնշված դասակարգի մեծ շարժումների փորձից, առանց յերմիցեւ պիդանտական «բարոյախոսություններով» վերաբերվելու նրանց (Պէկանովի՝ «աղետք չեր զենք վերցնել» կամ Ծերեթելու՝ «դասակարգը պետք է ինքնասահմանադասակվի» խրատների նման):

Զինովինիկությունը միանդամից, ամենուրեք, մինչև վերջը վոչնչացնելու մասին խոսք չի կարող լինել: Այդ ուսուական յէ: Բայց միանդամից ջարդուփշուր անել չինովինիկական հին մեքենան և անմիջապես սկսել նորը կառուցել, վոր թույլ և տալիս հետզհետե վոչնչացնել ամեն մի չինովինիկություն, այդ ուսուպիս չն, այդ—կոմունայի փորձն և, այդ—հեղափոխական պրոլետարիատի անմիջական, հերթական ինդիրն և:

Կապիտալիզմը պարզացնում է «պետական» վարչության Փունկցիաները, հնարավորություն և տալիս դեն շվրտելու «իշխանավորությունը» (պաշալցում) ու ամբողջ գործը վերածելու պրոլետարների կազմակերպությանն (իրրե տիրող դասակարգ), վոր ամբողջ հասարակության անունից «բանվորներ, հոկիչներ, հաշվապահներ» և վարձում:

Մենք ուսուպիստներ չենք: Մենք «յերազողներ» չենք այն մասին, թե ինչպես միանգամից կառավարվենք առանց վորեւ վարչության, առանց վորեւ յենթարկման. այդ անարխիստական ցնորդները, վորոնք հիմնված են պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրները չհասկանալու վրա, հիմնովին խորթ են մարքսիզմին և գործնականում ծառայում են միմիայն սոցիալիստական հեղափոխությունը մինչև այն ժամանակ հետաձգելուն, յերբ մարդիկ կիփոխվեն: Վո՞չ, մենք սոցիալիստական հեղափոխություն ենք ուզում հենց այնպիսի մարդկանցով, վորոնք այժմ կան, վորոնք առանց յենթարկման, առանց վերահսկողության, առանց

«Հոկիչների ու հաշվապահների» կառավարվել չեն կարող: Բայց յենթարկվել պետք եւ բոլոր շահագործվողների ու աշխատավորների դինված ավանդարդին՝ պրոլետարիատին: Պետական չինովինիկների առանձնահատուկ «իշխումն» կարելի յեւ պետք եւ սկսել անմիջապես, մի որվա ընթացքում վորսարինել «հոկիչների ու հաշվապահների» հասարակ Փունկցիաներով, Փունկցիաներ, վորոնք այժմ եւ միանդամայն մատչելի յեն ընդհանրապես քաղաքացիների զարդարման մակարդակին և կարող են լիովին կատարվել «բանվորի աշխատավարձուի»:

Կազմակերպենք խոչըր արտադրությունը, յելակետ ունենալով այն, ինչ վոր արդեն ստեղծել և կապիտալիզմը, մենք ինքնիրս, բանվորներս, հենվելով մեր բանվորական փորձի վրա, ստեղծելով ամենախիստ յերկաթի դիսցիպլինա, վոր պահպանվելու յեւ զինված բանվորների պետական իշխանությամբ, պետական չինովինիկներին դարձնենք սոսկ մեր հանձնարարությունները կատարողներ, պատասխանառու, վոփիփոխելի, համեստ վարձատրություն ստացող «հրակիչներ ու հաշվապահներ» (իհարկե, ամեն տեսակի, կերպի ու աստիճանի տեխնիկների հետ միասին): —ահա մեր պրոլետարական խնդիրը, ահա ինչից կարելի յեւ և պետք եւ սկսել պրոլետարական հեղափոխություն կատարելիս: Այսպիսի սկզբնավորությունը, վորը հիմնված եւ խոչըր արտադրության բաղայի վրա, ինքնըստինքյան տանում և դեպի ամեն տեսակ չինովինիկության աստիճանական «մահացումը», դեպի հետզհետե այնպիսի կարդ ստեղծելը, —կարդ առանց չակերտների, կարդ, վոր նման չի վարձու ստրկության, —դեպի այնպիսի կարդ, յերբ հոկողության ու հաշվետվության ավելի ու ավելի պարզացող Փունկցիաները կատարեն բոլորը հերթով, ապա նրանք սովորություն կդառնան և, վերջապես, կվերանան իրրե հատուկ շերտի մարդկանց հատուկ Փունկցիաներ:

Անցյալ դարի յոթանասնական թվականների գերմանական մի սրամիս սոցիալ-դեմոկրատ վաստան անվանել եւ սոցիալիստական տնտեսության որինակ: Այդ շատ ճիշտ է: Այժմ փոստը մի տնտեսություն եւ, վոր կազմակերպված եւ

4. ԱԶԳԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

պետական-կազմիտալիստական մոնոպոլիայի տիպով։ Իմադեռիալիզմը հետզհետե բոլոր տրեստներն այդ տիպի կազմակերպության և փոխարկում։ Այստեղ՝ աշխատանքով ծանրաբեռնված ու սովահար «հասարակ» աշխատավորների գլուխն կանգնած են նույն բուրժուական բյուրոկրատիան։ Բայց այստեղ արդեն պատրաստ են հասարակական տնտեսավարության մեխանիզմը։ Տապալենք կապիտալիստներին, զինված բանվորների յերկաթե բազուկով կոտրենք այդ շահագործողների դիմադրությունը, ջարդուիչուր անենք արդի պետության բյուրոկրատական մեքենան—և մեր առաջ կանգնած կլինի «պարագիտից» ազատված, տեխնիկապես բարձր սարքավորված մի մեխանիզմ, վորը լիովին կարող են բանեցնել իրենք, միավորված բանվորները, վարձելով տեխնիկներ, հսկիչներ, հաշվապահներ, վարձատրելով նրանց բոլորի, ինչպես նաև առհասարակ բոլոր «պետական» պաշտոնյաների աշխատանքը բանվորի աշխատավարձով։ Ահա կոնկրետ, գործնական, բոլոր տրեստների վերաբերմամբ անմիջապես իրադրժելի խնդիր, վորն աշխատավորներին ազատում են շահագործումից, վոր հաշվի յի առնում կոմունայի՝ արդեն գործնականապես սկսած փորձը (Հատկապես պետական շինարարության բնագավառում)։

Ամբողջ ժողովրդական տնտեսությունը, կազմակերպված ինչպես վոստը, այն ձևով, վոր տեխնիկները, հսկիչները, հաշվապահները, ինչպես և բոլոր պաշտոնատար անձերը, «բանվորի աշխատավարձից» բարձր ոռնիկ չօտանանք և զինված պրոլետարիատի վերահսկողության ու զեկավարության ներքո գտնվեն, —ահա մեր ամենամերձավոր նպատակը։ Ահա թե ինչպիսի պետություն են անհրաժեշտ մեղ, և ինչպիսի անտեսական հիմունքով։ Ահա թե ինչ կտա մեզ պառամանաբարիզմի վոչնչացումն ու ներկայացուցչական հիմնարկների պահպանումը, ահա թե ինչը աշխատավոր դաստիարակներին կփրկի այդ հիմնարկների պոռնկացումից, վոր կատարում ե բուրժուազիան։

...«Ազգային կազմակերպության այն համառոտ ուրիշությում, վոր կոմունան ժամանակ չունեցավ մանրամասն մշակելու, միանգամայն վորշակի ասված ե, վոր կոմունան պետք ե նույնիսկ ամենափոքրիկ գյուղի քաղաքական ճեղ լինեց»... կոմունաներից պետք ե ընարվեր նաև «ազգային պատգամավորությունը» Փարլիզում։

...«Այն սակավաթիվ, բայց շատ կարևոր ֆունկցիաները, վորոնք ժամանակ գետ կմնային կենարոնական կառավարության համար, չպետք ե վերացվելին, —այդպիսի պնդումը դիմակալական կեղծիք եր, —ոչ ու պետք ե հանձնվելին կոմունալ, այսինքն խոսորեն պատասխանատու պաշտոնյաների ճեռքը»...

...«Ազգի միասնությունը վո՛չ թե պետք ե վոչնչացվեր, այլ, ընդհակառակը, կազմակերպվեր կոմունալ կառուցվածքի միջոցով։ Ազգի ժիամությունը պետք ե իրականություն դառնար՝ վոչնչացնելով այն ուղարկան իշխանությունը, վորն իրեն այդ միասնության մարմնացումն եր ցույց տալիս, բայց ուղղում եր ազգից անկախ, նրանից վեր կանգնած լինել։ Այդ պետական իշխանությունն իսկառեն միմիայն մակարուծական միջուն մի ուղղուցք եր ազգի մարմնի վրա»... «Խնդիրն այն եր, վոր կարվելին-դեռ զգվելին գին կառավարական իշխանության զուտ ճնշիչ որդանները, իսկ իրեն՝ հստաբակությունից բարձր կանգնած լինելու համակնություն ունեցող այդ իշխանության որինական ֆունկցիաները նրա ճեռքը խըլելին և հասարակության պատասխանատու պաշտոնյաների ճեռքը հանձնվելին»։

Թե վորքան չեն հասկացել—գուցե ալելի ճիշտ կլինի ասել՝ չեն կամեցել հասկանալ—արդի սոցիալ-դեմոկրատիայի ուղղությունին նախադրյալները Մարքսի այս գատողությունները, ամենից լավ ցույց ե տալիս ունենալատ Բերնշտայնի «Սոցիալիզմի նախադրյալներն ու սոցիալ-դեմոկրատիայի խընդիրները» հերոսարատորնեն հոչակավոր գիրքը։ Մարքսի չենց այդ մէջքերված խոսքերի առթիվ Բերնշտայնը գրում եր, թե այդ ծրագիրն «իր քաղաքական բովանդակությամբ բոլոր հյական գծերով մեծազույն նմանություն ե ցուցանիքը Պրուդոնի-Փեղերալիզմի հետ»... Զնայած Մարքսի ու «մանր բուրժուատ» Պրուդոնի (Բերնշտայնը «մանր բուրժուատ» չակերտների մեջ ե դնում, կարծելով, թե ժուառ չեղնանք ե արտահայտում) միջև յեղած մյուս բուրժուատի այնպահան այնքան մոտ ե միմյանց, վորքան հնագության ընթացքն այնքան մոտ ե միմյանց, վորքան հնագուր ե միայն։ Իհարկե, չարունակում ե Բերնշտայնը, րավոր

մունիցիալիտետների նշանակությունն աճում է, բայց «ինձ կասկածելի յե թվում, վոր դեմոկրատիայի առաջին խնդիրն արդի պետությունների այդպիսի վերացումն և (Auflösung —բառացի՝ ցրում, լուծում) և նրանց կաղմակերպության այնպիսի լիակատար փոփոխությունը (Umwandlung —հեղաշրջում), ինչպես պատկերացնում են Մարքսն ու Գրուգոնը. այն ե՝ ազգային ժողովի կազմումը գավառական կամ մարզային ժողովների պատղամավորներից, վորոնք իրենց հերթին պիտի կազմվեյին կոմունաների պատղամավորներից, —այնպես վոր միանդամայն պետք ե անհետանար ազգային ներկայացուցչությունների ամբողջ նախակին ձևը» (Բերնշտայն, «Նախադրյալներ», 1899 թ. գերմաներեն հրատարակություն, էջ 134 և 136):

Այս ուղղակի հրեշտավոր բան ե. Մարքսի հայացքները «պետական իշխանության—պարագիտի վոչնչացման» մասին չփոթե՛լ Պրուդոնի Փեղերալիզմի հետ: Բայց—այս պատահական չե, վորովհետև ոպորտունիստի մտքովն անդամ չի անցնում, վոր Մարքսն այստեղ ամենելին ել Փեղերալիզմի մասին չի խոսում իրեւ ցենտրալիզմի հակալչիո, այլ խոսում է հին, բուրժուական, բոլոր բուրժուական յերկրներում գոյություն ունեցող պետական մեքենան վշրելու մասին:

Ոպորտունիստի մտքով անցնում է միմիայն այն, ինչ վոր նա տեսնում է իր շուրջը, քաղքենիական առորյականության ու «ուժորմիստական» լճացման շրջանում, այն ե՝ միմիայն «մունիցիալիտետները»: Պրոլետարիատի հեղափոխության մասին ոպորտունիստը մտածելն անդամ մոռացել է:

Այդ ծիծաղելի յե: Բայց ուշագրավ ե, վոր այս կետի վերաբերմամբ Բերնշտայնի հետ չելին վիճաբանում: Շատերն են հերքել Բերնշտայնին, առանձնապես Պլեխանովը ուսուական, Կառուցկին յեվրոպական գրականության մեջ, — բայց վո՞չ մեկը, վո՞չ ել մյուսը չեն խոսել Մարքսի այս աղավաղման մասին, վոր կատարել ե Բերնշտայնը:

Ոպորտունիստն այնքան մոռացել է հեղափախականորեն մտածել և հեղափոխության մասին խորհրդածել, վոր նա

«Փեղերալիզմ» ե վերադրում Մարքսին, շփոթելով նրան անարխիզմի հիմնաղիքը Պրուդոնի հետ: Իսկ ուղղակառ մարքսիստ լինել, հեղափոխական մարքսիզմի ուսմունքը պաշտպանել ցանկացող կառուցկին ու Պլեխանովն այդ մասին լուս' մ են: Այստեղ ե թագնված մարքսիզմի ու անարխիզմի միջև յեղած տարրերությանը վերաբերող հայացքների այն ծայրահեղ գուցհակացման արմատներից մեկը, վոր հատուկ ե թե՛ կառուցկիականներին, թե՛ ոպորտունիստներին, և վորի մասին մենք դեռ պետք ե խոսենք:

Ֆեղերալիզմի հետք անդամ չկա Մարքսի՝ կոմունայի փորձին վերաբերող մեջբերված դատողությունների մեջ: Մարքսը համաձայնում է Պրուդոնին հենց այն բանում, ինչ վոր չի տեսնում ոպորտունիստ Բերնշտայնը: Մարքսը տարածայնում է Պրուդոնի հետ հենց այն բանում, վորի մեջ Բերնշտայնը նրանց նմանությունն ե տեսնում:

Մարքսը Պրուդոնի հետ համաձայն ե այն բանում, վոր նրանք յերկուսն ել արդի պետական մեքենան «ջարդուիչուր անելու» կողմնակից են: Մարքսիզմի այս նմանությունն անարխիզմի հետ (թե՛ Պրուդոնի, թե՛ Բակունինի հետ) չեն ուղում տեսնել վո՞չ ոպորտունիստները, վո՞չ կառուցկիականները, վորովհետև այդ կետում նրանք հեռացել են մարքսիզմից:

Մարքսն անհամաձայն ե թե՛ Պրուդոնի, թե՛ Բակունինի հետ հենց Փեղերալիզմի հարցում (ել չեմ խոսում պրոպրետարիատի դիկտատուրայի մասին): Անարխիզմի մանրեւորժուական հայացքներից Փեղերալիզմը բղիում ե սկզբունքորեն: Մարքսը ցենտրալիստ ե: Յեվ նրա մեջ բերված դատողությունների մեջ վոչ մի շեղում չկա ցենտրալիզմից: Միմիայն այն մարդիկ, վորոնք լի յեն քաղքենիական «սնահավատ հավատով» դեպի պետությունը, կարող են բուրժուական¹ մեքենայի վոչնչացումը ցենտրալիզմի վոչնչացումը համարել:

Եւ, իսկ յեթե պրոլետարիատն ու ամենաչքավոր գյուղացիությունն իրենց ձեռքն առնեն պետական իշխանությունը, լիովին աղատորեն կաղմակերպվեն ըստ կոմունաների

1 Զենագրում այնուհետեւ հետևում ե, «պետական»:

և բոլոր կոմունաների գործողությունը միացնեն կապիտալը հարվածելու, կապիտալաստերի գիմաղրությունը խորտակելու, յերկաթուղիների, գործարանների, հողի և այլն մասնավոր սեփականությունն ամբողջ ազգին, ամբողջ հասարակությանը հանձնելու համար,—մի՞թե այդ ցենտրալիզմ չի լինի, մի՞թե այդ ամենահետեւողական դեմոկրատական ցենտրալիզմ չի լինի, և այն ել՝ պրոլետարական ցենտրալիզմ:

Ենքնչտայնը պարզապես չի կազողանում գլխի ընկնել, վոր հասրավոր և կամավոր ցենտրալիզմ, կոմունաների հոժարակամ միավորումն իրեւ մի ազգ, պրոլետարական կոմունաների կամավոր ձուլումն բուրժուական տիրապետությունը և բուրժուական պետական մեքենան խորտակելու համար: Ինչպես ամեն մի ֆիլիստերի, Բերնչտայնին ել ցենտրալիզմը պատկերանում է իրեւ այնպիսի մի բան, վոր կարելի յև միմիայն վերելից, միմիայն չինունիկության ու զինվորականության միջոցով փաթաթել ժողովրդի վեհին ու պահպանել:

Մարքսը դիտմամբ, կարծես նախատեսելով իր հայացքների աղավաղման հնարավորությունն, ընդդում ե, թե դիտակցական կեղծիք են հանդիսանում կոմունայի հասցեյին այն մեղադրանքները, իրը թե կոմունան ուղղում եր վոչնչացնել ազգի միասնությունը, վերացնել կենտրոնական իշխանությունը: Մարքսը դիտմամբ գործ ե ածում «կաղմակերպել ազգի միասնությունն» արտահայտությունը, վորպեսի դիտակցական, դեմոկրատական, պրոլետարական ցենտրալիզմը հակադրի բուրժուական, զինվորական, չենունիկական ցենտրալիզմին:

Բայց... ամեն տեսակ խուլից վատթարը նա յե, ով չի ուղղում լսել: Իսկ Հատկապես արդի սոցիալ-դեմոկրատիայի ոպրտունիստները լսել չեն ուղղում պետական իշխանությունը վոչնչացնելու, պարագիտը կտրել-դեն դցելու մասին:

5. ՊԱՐԱԶԻՏԻ, ԱՅՆ Ե՛ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Մենք արդեն մեջ բերինք Մարքսի համապատասխան խոռքերը և պետք ել լրացնենք դրանք:

...«Նոր պատմական ստեղծագործության սովորական ճակատագիրն այն ե,—զրում եր Մարքսը,—վոր այն համարում են հասարակական կանքի ալելի հին ու մինչև անդամ իրենց ժամանակն անցկացրած ձևերի ընդորինակումը, վորոնց փոքրիշատե նման են նոր հիմնարկները: Այդպես ել այս նոր կոմունան, վորը կոտրում ե (bricht—ջարդում ե) արդի պետական իշխանությունը, դիմում երեւ միջնադարյան կոմունաների վերակենդանացում, ... իրեւ մանր պետությունների միություն (Մոնտեսքո, Ժիրոնդիստներ), ... իրեւ ծայրահեղ կենտրոնացման դեմ մզվող հին կալի չափազանցված ձեւը»...

...«Կոմունալ կառուցվածքը հասարակական մարմնին կվերադաճներ այն բոլոր ուժերը, վորոնք մինչև այժմ լափում եյին այդ պարագիտական ուռուցք «պետությունը», վորը սնվում ե հասարակության հաշվին և կասեցնում նրա ազատ շարժումը: Միայն այս զործով նա արդեն նպաստած կլիներ մթանությանը վերածնությանը»...

...«Կոմունալ կառուցվածքը դյուզական արտադրողներին կենթարկեր յուրաքանչյուր մարդի դիմավոր քաղաքների հոգկոր զեկավարությանը և այսաեղ նրանց համար կազահովեր, ի դեմս քաղաքային բանվորների, իրենց շահերի բնական ներկայացուցիչներին: Հենց կոմունայի գոյությունն իսկ եւս, իրեւ ինքնըսահնքյան համականալի մի բան, տեղական ինքնաշխարություն եր բերում, բայց այլևս վոչ իրեւ հակակըու պետական իշխանության, վորն այժմ ալելորդ ե դառնում»:

«Պետական իշխանության վոչնչացումն», վոր «պարագիտական ուռուցք եր», նրա «կտրել-դեն նետելլը», «նրա խորտակումը», «պետական իշխանությունն այժմ ալելորդ ե գառնում»,—ահա թե ինչ արտահայտություններով եր խոսում Մարքսը պետության մասին, զնահատելով ու վերլուծման յենթարկելով կոմունայի փորձը:

Այս ամենը գրված է գրեթե կես գար առաջ, և հիմա, կարծես, պեղումներ պետք ե կատարել, վորպեսզի չաղավաղված մարքսիզմը լայն մասսաների դիտակցության հասցնենք: Այն յեղակացությունները, վոր արված են Մարքսի ապրած վերջին մեծ հեղափոխության վրա կատարված դիտողություններից, մոռացել են հենց այն ժամանակ, յերբ հասել ե պրոլետարիատի հետագա մեծ հեղափոխությունների ժամանակը:

...«Մեկնարանությունների այն բազմազանությունը, վոր առաջ ե թերել կոմունան, և շահերի այն բաղմականությունը, վորոնք իրենց արտահայտությունը զտան նրա մեջ, ապացուցում են, վոր նա վերին աստիճանի ձկուն քաղաքական մի եր, մինչդեռ կառավարության բոլոր նախկին ձեւերը, ըստ իրենց ելության, ճնշման ձեւեր եյին: Նրա

իսկական գաղտնիքն ահա թե ինչ եր. նա, ըստ Եյության, բանվոր դաստկարդի կատալարությունն իր, արտադրող դաստկարդի կովկի արդյունքը յուրացնող դաստկարդի գեմ, վերջապես հայտնագործված այն քաղաքական ձևը, վորի ժամանակ կարող եր իրականանալ աշխատանքի տնտեսական աղասաղբությունը»...

«Առանց այս վերջին պայմանի՝ կոմունալ կառուցվածքն անկարել լիություն ու խարեւություն կլիներ»...

Ուսուլիստներն զբաղվում եյին այն քաղաքական ձև-վերի «հայտնագործումով», վորոնց ժամանակ պետք է տե-ղի ունենար հասարակության սոցիալիստական վերակառու-ցումը: Անարխիստներն իրենցից վանում եյին քաղաքական ձևերի հարցն ընդհանրապես: Արդի սոցիալ-դեմոկրատիայի ոպորտունիստները պառլամենտական դեմոկրատական պե-տության բուրժուական քաղաքական ձևերն ընդունել են իրեն մի սահման, վորից այն կողմն անցնել չի կարելի, և այդ «նմուշի» առաջ աղոթելով՝ կոտրել են իրենց ճա-կատը, անարխիզմ են հայտարարել այդ ձևերը զարդու-փշուր ամեն մի ձգտում:

Սոցիալիզմի ու քաղաքական պայքարի ամբողջ պատ-մությունից Մարքսն այն յեղբակացությունը հանեց, վոր պետությունը պետք է անհետանա, վոր նրա անհետանա-լուն անցնելու ձևը (պետությունից վոչ-պետության անց-նելը) պիտի լինի «իբրև տիրապետող դասակարդ կազմա-կերպված պրոլետարիատը»: Բայց Մարքսը չեր ձեռնար-կում հայտնագործելու այդ ապագայի քաղաքական մեքը: Նա սահմանափակվում էր Փրանսական պատմության ճշ-դրիտ դիտողությամբ, նրա վերլուծմամբ ու այն յեղբա-կացությամբ, վորին բերում եր 1851 թիվը, այն ե՛ թե գործը հասնում է բուրժուական պետական մեքենան խոր-տակելուն:

Յեկը յերբ պրոլետարիատի մասսայական հեղափոխա-կան շարժումը բոնկվեց, Մարքսը, չնայած այդ շարժման անհաջողության, չնայած նրա կարճատևության ու ակըն-բախ թուլության, սկսեց ուսումնասիրել, թե նա ինչ ձե-վեր է հայտնագործել:

Կոմունան—պրոլետարական հեղափոխության «վերջա-պես հայտնագործած» այն ձևն ե՛, վորի ժամանակ կարող

և իրականանալ աշխատանքի տնտեսական ազատազրու-թյունը:

Կոմունան պրոլետարական հեղափոխության առաջին փորձն ե՛ զարդուփշուր ամելու բուրժուական պետական մեքենան և «վերջապես հայտնագործված» քաղաքական այն ձևն ե՛, վորով կարելի յե ու պետք ե փոխարինել զարդու-փշուր արվածը:

Հետագա շարադրանքի ընթացքում մենք կտեսնենք, վոր 1905 ու 1917 թվականների ոսւսական հեղափոխու-թյունները, այլ պարագաներում, այլ պայմանների առկա-յությամբ, շարունակում են կոմունայի գործը և հաստա-տում Մարքսի հանճարեղ պատմական վերլուծությունը:

IV ԳԼՈՒԽ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ: ԵՆԳԵԼՍԻ ԼՐԱՑՈՒՑԻՉԻ ՊԱՐՁԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոմունայի փորձի նշանակության հարցի առթիվ Մարքսը տվել է այն, ինչ վոր Հիմնական է: Ենդելու շատ անդամ շոշափել ե նույն թեման, պարզաբանելով Մարքսի վերլուծությունն ու յեղակացությունները, յերեմն այնպիսի ուժով ու ցցունությամբ ե լուսաբանել հարցի մյուս կողմերը, վոր այդ պարզաբանությունների վրա անհրաժեշտ ե առանձին կանդ առնել:

1. «ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ ՀԱՐՑԸ»

Բնակարանային հարցին նվիրված իր յերկում (1872 թվին) Ենգելսն արդեն հաշվի յե առնում Կոմունայի փորձը, միջանի անդամ կանդ առնելով այն խնդիրների վրա, վոր ունի հեղափոխությունը պետության նկատմամբ: Հետաքրքրական ե, վոր կոնկրետ թեմայով ակներեաբար պարզվում են, մի կողմից, պրոլետարական պետության նմանության գծերն այժմյան պետության հետ, — գծեր, վորոնք յերկու դեպքում ել Հիմք են տալիս խոսելու պետության մասին, — իսկ մյուս կողմից, տարբերության գծերը կամ անցումը դեպի պետության վոչնչացումը:

«Ի՞նչպես լուծել բնակարանային հարցը: Արդի հասարակության մեջ այդ ճիշտ այնպես ե լուծվում, ինչպես ամեն մի այլ հասարակական հարց, — պահանջի ու առաջարկի անտեսական աստիճանական հավասարեցումը, իսկ այդ այնպիսի մի լուծում ե, վոր ինքը շարունակ նորից ե ծնում հարցը, այսինքն՝ վոչ մի լուծում չի տալիս: Թե ինչպես կլուծի այդ հարցը սոցիալական հեղափոխությունը, այդ կախած ե վոչ միայն ժամանակի ու տեղի պարագաներից, այլ կաված ե նաև

շատ ավելի հեռու զնացող հարցերի հետ, վորոնց մեջ կարևորագույններից մեկն ե — քաղաքի և զյուղի միջև յեղած հակադրությունն վոչնչացնելու հարցը: Քանի վոր մենք պարագանակության կառուցման ուստոպիական սիստեմներ հորինելով չենք զբաղվում, ապա դրա վրա կանդ առնելն ավելի քան պարագանակության կամ անկանակած ե, — այդ այն ե, վոր արդեն այժմ մեծ քաղաքներում բավականաշախ բնակելի չենքը կամ և անմիջապես կարելի յե բավարարել բնակարանային իրական կարիքը, յեթե այդ չենքը ինեւացի կերպով ողտագործվեն: Հասկանալի յե, այդ կարելի յե իրականացնել միմիայն այժմյան տերերին սեփականապրելու միջոցով և այդ տերում անտուն բանվորներին կամ չափից ավելի գերցված բնակարաններում ապրող բանվորներին բնակեցնելով: Յեկ հետո վոր պրոլետարիատը քաղաքական իշխանությունը նվազի, այդպիսի միջոցառումը, վոր հասարակական ողտի շահերից ե բլիփում, նույնօք հեշտ իրադրծելի կլինի, վորքան արդի պետության ճեռքով կատարվող մյուս սեփականապրելումներն ու բնակարանների գրավումը» (1887 թ. գերմ. հրատարակություն, էջ 22):

Այստեղ չի քննարկվում պետական իշխանության ձեռվի փոփոխությունը, այլ նկատի յե առնվում միմիայն նրա գործունեյության բովանդակությունը: Այժմյան պետության կարգադրությամբ ել սեփականապրելումները ու բնակարանների գրավումներ են կատարվում: Պրոլետարական պետությունն ել, գործի ձեսական տեսակետից, «կկարգադրի» գրավել բնակարաններն ու եքսպլուատիվայի յենթարկել տները: Բայց պարզ ե, վոր հին գործադիր ապարատը, բուրժուազիայի հետ կապված չինովնիկությունը պարզապես անպետք կլիներ պրոլետարական պետության կարգադրությունները կենսագործելու համար:

...«Անհրաժեշտ ե հավատական, վոր աշխատավոր ժողովրդի կողմից աշխատանքի բոլոր դորժիքներին, ամրուց արդյունաբերությանը փաստորն տիրանալը՝ պրոլետանիուսական «հետպատճան» ուղղակի հակադրությունն ե հանդիսանում: Վերջին դեպքում՝ առանձին բանվորը բնակարանի, զյուղացիական հողամասի, աշխատանքի գործիքի սեփականատեր ե դանում: Իսկ առաջին դեպքում՝ տների, գործարանների ու աշխատանքի գործիքների հավաքական սեփականատերը մնում ե հաշխատանքի ժողովուրդը»: Այդ աներից, գործարաններից և այլն ողտովել, գոնեն անցման շրջանում, հազիվ թե թուլատրվի անհատներին ու ընկերություններին առանց ծախքերը վճարելու: Ճիշտ այդպես ել և հոգային սեփականատության վոչնչացումը չի յենթարկում հողային ունատայի գոչնչացումը, այլ նրա հանձնումը հասարակությանը, թեպետի փոխակերպված ձեռվից: Հետեւաբար, աշխատավոր ժողովրդի հողմից աշխա-

տանքի բոլոր գործերներին վաստավես տեր դառնալն ամենեին չի բացառում, վոր պահպանվի վարձով վերցնելն ու վարձով տալը» (Եջ 69):

Այս դատողության մեջ շոշափված հարցը, այն է՝ պետության մահացման անտեսական հիմունքները մենք կքննարկենք հետեւյալ գլխում: Ենդելսը չափազանց զդուշ ե արտահայտվում, ասելով, թե պրոլետարական պետությունը «Հաղիկ թե» առանց վճարի բնակարաններ բաժանի, «ըստն անցման շրջանում»: Ամբողջ ժողովրդին պատկանող բնակարաններն առանձին ընտանիքներին վարձով տալը յենթադրում ե թե՛ այդ վարձի գանձում, թե՛ վորոշ վերահսկողություն, թե՛ բնակարանների բաշխման այս կամ այն նորմայի մշակում: Այդ բոլորը պահանջում են պետության վրոշ ձև, բայց ամենեին չի պահանջում առանձին ռազմական ու բյուրոկրատական ապարատ՝ պաշտոնատար անձերի հատուկ արողոյալ դրությամբ: Իսկ իրերի այնպիսի դրությանն անցնելը, յերբ կարելի կլինի բնակարանները ձրի բաժանել, կարգված են պետության լիակատար «մահացման» հետ:

Խոսելով այն մասին, վոր բլանկիստները կումունայից հետո ու նրա փորձի ազդեցությամբ անցան մարքսիզմի սկզբունքային դիրքին, Ենդելսն անցողակի հետեւյալ կերպով են ձեւակերպում այդ դիրքը.

...«Պրոլետարիատի քաղաքական գործողության ու նրա գլխաւորությի անհրաժեշտությունն, իրեւ անցում դեմք գասակարգերի, իսկ երանց հետ միասին նաև պետության վերացումը...» (Եջ 55):

Տառացի քննադատության ինչ-վոր սիրահարներ կամ «մարքսիզմը վոչնչացնող» բուրժուական հեղինակներ, թերեւս, հակասությունն կհամարեն այն, վոր այստեղ, «Անտի-Դյուրինդից» վերը մեջքերված հատվածում, ընդունվում են «պետության վերացումը», բայց այդպիսի Փորմուլան ժխավում ե իրեւ անարխիստական: Զարմանալի չեր լինի, յեթե ոպորտունիստները Ենդելսին ել «անարխիստների» շարքը դասելին, —այժմ ավելի ու ավելի յետ տարածվում ինտերնացիոնալիստներին անարխիզմի մեջ մեղադրելը սութիւղինիստների կողմից:

Վոր դասակարգերի վերացման հետ միասին տեղի կու-

նենա նաև պետության վերացումը, այդ բանը միշտ ուսուցել ե մարքսիզմը: «Պետության մահացման» մասին «Անտի-Դյուրինդում» գանված հանրածանոթ հատվածը անարխիստներին մեղադրում ել վո՛չ թե սոսկ այն բանում, վոր նրանք պետության վերացման կողմնակից են, այլ նրանում, վոր նրանք քարոզում են, թե իրը հնարավոր ե վերացնել պետությունը «այսորվանից մինչեւ եգուց»:

Նկատի առնելով այն, վոր ներկայումս տիրապետող «սոցիալ-դեմոկրատական» դոկտրինան բոլորովին ազավաղում ե մարքսիզմի վերաբերմունքը գեպի անարխիզմը՝ պետության վոչնչացման հարցի վերաբերմամբ, առանձնապես ոգտակար ե հիշեցնել Մարքսի ու Ենդելսի մի բանավեճը անարխիստների հետ:

2. ԲԱՆԱՎԵՃԱԿԱՐԱԿԱՆ ԱՆԱՐԽԻՍՏՆԵՐԻ ՀԵՏ

Այդ բանավեճը տեղի յեւ ունեցել 1873 թվին: Մարքսն ու Ենդելսը հոգվածներ ելին տվել խտալական սոցիալիստական ժողովածուին պրուդոնիստների, «ավտոնոմիստների» կամ «անտիավտորիտարիստների» դեմ և միմիայն 1913 թվին այդ հոգվածները գերմաներեն թարգմանությամբ լույս տեսան «Neue Zeit»-ում²:

...«Յեթև բանվոր դասակարգի քաղաքական կոմիսը, —որում եր Մարքսը, —ծաղրելով անարխիստներին ու քաղաքականության ժխտումը նրանց կողմից, —հեղափոխական ձևեր և ընդունում, յեթև բանվորները բուրժուազիայի դիկտատուրայի տեղին իրենց հեղափոխական դիկտատուրան են զնում, ապա նրանք սկզբունքների անարգման մի սոսկակի վոչիր են կատարում, վորովհետեւ որվա իրենց խղճուկի, կոպիտ պահանջներին բավարարություն տալու համար, բուրժուազիայի դիմադրությունը խորակելու համար, բանվորները պետությունը հեղափոխական անցողիկ ձև են տալիս, փոխանակ զենքը վայր զնելու և պետությունը վերացնելու»... («Neue Zeit», 1913—1914, 32-րդ տարի, Հատոր I, Եջ 40):

Ահա թե պետության ինչպիսի «վերացման» դեմ երացաւալես ծառանում Մարքսը, Ենդելսը անարխիստների թեորիական

1 «Neue Zeit»—գերմանական սոցիալ-դեմոկրատիայի թեորիական որդպանը:

ըին։ Նա բոլորովին այն բանի դեմ չեր յենում, վոր պետությունն անհետանալու յև դասակարգերի անհետացման հետ միասին կամ կվերացվի նրանց վերացման հետ միասին, այլ նա դեմ եր, վոր բանվորները հրաժարվեն զենք գործածելուց, կազմակերպված բռնությունից, այսինքն այնպիսի պետությունից, վոր պետք ե ծառայի «բուրժուազիայի դիմադրությունը խորտակելու» նպատակին։

Մարքու դիմագր ընդգծում ե պրոլետարիատի համար անհրաժեշտ պետության «Հեղափոխական ու անյօդիկ ձեւվը», վորպեսզի չաղավաղեն անարխիզմի դեմ նրա մղած պայքարի խսկական խմասու։ Պրոլետարիատին պետությունը պետք ե միմիայն ժամանակավորապես։ Մեր ու անարխիստների միջև ամենեին տարածայնություն չկա պետության վերացման հարցի մասին, վորչափ խնդիրը վերաբերում ե այդ վերացմանն իրքև նպատակի։ Մենք պնդում ենք, վոր այդ նպատակին հաւնելու համար անհրաժեշտ ժամանակավորապես ոգտվել պետական իշխանության զենքերից, միջոցներից, գործելակերպից՝ չահագործողների դեմ, ինչպես վոր դասակարգերի վոչչացման համար ել անհրաժեշտ և ճնշված դասակարգի ժամանակավոր դիկտատուրան։ Անարխիստների դեմ Մարքու հարցերը գնում ե ամենակտորուկ ու ամենապարզ ձևով։ արդյոք բանվորները «ցա՞ծ պիտի դնեն զենքը» կապիտալիստների լուծը թոթակելիս, թե՞ այն ողտագործեն կապիտալիստների դեմ, վորպեսզի նրանց դիմադրությունը խորտակեն։ իսկ մի դասակարգի կողմից մյուս դասակարգի դեմ զենքը սիստեմատիկ կերպով ողտագործեն ի՞նչ բան ե, յեթե վոչ պետության «անցողիկ ձևը»։

Թող ամեն մի սոցիալ-դեմոկրատ հարց տա իրեն։ արդյոք այդպես և դրել ինքը պետության հարցը անարխիստների դեմ բանակուիլ մղելիս։ արդյոք այդպես և դրել հարցը Յերկրորդ հնտերնացիոնալի պաշտոնական սոցիալիստական կուսակցությունների ահագին մէծամասնությունը։

Ենդելու չատ ավելի մանրամասն ու հանրամատչելի կերպով ե շարադրում միևնույն մաքերը։ Ամենից առաջ նա

ծաղրում ե մտքերի շփոթությունը պրուդոնիստների մոտ, վորոնք իրենց «անտիավտորիխուսու» եյին անվանում, այսինքն՝ ժխտում եյին ամեն տեսակ հեղինակություն, ամեն տեսակ հպատակում, ամեն տեսակ իշխանություն։ Վերցրե՛ք գործարանը, յերկաթուղին, նավը բաց ծովում, —ասում ե Ենդելու, —մի՞թե պարզ չե, վոր առանց վորոշ հպատակման, հետեւարար, առանց վորոշ հեղինակության կամ իշխանության չի կարող գործել և վոչ մեկն այդքարդ տեխնիկական ձեռնարկություններից, վորոնք հիմնը վագած են մեքենաների գործադրության ու բազմաթիվ անձերի պլանաչափ աշխատակցության վրա։

...«Յեթե յես, —զրում ե Ենդելու, —ամենակատաղի անտիավտորիխուսուների զեմ առաջ եմ մղում այս փաստարկները, առա նրանք կարող են ինձ միմիայն հետեւալ պատասխանը տալ. «Ա՛յ, այդ ճշշտե, բայց խոսքն այսուղե այն ավտորիխուսի մասին չե, վորով մենք ոժառում ենք մեր պատղամավորներին, այլ վորոշ հանձնարարության մասին։ Այդ մարդիկ կարծում են, թե մենք կարող ենք վորու իր վուել, յեթե փոխենք նրա անունը»...»

Այս կերպով ցույց տալով, վոր ավտորիխուսուն ու ավտոնոմիան հարաբերական հասկացողություններ են, վոր նրանց գործադրության ասպարեզը փոխվում ե հասարակական զարգացման տարրեր փուլերի հետ, վոր անհեթեթյունը ուն ե նրանց արսուլուտ համարելու, ավելացնելով, վոր մեքենաների գործադրության ու խոշոր արտադրության մարզը շարունակ ընդարձակվում ե, Ենդելուն ավտորիխուսութիւն վերաբերող ընդհանուր դատողություններից անցնում ե պետության հարցին։

...«Յեթե ավտոնոմիաստները, —զրում ե նա, —կամենային միայն այն առել, թե սպազմայի սոցիալական կազմակերպությունը թույլ ե տալու ավտորիխուս միմիայն այն սահմաններում, վորոնք անխօսափելութեն թելարկում են արտադրության պայմաններով, այդ գեղքում նրանց հետ գետ կտրելի կլիներ ընդհանուր լեզու դանել։ Բայց նրանք կույր են այն բոլոր փաստերի նկատմամբ, վորոնք անհրաժեշտ են գարձնում ավտորիխուսը, և բուռն կերպով պայքարում են բարի դեմ։

«Ինչո՞ւ անտիավտորիխուսուները չեն սահմանափակվում նրանով, վոր աղմկում են քաղաքական ավտորիխուսի դեմ, պետության դեմ։ Բոլոր սոցիալամատները համաձայն են, վոր պետությունը, իսկ նրա հետ միասին նաև քաղաքական ավտորիխուսը, կանհետանան ապազա սոցիա-

Հական հեղափոխության հետևանքով՝ այսինքն՝ հասարակական ֆունկցիաները կլողացնեն իրենց քաղաքական բնույթը և կդառնան սոցիալական շահերի վրա հսկող հասարակ վարչական ֆունկցիաներ։ Բայց անտիքամորիտարիստները պահանջում են, վորպեսզի քաղաքական պետությունը վերացվի մի հարվածով, վերացվի ավելի վաղ, քան այն սոցիալական հարաբերությունները, վորոնք ծնել են նրան։ Նրանք պահանջում են, վորպեսզի սոցիալական հեղափոխության առաջնն գործությունը ավտորիստակ վերացումը լինի։

«Արդյոք յերեսնեց հեղափոխություն տեսե՞լ են այդ պարաները։ Անսարակույց հեղափոխությունն ամենաավտորիստար բանն է, ինչպիսին միայն հարաբերությունը մի գործողություն է, վորով բնակչության մի մասն իր կամքը մյուսի զզին և փաթաթում։ Հրացանների, սվինների, թնդանոթների, այսինքն չափազանց ալտորիստար միջոցների սպնությամբ։ Յեկ հաղթող կուսակցությունն անհրաժեշտարար հարկադրված և լինում պահպանել իր տիրապետությունն այն սարսափի միջոցով, վոր ներշնչում և ուսակցիոներներին նրա զենքը։ Յեթե Փարեզի կոմունան զինված ժողովրդի հեղինակության վրա չհենվեր ընդգեմ բռութուազիայի, մի՞թե նա կարող եր մի որդանից ավելի կյանք ունենալ։ Իրավունք չունենք մենք, ընդհակառակը, կշտամբելու կոմունային բանի բանի համար, վոր նա չափազանց քիչ եր ոգովում այդ հեղինակությունը։ Աղօնս ուրեմն՝ յերկուսից մեկը։ Կամ ալտորիստարիստներն իրենք ել չգիտեն, թե ինչ են ասում, և այդ գեղքում նրանք լոկ հասանալիքություն են սերմանում։ Կամ նրանք գիտեն այդ, և այդ գեղքում նրանք դավաճանում են պրոլետարիատի զործին։ Յերկու գեղքում ել նրանք ծառայում են միմիայն ուսակցիային» (Եջ 39)։

Այս դասողության մեջ շոշափված են այն հարցերը, վորոնք պետք ե քննարկվեն պետության մահացման ժամանակ քաղաքականության ու եկոնոմիկայի ունեցած հարաբերության թեմայի կապակցությամբ (այլ թեմային նվիրված ե հետեւյալ գլուխը)։ Դրանք են՝ հասարակական ֆունկցիաները քաղաքական ֆունկցիաներից հասարակ վարչական ֆունկցիաներ դառնալու և «քաղաքական պետության» հարցերը։ Այս վերջին արտահայտությունը, վոր առանձնապես կարող ե թյուրիմացություն առաջ բերել, մատնանշում և պետության մահացման պրոցեսը։ մահացող պետությունը նրա մահացման վորոշ աստիճանի ժամանակ կարելի յե վոչ-քաղաքական պետություն անվանել։

Ենդեւսի այս դատաղության մեջ ամենից ավելի ուշադրությալ հարցադրումն ե անարխիստների դեմ։

Այն սոցիալ-դեմոկրատները, վորոնք ուզում են Ենդեւսի աշակերտները լինել, 1873 թվից սկսած միլիոն անդամ վիճել են անարխիստների դեմ, բայց վիճել են հատկապես վոչ այնպես, ինչպես կարելի յե ու պետք ե վիճեն մարդությունները։ Անարխիստների պատկերացումը պետության վերացման մասին խառնաշփոթ և և վոչ-հեղափոխական, — ահա թե ինչպես եր դնում հարցն Ենդեւսը։ Հենց հեղափոխությունն ե իր ծագման ու զարգացման ընթացքով, բռնության, ավտորիստակի, իշխանության, պետության վերաբերմամբ ունեցած իր առանձնահատուկ խնդիրներով, վոր չեն ուզում տեսնել անարխիստները։

Արդի սոցիալ-դեմոկրատների մոտ անարխիզմի սովորական քննադատություննը հանդել ե ամենազուտ քաղենիական գուեկության։ «մենք իրը ընդունում ենք պետությունը, իսկ անարխիստները չե՞ն ընդունում»։ Հասկանալի յե, վոր այդպիսի գուեկությունը չի կարող չվանել փոքրիչատե մտածող ու հեղափոխական բանվորներին։ Ենդեւսն ուրիշ բան ե ասում։ նա ընդդժում ե, վոր բոլոր սոցիալիստներն ընդունում են պետության անհետացումն իրեւ սոցիալիստական հեղափոխության հետեւնք։ Այնուհետեւ նա կոնկրետ կերպով դնում ե հեղափոխության հարցը, հատկապես այն հարցը, վորը սովորաբար սոցիալ-դեմոկրատները ուղղուանիզմից գրղված, շրջանցում են, վոր այդ հարցն այսպես ասած «մշակեն» բաթողներով, վոր այդ հարցն այսպես անարխիստները։ Յեկ այս հարցը դնելով, Ենցառապես անարխիստները։ Յեկ այս հարցը դնելով, Ենցառապես անարխիստներից յեղջյուրներից ե բոնում։ արդյոք կոմունան չպի՞տք ե ավելի շատ ոգովիր պետության, այսինքն՝ դիմումած, իրեւ տիրապետող դաստիարակ կազմակերպիչառաջական պետության իշխանությունից։

Տիրող պաշտոնական սոցիալ-դեմոկրատիան հեղափոխության մեջ պրոլետարիատի ունեցած կոնկրետ խնդիրը հարցից իր գլուխը սովորաբար ազատում եր կամ սոսկ Փիլիստերի ծաղրանքով, կամ, լավագույն գեղքում՝ խուսափողական սովետական «բանը բան ցույց կտա» Փրազով։ Յեկ անարխիստներն իրավունք ելին ստանում

խոսելու այդպիսի սոցիալ-դեմոկրատիայի դեմ, թե նա դավաճանում է բանվորներին հեղափոխական դաստիարակություն տալու իր խնդրին: Ենդեւմն ոգտագործում է վերջին պրոլետարական հեղափոխության փորձը հենց այն բանի համար, վոր ամենակոնկրետ կերպով ուսումնասիրի, թե պրոլետարիատն ի՞նչ ու ի՞նչպես պիտի անի թե՛ բանկերի և թե՛ պետության վերաբերմամբ:

3. ՆԱՄԱԿ ԲԵԲԵԼԻՆ

Մարքսի ու Ենդելի՝ պետության հարցին նվիրված յերկերում ամենառաջադրավ դատողություններից մեկը, յեթե վոչ ամենառաջադրավը, հետեւյալ հատվածն է այն նամակից, վորն ուղղել ե Ենդելու 1875 թվի մարտի 18—28-ին: Այս նամակը,—փակադերի մեջ նկատենք,—տպագրել ե, վորքան մենք գիտենք, առաջին անգամ Բերելն իր հիշողությունների («Իմ կյանքից») յերկրորդ հատորում, վոր լույս տեսել 1911 թ., այսինքն՝ գրվելուց և ուղարկվելուց 36 տարի անցնելուց հետո:

Քննադատելով Գոթայի ծրագրի հենց այն նախադիմը, վոր քննադատել ե նաև Մարքսը Բրակելյին ուղղած իր հոչակալոր նամակում, և չոչափելով հատկապես պետության հարցը, Ենդելու գրում եր Բերելին հետեւյալը.

...«Ազատ ժողովրդական պետությունն ազատ պետության փոխարկեց: Այդ բառերի քերականական իմաստի համաձայն՝ ազատ պետությունն այնպիսի պետություն է, վորի մեջ պետությունն ազատ և իր քաղաքացիների վերաբերմամբ, այսինքն բռնակալական կառավարություն ունեցող պետություն է: Պետք եր մի կողմ նետել այդ ամրող շաղակարատությունը պետության մասին, մանավանդ կոմունայից հետո, վորն արդեն բռն իմաստով պետություն չեր: Անարխիստները «ժողովրդական պետությամբ» ավելի քան բավականաշատ ծակել են մեր աչքերը, թեև արդեն Մարքսի յերկը Պրուդոնի դեմ, և ապա «կոմունիստական մանիֆեստ» ուղղակի ասում են, թե սոցիալիստական հասարակակարդ մըսոցնելու հետ պետությունն ինք լրեն լուծվում (sich auflöst) և անհետանում է: Վորովչետե պետությունը միմիայն մի անցողիկ հիմնաբեկություն է, վորից հարկ է լինում ոգտվել պայքարի մեջ, հեղափոխության ընթացքում՝ իր հակառակորդներին բռնությամբ ճնշելու համար, ուստի ազատ ժողովրդական պետության մասին խոսելը զուտ անմտություն է. քանի պրոլետարիատը գեռ կարիք ունի պետության, նա ապ-

ռաւթյան շահերի համար չե, վոր զգում ե նրա կարիքը, այլ իր հակառակորդներին ճնշելու համար, իսկ յերբ հնարավոր և դատություն ամսին խոսել, այն ժամանակ պետությունն, իբրև այդպիսին, դադարում ե գոյություն ունենալուց: Այդ պատճառով ել ժենք կառաջարկելինք ամենուրեք պիտույքան բառի տեղ դնել «Համայնք» Gemeinwesen) բառը, գեղեցիկ հին գերմաներին մի բառ, վոր համապատասխանում ե Գրանսերն «կոմունա» բառին» (գերմաներին բնագիր, եջ 332):

Պետք ե նկատի ունենալ, վոր այս նամակը վերաբերում ե կուսակցական այն ծրագրին, վոր Մարքսը քընթալատել եր այս նամակից ընդամենը միքանի շարաթ հետո թվագրված իր նամակում (Մարքսի նամակը գրված է 1875 թ. մայիսի 5-ին), և վոր Ենդելուն այն ժամանակ Մարքսի հետ միասին Լոնդոնում եր ապրում: Ուստի, վերջին Փրազում «մենք» ասելով, Ենդելուն, անկասկած, իր ու Մարքսի անունից ե առաջարկում գերմանական բանվորական կուսակցության առաջնորդին՝ ծրագրից դուրս գցել «պետություն» բառը և փոխարինել այն «համայնք» բառով:

Ի՞նչպիսի վոռնոց կբարձրացնելին «անարխիզմի» մասին՝ ոպորտունիստներին հարմարեցնելու համար կեղծած այժմյան «մարքսիզմի» պարագլուխները, յեթե նրանց առաջարկվեր ծրագրի այդպիսի՝ ուղղում:

Թող վոռնան: Դրա համար նրանց կդուիի բուրժուական:

Իսկ մենք մեր գործը կանենք: Մեր կուսակցության ծրագրի վերաբննության ժամանակ անպայման պետք է նկատի ունենալ Ենդելսի ու Մարքսի խորհուրդը, վորպեսզի ճշմարտության ավելի մոտեկ լինենք, վորպեսզի վերականգնենք մարքսիզմը, մաքրելով այն աղավաղումներից, վորպեսզի ավելի ճիշտ ուղղություն տանք իր աղատադրման համար բռնվոր դասակարգի մղած կովին: Բոլշևիկների մեջ, անշուշտ, Ենդելսի ու Մարքսի խորհրդի հակառակորդներ չեն գտնվի: Դժվարություն առաջ կըտա, թերևս, միմիայն տերմինի հարցում: Գերմաներին յերկու բառ կա, վորոնք «համայնք» են նշանակում. Ենդելուը դրանցից ընտրել ե այն բառը, վորը չի նշանակում են նրանց միավորումը, Համայնք, այլ նշանակում են նրանց միավորումը, Համայնք-

ների սիստեմը։ Առևտերեն այդպիսի բառ չկա, և գուցե հարկ լինի ընտրել Փրանսերեն «կոմունա» բառը, թեև այդ ել իր անհարմարություններն ունի։

«Կոմունան արդեն բուն խմաստով պետություն չեր»— ահա, տեսականորեն, Ենդելսի կարեւրագույն պնդումը։ Վերեւում շարադրածից հետո՝ այդ պնդումը միանդամայն հասկանալի յէ։ Կոմունան դադարում եր պետություն լինելուց, վորչափով նա հարկադրված եր ճնշելու վո՛չ թե բնակչության մեծամասնությանը, այլ վոքրամասնությանը (շահագործողներին)։ բուրժուական պետական մեքենան նա ջարդուիչուր արեց. ճնշման հասուլ ուժի տեղ ասպարեզն եր մղվում բնակչությունն ինքը։ Այս բոլորը շեղումներ են պետությունից՝ այդ բարի բուն խմաստով։ Յեկ յեթե Կոմունան ամրապնդվեր, ապա նրա մեջ իրենք իրենց «կմահանային» պետության հետքերը, նա կարիք չեր ունենա «վերացնելու» սրա հիմնարկները. վերջիններս կդադարեցին գործելուց, յերբ այլևս վոչինչ չեյին ունենա անելու։

«Ենարխիստները մեր աչքերը ծակում են «ժողովրդական պետությամբ»։ այս ասելով, Ենդելսն ամենից առաջ նկատի ունի Բակունինին ու նրա հարձակումները գերմանական սոցիալ-դեմոկրատների վրա։ Ենդելսն այդ հարձակումները ճիշտ ե Համարում այնչափով, վորչափով «ժողովրդական պետությունը» նույնպիսի մի անմտություն ու նույնպիսի մի շեղումն ե սոցիալիզմից, ինչպես և «ազատ ժողովրդական պետությունը»։ Ենդելսն աշխատում ե շրակել գերմանական սոցիալ-դեմոկրատների պայքարն անարխիստների դեմ, այդ պայքարն սկզբունքորեն ճիշտ դարձնել, այն ազատել «պետության» վերաբերյալ ոպորտունիստական նախապաշարումներից։ Ավա՞զ։ Ենդելսի նամակը. 36 տարի ծածկոցի տակ մնաց։ Մենք կտեսնենք ներքեւում, վոր այդ նամակի հրատարակումից հետո ել կառուցին համառորեն պնդում ե, ըստ եյության, հենց նույն սիսակերը, վորոնցից զգուշացրել եր Ենդելսը։

Բերելն Ենդելսին պատասխանեց 1875 թ. սեպտեմբերի 21-ին գրած նամակով, վորի մեջ, նա, իմիջի այլոց, գրում

եր, թե «լիովին համաձայն ե» Ենդելսի դատողությանը ծրագրի նախագծի մասին, և թե ինքը կշտամբել ե Լիդկանեխտին զիջողականության համար (Բերելի հիշողությունների գերմ. Հրատարակություն, II հատոր, էջ 304)։ Բայց յեթե վերցնենք Բերելի «Մեր նպատակները» բրոցյուրը, այստեղ բոլորովին անձիշտ դատողությունների կհանդիպենք պետության մասին։

«Պետությունը պետք ե դասակարգային տիրապետության գրահմանական պետությունից ծովովրական պիտույքային վորխարկվել» («Սուսեր Զիւր» գերմ. Հրատ. 1886, էջ 14)։

Այսպես և տպված Բերելի բրոցյուրի իններորդ (իններո՞րդ) հրատարակության մեջ։ Զարմանալի չե, վոր պետության վերաբերյալ ոպորտունիստական դատողություններն այդչափ համառորեն կրկնելը ներծծվել ե գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ, մանավանդ, յերբ Ենդելսի հեղափոխական բացարձությունները ծածկոցի տակ ենին դրվում, իսկ ամբողջ կենսապայմանները յերկար ժամանակով «մոռանալ ելին տալիս» հեղափոխությունը։

4. ԵՐՖՈՒՐՏԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մարքսիզմի ուսմունքը պետության մասին քննության առնելիս չի կարելի մի կողմ թողնել Երֆուրտի ծրագրի նախագծի այն քննադատությունը, վոր Ենդելսն ուղարկել ե Կառուցկուն 1891 թվի Հունիսի 29-ին և Հրատարակվել ե միմիայն տասը տարի հետո «Neue Zeit»-ում, չի կարելի մի կողմ թողնել, վորովհետև այդ քննադատությունը նվիրված ե, գլխավորապես, սոցիալ-դեմոկրատիայի հենց պետական կառուցվածքի հարցերին վերաբերող ոպորտունիստական հայացքների քննադատությանը։

Անցողակի կերպով նշենք, վոր Ենդելսն եկոնոմիկայի հարցերի վերաբերմանը ևս մի վերին աստիճանի արժեքագույն պատճեն է անում, վորը ցույց է տալիս, թե նա վորքան ուշադիր ու լրջմտորեն է հետեւել հենց նորագույն կապիտալիզմի կերպարանափոխություններին և ինչպես կարողացել ե, այդ իսկ պատճառով, վորոշ չափով կանկարողացել ե,

խատեսել մեր, իմպերիալիստական դարաշըզանի խնդիրները: Ահա այդ ցուցումը՝ կապիտալիզմը բնորոշելու համար ծրագրի նախագծում գործածված «պլանաչափության բացակայություն» (Planlosigkeit) արտահայտության առթիվ Ենդեմը գրում է.

... «Յեթե մնաք բաժնետիրական ընկերություններից անցնում ենք տրեստներին, վորոնք հպատակնենում են իրենց և մօնոպոլիզացիայի յև յենթարկում արդյունաբերության ամրող ճյուղեր, ապա այստեղ դադարում ե վո՞չ միայն մասնավոր արտադրությունը, այլև պլանաշափության բացակայությունը» («*Neue Zeit*» 20-րդ տարի, I հատու, 1901—1902, էջ 8):

Այստեղ վերցված ե նորագույն կապիտալիզմի, այսինքն՝ իմպերիալիզմի թեորիական գնահատության ամենից ավելի հիմնական կողմը, այն ե՝ վոր կապիտալիզմը մոնոպոլիստական կապիտալիզմի յե փոխարկվում։ Այս վերջին հանդամանքը պետք ե ընդգծել, վորովհետև ամենատարածված սիման այն բուրժուական-ռեֆորմիստական պնդումն ե հանդիսանում, իբր թե մոնոպոլիստական կամ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմն այլևս կապիտալիզմ չե, արդեն կարող ե «պետական սոցիալիզմ» կոչվել և այլն։ Կատարյալ պլանայնություն տրեստներն, իհարկե, չեն տվել, մինչեւ այսոր ել չեն տալիս և չեն կարող տալ։ Բայց վորչափով նրանք պլանայնություն են տալիս, վորչափով կապիտալի մազնատներն ազգային կամ մինչեւ իսկ միջազգային մասշտաբով առաջուց հաշվի յեն առնում արտադրության ծավալը, վորչափով նրանք կարգավորում են այն պլանայնորեն, —այդ չափով մենք, այնուամենայնիվ, մնում ենք կապիտալիզմի ըրջանում, թեև նրա զարգացման նոր ստագիայում, բայց, անկասկած, կապիտալիզմի ըրջանում։ Այդպիսի կապիտալիզմի «մոտիկությունը» սոցիալիզմին՝ պետք ե սլրուետարիատի իսկական ներկայացուցիչների համար սոցիալիստական հեղափոխության մոտիկության, հեշտության, իրադրության, անհետաձգելիության փաստարկ լինի և վոչ յերբեք այն բանի փաստարկ, թե պետք ե հանդուրժող վերաբերմունք ցույց տալ զեսկի այդ հեղափոխության ժխտումն ու կապի-

տալիզմի գունազարդումը, վորով զբաղվում են բոլոր ունչումները:

Բայց վերալառնանք պետության հարցին։ Այստեղ յերեք տեսակ առանձնապես արժեքավոր ցուցումներ են տալիս Ենդեմը։ Նախ՝ հանրապետության հարցի մասին։ յերրորդը՝ ազգային հարցի կապակցության մասին պետության կառուցվածքի հետ։ յերրորդ՝ տեղական ինքնավարության մասին։

Ինչ վերաբերում է հանրապետությանը, Ենդելսն այն
դարձրել է Երփուրտի ծրագրի նախադիմի իր քննադատու-
թյան ծանրության կենտրոնը։ Իսկ յեթե մենք մտաքե-
րենք, թե ինչպիսի նշանակություն է ձեռք բերել Երփուր-
տի ծրագրին ամբողջ միջազգային սոցիալ-դեմոկրատիայի
համար, ինչպես այն որինակ է դարձել ամբողջ Յերկրորդ
ինտերնացիոնալի համար, ապա առանց չափազանցության
մեջ ընկնելու կարելի կլինի ասել, վոր Ենդելսն այստեղ
քննադատում է ամբողջ Յերկրորդ ինտերնացիոնալի ո-
պորտունիզմը։

«Նախագծի քաղաքական պահանջները, — դուռը և ենդելուը, — մեծ թերություն ունենալուն՝ Երան մեջ չկա այն (ընդգծումը ենդելսինն է), ինչ վոր իսկապես պետք էր ասել»:

Յել այնուհետև պարզաբանվում է, վոր գերմանական սահմանադրությունն իսկապես 1850 թվականի ամենառեալցիոն սահմանադրության պատճենն է, վոր ույխուտագը, ինչպես ասել ե Վիլհելմ Լիբկնեխտը, «արտուրակիզմի թղենու տերեւն ե» միայն, վոր «ակներև անմտություն ե» «աշխատանքի բոլոր գործիքներն ընդհանուր սեփականություն դարձնելն» իրագործել կամենալն այն սահմանադրության հիման վրա, վորն որինականացնում են մանր պետություններն ու գերմանական մանր պետությունների միությունը:

«Այս թեման շոշափելը վտանգավոր է»—ապէլացնում և Ենդէլու,
շտա լալ իմանալով, վոր չե կարելի ծրագրում լեզալ կերպով հանրա-
պետության պահանջ դնել Գերմանիայի համար։ Բայց Ենդէլուն առանց
պետության պահանջ դնել Գերմանիայի համար։

1 Զեռադրում՝ «Ընդունում ե»:

այլ հաշտվում այս ակներն նկատառման հետ, վորով բավարարվում են «բոլողը»: Ենդեւսը շարունակում է. «Բայց, այսուամենայիվ, գործը պետք է այս կամ այն կերպ առաջ մղիք: Թե վոր ասաիծնանի անհրաժեշտ է այդ, ցույց և տալիս սոցիալ-դեմոկրատական մասնակի խոշոր մասի մեջ հենց այժմ ծալվալում դասձ (eine reissende) ոպրոտունիզմը: Վախենալով սոցիալիստների դեմ ուղղված որենքի վերականգնումից, կամ հիշելով այդ որենքի տիրապետության ժամանակ արլած միքանի վաղաժամ հայտարարություններ, հիմա ուղում են, վոր կուսակցությունը Գերմանիայի այժմյան որինակարգը բավարար համարե՞ն՝ իր բոլոր պահանջները խաղաղ ճանապարհով կենսագործելու համար»...

Վոր գերմանական սոցիալ-դեմոկրատները դործում ենին բացառիկ որենքի վերականգնումից վախենալով, այս հիմնական փաստն Ենդեւսն առաջին պլանն է մղում և, առանց տատանվելու, ոպրոտունիզմ և անվանում այն, հայտարարելով, վոր, հատկապես հանրապետության ու ազատության բացակայության չնորհիվ Գերմանիայում, միանգամայն անմիտ են «խաղաղ» ճանապարհով դործելու ցնորդները: Ենդեւսը բավականաչափ զգուշ է, վորպեսզի իրեն չկաշկանդի: Նա ընդունում է, վոր հանրապետություն ունեցող կամ շատ մեծ ազատություն վայելող յերկրներում՝ խաղաղ զարգացում դեպի սոցիալիզմը «կարելի յեպատկերացնել» (միմիայն «պատկերացնել»), բայց Գերմանիայում, կրկնում է նա.

...«Գերմանիայում, վորանել կառավարությունը համարյա թե ամենազոր է, իսկ ուսիսապն ու բոլոր մյուս ներկայացուցչական հիմնարկներն իրական իշխանություն չունեն, — Գերմանիայում վորեն նման բան հայտարարելը, և այն ել՝ առանց վորեն կարիքի, նշանակում ե արազուտիզմի վրայից թղթենու տերեւը վերցնել և անձամբ կանգնել նրա ժերկությունը ծածկելու համար»...

Իսկապես ել արսուլուտիզմի մերկությունը ծածկողներ հանդիսացան ահաղին մեծամասնությամբ գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության պաշտոնական առաջնորդները, կուսակցության, վոր «մահուդի տակ» պահեց այդ ցուցումները:

...«Այդպիսի քաղաքականությունը, վերջվերջո, կարող է միմիայն կուսակցությանը սիսակ ճանապարհի վրա դնել: Առաջին պլանն են մղում ընդհանուր, վերացական քաղաքական հարցերը և այդ ձեռք քուղարկում մերձականություն կոնկրետ հարցերը, վորոնք հենց առաջին

խոշոր անցքերի, հենց առաջին քաղաքական ճշնաժամի միջոցին իրենք իրենց որակարգի հարց են դանում: Սրանից ի՞նչ կարող ե դուրս գալ, բայց նրանից, վոր կուսակցությունը հանկարծ վճռական մասնատին անողնական վիճակի մեջ կընկնի, վոր վճռական հարցերի չուրջը նրա մեջ անորոշության ու միանության բացակայությունն ե իշխում, վորովհետև այդ հարցերը յերեք չեն քննարկելու...»

«Ենծ, արժատական նկատառումների այս մոռացումը հանուն որվարուեական շահերի, այդ վազքը բովեյական հաջողությունների հետեւից և նրանց համար մղվող պայքարը՝ առանց դալիք հետեւանքները հաշվի առնելու, ապագա շարժման այդ զոհաբերումը ներկային, թերեւ և «աղնիվ» մոտիվներից ե բլինում: Բայց այդ ոպրոտունիզմ և և ոպրոտունիզմ ել կմնա, իսկ «աղնիվ» ոոլորտունիզմը, գուցե, ավելի վտանգավոր և, քան նրա բոլոր մյուս տեսակները...»

«Յեթե կտ մի բան, վոր վոչ մի կասկածի յենթակա չե, այդ այն ե, վոր մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգը իշխանության կարող են հասնել միմիայն այնպիսի քաղաքական ձևի ժամանակ, ինչ-պիսին դեմոկրատական հանրապետությունն ե: Այս վերջինը մինչև պիսին դեմոկրատիական առաջարկատությունն ամենամեծ ձևն է հանդամանական պրոլետարիատի գիլտատուրայի առանձնահատուկ ձևն և հանդիսանում, ինչպիս արդեն ցույց ե ավել մրանսական մեծ հեղափոխությունը»...

Ենդեւսն այստեղ առանձնապես ցայտուն կերպով կըրկընում և այն հիմնական իդեան, վոր կարմիր թելի նման անցնում և Մարքսի բոլոր գրվածքներում, այն ե, թե դեմոկրատական հանրապետությունն ամենից ավելի յետեւ մեղ պրոլետարիատի գիլտատուրային: Վորովհմուցնում մեղ պրոլետարիատի ավելի հանրապետությունն, ամենեւին չվերացնեհետև այլպիսի հանրապետությունն, առանձնապետությունն, կատարած կապիտալիստի տերապետությունը, կետեարար և մասսանիկ ճնշումն ու դասակարգային կոլիմը, անխուսափեկիելիների ճնշումն ու դասակարգային կոլիմը, որին տանում և դեպի այդ կոլիմ այնպիսի ընդլայնում, որին տանում և դեպի այդ կոլիմ այնպիսի ընդլայնում, վոր յեթե ճնարավորուծավարում և առաջ զալիս ճնշված մասսաների արմատական թյուն և առաջ զալիս ճնարավորությունը կենսա-չահերը բավարարելու, այդ ճնարավորությունը անխուսափեկիելիորեն ու միմիայն պրոլետարիատի գործվում և անխուսափեկիելիորեն ու միմիայն պրոլետարիատի գիլտատուրայի միջոցով, յերբ այդ մասսաներին զեկավարում և պրոլետարիատը: Ամբողջ Յերկրարդ Խնտեր-կավարում և պրոլետարիատը: Ամբողջ Յերկրարդ Խնտեր-կավարում և պրանք նույնական մարքարդի «մոռացված խոսքեր են», և նրանց մոռացումն արտասառվոր վառ կերպով յերեան հանեց մենչեւիկների կուսակցության պատմությունը 1917 թվի ոուսական հեղափոխության առաջին կիսամյակի ընթացքում:

Ֆեղերատիվ հանրապետության հարցի մասին՝ բնակչության աղբային կազմի կապակցությամբ՝ Ենդելսը գրում է.

«Ի՞նչ պետք է կանոնի այժմյան Գերմանիայի տեղը» (նրա ռեսկյուն միապետական սահմանադրությամբ և մանր պետությունների նույնքան ռեալիզմոն բաժանմամբ, մի բաժանում, վորը հավերժացնում է «պրուսականության» առանձնահատկությունները, փոխանակ լուծելու այն մի ամբողջություն կազմող Գերմանիայի մեջ): «Իմ կարծիքով՝ պրուսական կարող և միշտայն միամական ու անբաժանելի հանրապետության ձևը գործադրել: Ֆեղերատիվ հանրապետությունը գետային և, ամբողջությամբ վերցրած, անհրաժեշտություն և հանդիսանում Միացյալ Նահանգների հոկայական տերիտորիայի վրա, թե՛ւ նրա արևելքում այն արդեն արգելք և դառնում: Դա առաջադիմական մի քայլ կլիներ Անդլիայում, վորանդ յերկու կզզու վրա չորս ազգ և ապրում, և չնայած պառաւմնեաի միամական լինելուն՝ իրար կողքի որենսդրության յերեք սիստեմ գոյություն ունի: Այն վաղուց արդեն արգելք և դարձել փոքրիկ ծվեցարիայում, և յեթե այնտեղ դեռ կարելի յե՛ հանդուրժել ֆեղերատիվ հանրապետությունը, ապա միմյան այն պատճառով, վոր Շվեցարիան բավականում և յելքուական պետական սիստեմի գուտ պատահիլ անդամի դերով: Գերմանիայի համար նրա ֆեղերականական շվեցարացումը վիթխարի հետագած քայլ կլիներ: Յերկու կետ դաշնակցային պետությունը տարեկում և լիովին միամական պետությունից: այդ այն և, վոր միության մեջ անոնդ ամեն մի առանձին պետություն ունի իր հատուկ քաղաքացիական ու քրեական որենսդրությունը, իր հատուկ դատավարությունը, և ապա այն, վոր ժողովրդական ներկայացուցիչների պալատի կողքին գոյություն ունի պետությունների ներկայացուցիչներից կազմված պատարաց, և այնտեղ ամեն մի կանոն քվեարկում և իրեք այդպիսին, անկախ այն բանից՝ մեծ և այն, թե փոքր»: Գերմանիայում դաշնակցային պետությունը մի անցում և զեղի լիովին միամական պետությունը, և 1866 ու 1870 թվականների «լեկելից յեկող հեղափոխությունը» վո՛չ թե պետք և հետ չուռ տալ, այլ լրացնել «ներքելից յեկող չարբումով»:

Ենդելսը վո՛չ միայն անտարբերություն չի յերեան հանում պետության ձևերի հարցի վերաբերմամբ, այլ, ընդհակառակը, արտակարդ խնամքով աշխատում և վերլուծել հատկապես անցման ձևերը, վորպեսդի յուրաքանչյուր առանձին դեպքի կոնկրետ պատմական առանձնահատկությունների կապակցությամբ հաշվի տոնի, թե տվյալ անցման ձևն ինչից դեպի ինչն և անցում հանդիւանում:

Ենդելսն, ինչպես և Մարքսը, պրոլետարիատի ու պրոլետարական հեղափոխության ակտակետից սլաշտպանում և դեմոկրատական ցենտրալիզմը, միասնական ու անբաժան հանրապետությունը: Ֆեղերատիվ հանրապետությունը նա դիտում է կամ իրեկ զարգացման բացառություն ու արգելք, կամ իրեկ անցում միապետությունից դեպի ցենտրալիստական հանրապետությունը, իրեկ «մի քայլ առաջ» վորոշ հատուկ պայմանների մեջ առաջ և մղվում ազգային հարցը:

Ենդելսի, ինչպես և Մարքսի մոտ, —չնայած այն բանին, վոր նրանք անխնա քննադատության են յենթարկում մանր պետությունների ռեալիզիոնությունն ու վորոշ կոնկրետ դեպքերում այդ ռեալիզիոն գործարկումն աղգային հարցով, —վոչ մի տեղ ազգային հարցից խուսափելու ձգտման ստվերն անդամ չկա. մի ձգտում, վորով հաճախ սիստեմները, վորոնք յենում են «իրենց» մանր պետությունների քաղաքներուն նեղ նացիոնալիզմի դեմ ամենաորինական պայքար մղելու հանդամանքից¹:

Նույնիսկ Անդլիայում, վորտեղ թե՛ աշխարհագրական պայմանները, թե՛ լեզվի ընդհանրությունը, թե՛ բազմաթիվ հարյուրամյակների պատմություննը, թվում և, թե «վերջ և տվել» Անդլիայի առանձին մանր բաժանումների աղցային հարցին, մինչև անդամ այստեղ Ենդելսը հաշվի յե առնում այն պարզ իրողությունը, վոր աղցային հարցը դեռ վերացված չէ, և դրա համար ել ֆեղերատիվ հանդիպետության թերությունների քննադատությունից, ինչպես և միասնական, ցենտրալիստորեն դեմոկրատական հանրապետության համար ամենավճռական պրոպագանդա ու կոխի մղելուց հրաժարվելու ստվերն անդամ չկա:

Բայց դեմոկրատական ցենտրալիզմն Ենդելսն ամենաին այն բյուրոկրատական իմաստով չի ըմբռնում, վորպիսի

1 Լենին այստեղ նկատի ունի լեհական (Ռ. Լուքսենբուրգ և Կ. Բաղեկ) և հունգարական (Գորտեր) սոցիալ-դեմոկրատներին:

իմաստով՝ այդ հասկացողությունը գործ են ածում բուրժուական ու մանր-բուրժուական իդեոլոգիները, վերջինների թվում նաև անարխիստները։ Ենդելով կարծիքով՝ ցենտրալիզմն ամենեին չի բացառում այնպիսի լայն տեղական ինքնավարություն, վորը «կոմունաների» ու մարզերի կողմից պետության միասնությունը հոգարակամ կերպով պաշտպանվելու դեպքում՝ անպայման վերացնում և ամեն մի բյուրոկրատիզմ ու ամեն մի «հրամանատարություն» վերելից։

...«Այդպես ուրեմն, միանական հանրապետություն»,—դրում է Ենդելը, զարգացնելով մարզիկմի ծրագրային հայացքները պետության վերաբերմամբ, —«բայց վոչ այժմյան քրանսական հանրապետության իմաստով, զորն իրենից ուրիշ բան չի ներկայացնում, բան 1898 թվի Հիմնված կայսրությունն առանց կայսրի։ 1792-ից մինչև 1798 թվականը ամեն մի քրանսական դեպարտամենտ, ամեն մի համայնք (Gemeinde) լիակատար ինքնավարություն էր վայելում ամերիկյան որինակով, և այդ պետք եւ ունենանք նաև մենք։ Թե ինչպես պետք եւ կազմակերպել ինքնավարությունը և ինչպես կարելի յեւ կառավարել առանց բյուրոկրատիայի, այդ ցույց են տվել ու ապացուցել են մեզ Ամերիկան ու քրանսական առաջնի հանրապետությունը, իսկ այժմ եւ դարձյալ ցույց են տալիս Կանադան, Ամերիկան ու ունդիւկան մյուս գաղութները։ Յեկ այդպիսի գավառական (մարզային) ու համայնական ինքնավարությունը շատ ավելի ազատ հիմնարկներ են, քան թե, որինակ, շվեյցարական ֆեդերալիզմը, վորտեղ, ճշշտե, կանոնը շատ անկախ եւ բունդի (այսինքն՝ ամբողջ ֆեդերատիվ պետության) նկատմամբ, բայց անկախ եւ նաև զավառակի (բեցիրկ) ու համայնքի նկատմամբ։ Կանոնային կառավարություններն են նշանակում գավառական վոստիկանագետներին (շտատհարտերին) ու պրեֆեկտոներին, մի բան, վոր բոլորովին գոյություն չունի անգիտելին խոսող յերկներում, և վորը մենք ապահովում նոյնավիտ յնուականությամբ պետք եւ վերացնենք, ինչպես և պրուսական լանգուաներին ու ունդիրունգուասներին» (կոմիսարներին, գավառական վոստիկանագետներին, նահանգապետներին, ընդհանրապես՝ վերելից նշանակված չինովիկներին)։ Դրան համապատասխան՝ Ենդելն առաջարկում եւ հետեւական կերպով մեակերպել ծրագրի կետը ինքնավարության մասին, «Լիակատար ինքնավարություն յերկրամասում» (նահանգում կամ մարզում), «Պավառում ու համայնքում ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա ընտրված պաշտոնյաների միջոցով, պետության կողմից նշանակված բոլոր տեղական ու յերկրային իշխանությունների վերացում»։

Կերենսկու և մյոււս «սոցիալիստական» մինիստրների ձեռքով՝ փակված «Правда»-յում (№ 68, 1917 թվի մայիսի 28-ին) յես արդեն առիթ եմ ունեցել մատնանշելու, թե ինչպիս այս կետում—իբր թե հեղափոխական իրը թե դեմոկրատիայի իրը թե սոցիալիստական մեր ներկայացուցիչներն աղաղակող շեղումներ եյին կատարում դեմոկրատիզմից։ Հասկանալի յեւ, վոր այդ ցուցումների նկատմամբ իսու պիտի մնային այն մարդիկ, վորոնք «կոռալցիայով» իրենց կապել եյին իմպերիալիստական բուրժուազի հետ։

Զավարանց կարեւոր եւ նշել, վոր Ենդելը փաստերը ձեռին, ամենաճշգրիտ որինակով, հերքում եւ հատկապես մանր-բուրժուական դեմոկրատիայի շարքերում սաստիկ տարածված այն նախապահարությունը, իրը թե Փեղերատիվ Հանրապետությունն անպայման ավելի շատ աղատություն եւ նշանակում, քան ցենտրալիստականը։ Այդ սիալ եւ Այն փաստերը, վոր բերում եւ Ենդելը 1792—1798 թ.թ. Քրանսական ցենտրալիստական ու չվեյցարական Փեղերալիստական հանրապետությունների վերաբերմամբ, հերքում են այդ նախապահարություն։ Իրավես դեմոկրատական ցենտրալիստական հանրապետությունն ավելի շատ աղատություն եւ աւել, քան Փեղերալիստականը։ Կամ այլ կերպ՝ պատմության մեջ հայտնի ամենից ավելի լայն տեղական, մարզային և այլ աղատություն տվել եւ վո՞չ թե Փեղերատիվ, այլ ցենտրալիստական հանրապետությունը։

Այս փաստի, ինչպես և առհասարակ Փեղերատիվ ու ցենտրալիստական հանրապետության ու տեղական ինքնավարության ամբողջ հարցի վրա բավականաչափ ուշադրություն չեւ դարձվել ու չի դարձվում մեր կուսակցական պրոպագանդայի մեջ։

5. ՄԱՐԴԱՐԱԴԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԹԻՎ, 1891 թ. ԳՐԱԾ ԱՌԱՋԱԲԱՆԸ

«Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» աշխատության 3-րդ հրատարակության առաջաբանում—այդ

առաջարանը թվագրված է 1891 թվի մարտի 18-եւ սկզբանապես տպագրվել և «Neue Zeit» ժուռնալում—Ենդելսը պետության վերաբերմամբ բռնելիք դիրքի հետ կապված մի շարք հարցերի մասին հետաքրքրական անցողակի դիտազությունների հետ մեկտեղ՝ տալիս է Կոմունայի դասերի մի շատ ցայտուն ամփոփում։ Այդ ամփոփումն՝ խորացրած այն քսանամյա շրջանի փորձով, վոր հեղինակին բաժանում եր Կոմունայից, և ուղղված հատկապես ընդդեմ Գերմանիայում տարածված «սնահավատության պետության նկատմամբ», կարող է իրավամբ մարզից վերջին խոսքը կոչել քննարկվող Հարցի մասին։

«Ձբանսիայում, — աշում ե Ենդելսը, — յուրաքանչյուր հեղափոխությանից հետո բանվարները զինված եին լինում. այդ պատճառով ել պետության զնկի մոտ կանգնած բուրժուաների համար բանվարների զինաթափումն առաջն պատվիրանն եր. Այստեղից—բանվարների նվաճած ամեն մի հեղափոխությանը մի նոր կորիլ եր հետում, վորը վերջանում եր բանվարների պարտությամբ»...

Բուրժուական հեղափոխությունների փորձի այս ամբողջությումը վորքան կարճ է, նույնպան ել արտահայտիչ ե: Խնդրի եյությունը—իմիջի այլոց նաև պետության հարցի նկատմամբ (արդյոք ննշված դասակարգը զերծ է այս գլուխությունը)՝ այստեղ հիմնավի կերպով ըմբռնված է: Հենց այդ եյականն է, վոր ամենից ավելի հաճախ անտես են առնուած ինչպես բուրժուական իդեոլոգիայի աղբեցության ներքո գտնվող պրոֆեսորները, այնպես և մանրանցութուական դեմոկրատաները: 1917 թվի ռուսական հեղափոխության ժամանակ «մենչելիկ», «նույնական մարքսիստ» Ծերեթելուն բաժին ընկալ բուրժուական հեղափոխությունների այդ գաղտնիքը դուրս տալու պատիվը (կավեճակայան պատիվը): Հունիսի 9-ին արտասանած իր «պատմական» ձառնում Ծերեթելին բերնից խոսք թուցրեց բուրժուազիայի վճռականության մասին՝ Պիտերի բանվորներին զինաթափ անելու, իհարկե, այդ վճիռն անցկացնելով թե՛ իբրև իր վճիռ և թե՛ իբրև ընդհանրապես «պետական», անհրաժեշտություն:

Ծերեթելու Հունիսի 9-ին արտաքանած պատմական

ճառն, իհարկե, 1917 թվի հեղափոխության ամեն մէս պատմաբաննի համար ամենաակնառու նկարազարդումներից մէկն է լինելու, թե ինչպես պարոն Ծերեթելու առաջնորդած եռերների ու մենակիների ըլոկը բուրժուազիայի կողմն անցաւ ընդդեմ հեղափոխական պրոլետարիատի:

Ենդեւսի մյուս անցողակի գլխողությունը, վորը նույն պես կապված է պետության հարցի հետ, վերաբերում է կրոնին: Հայոնի յեւ, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատիան քանի նեխովում, ավելի ու ավելի սպորտանիտական եր դառնում, այնքան ավելի ու ավելի հաճախ գլորիվում եր դեպի «կրոնը մասնավոր դործ հայտարարելու» հռչակավոր Փորմուլայի Փիլիստերական ծուռ մեկնաբանությունը: Այսինքն՝ այդ Փորմուլան մեկնաբանվում եր այնպես, վոր իր թե հեղափոխական պրոլետարիատի կուսակցության համար ել կրոնի հարցը մասնավոր դործ է: Պրոլետարիատի հեղափոխական ծրագրին կատարելավես դավաճաննելու այդ վաստի դեմ ել ծառացալ Ենդեւսը, վորը 1891 թվին տեսնում եր ոպորտունիզմի միմիայն ամենաքայլ սաղմերն իր կուսակցության մեջ և այդ պատճառով ել շատ ավելի զգուշ եր արտահայտվում:

«Բանի վոր կոմունալի մեջ նստած ելին գրեթե բացառապես բան
վորներ կամ նրանց ճանաչված ներկայացուցիչները, նրա վորոշումներն
և վճռական պրոլետարական բնույթ ունեցին: Նրանք կամ այնպիսի
ռեփորտներ ելին որինադրում, վորոնցից հանրապետական բուժքութա-
ռիան հրաժարվել եր միմիայն իր ստր յերկշուռության պատճառով և
վրանք բանվոր դասակարգի աղաս գործունեյության համար անհրա-
ժեշտ հիմք ելին ծառայում: Այդպիս եր, որինակ, այն սկզբունքի կեն-
սական սպառության վերաբերմամբ կրոնը լոկ անհատական
պարզությունը, թե պիտույքամ վերաբերմամբ կրոնը լոկ անհատական

Ենդելսը դիտավորյալ կերպով և ընդդեմ «պետության վերաբերմամբ» բառերը, հարվածն ուղղելով գերմանական ոպորտունիզմի վա՛չ թէ հոնքին, այլ աչքի մեջտեղը, այն ոպորտունիզմի, վոր կրոնը կուսակցության վերաբերմամբ ոպորտունիզմի, վոր կրոնը կուսակցության վերաբերմամբ գործ եր հայտարարում և այդպիսով հեղափոմանավոր

Խական պրոլետարիատի կուսակցությունն իջեցնում եր ամենավռեհիկ «ազատամիտ» քաղըենիության մակարդակին, վոր պատրաստ եր արտադավանական կացություն թույլ տալու, բայց հրաժարվում եր ժողովրդին հիմարացնող կրոնական ոպիումի դեմ կուսակցական պայքար մղելու խնդրից :

Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ապագա պատմապիրը, հետախուզելով նրա 1914 թվին անարդ անկման արմատները, բավական առատ հետաքրքրական նյութ է դանելու այս հարցի մասին, սկսած կուսակցության իդեական առաջնորդ կառւցկու հոգվածների խուսափողական, ուղղությունիղմի առաջ դրները լայն բաց անող հայտարարություններից, մինչև կուսակցության բռնած դիրքը դեպի «Los-von-Kirche-Bewegung»-ը (յեկեղեցուց) հեռանալու շարժումը) 1913 թվին :

Սակայն, անցնենք այն բանին, թե ինչպես եր ենդելու, կոմունայից քսան տարի անցնելուց հետո, նրա դասերն ամփոփում մարտնչող պրոլետարիատի համար :

Ահա թե վոր դասերն եր առաջին պլանը մղում Ենդելու.

...«Հատկապես նախկին կենտրոնացված կառավարության ճնշող ուժը՝ բանակը, քաղաքական վստիկանությունը, բյուրոկրատիան, վոր ստեղծել եր Նապոլեոնը 1793 թվին և նրանից հետո բոլոր նոր կառավարությունները սիրով ընդունել ելին իրեն ցանկալի դեմ և իրենց հակառակորդների դեմ ողտակործել, հատկապես այդ ուժը պետք է ամենուրեք ընկներ մրանսիայում, ինչպես վոր այն արդեն ընկել եր Փարիզում :

«Կոմունան սկզբից ևեթ ստիլված եր ընդունելու, վոր բանվոր դասակարգը, իշխանության համեմակալ, չի կարող ողտակործել իր նպատակների համար հին պետական մեքենան, վոր բանվոր դասակարգը, իր սեփական, հենց նոր նվաճած իշխանությունը կրկին չկորցնելու համար, պետք ե, մի կողմից, վերացնի ամբողջ հին, մինչև այժմ հենց իրեն դեմ դործադրվող ճնշման մեխանիզմը, իսկ մյուս կողմից, պետք ե իրեն առաջանալի հենց իր սեփական պատումավորների ու պաշտոնյաների գեմ, նրանց բոլորին, առանց վորեւե բացառության, միշտ և ամեն ժամանակ փոփոխելի հայտարեւով»...

Ենդելու կրկին ու կրկին անդամ ընդդում ե, վոր վո՛չ միայն միապետության, այլ նաև դեմոկրատական

հանրապետության մեջ պետությունը պետություն է մնում, այսինքն՝ պահպանում ե իր հիմնական տարրերի գիծը, այն ե՝ պաշտոնատար անձերին, «հասարակության սուպարներին», նրա որդաններին տեր ե զարձնում նույն հասարակության դլախին:

...«Պետության և պետական որդանների այս ձևով հասարակության սուպարներից հասարակության տերերի փոխարկվելու դեմ, վոր անխուսափելի յեր մինչայժմյան բոլոր պետությունների մեջ, կոմունան յերկու անվերտ միջոց դորժադրեց: Առաջին՝ կառավարման, գոտական, ժողովրդական լուսավորության բոլոր պաշտոնները պետք և արվելին ընդհանուր ընտրական իրավունքով ընտրված անձերի, ըստ վորում իրավունք ե արվում ուղած ժամանակ հետ կանչելու այդ ընդպահներին՝ նրանց ընտրունիքի վրոշմաբ: Յել յերկրորդ՝ կոմունան բոլոր պաշտոնատար անձերին, բարձր թե ցածր, միմիայն այնպիսի աշխատավարձ եր վճարում, վոր ստանում ելին մյուս բանվորները: Մենարարձ ունիկը, վոր նա ընդհանրապես վճարում եր, 6000 ֆրանկ եր 1: Այդպիսով հուսալի արդեւ եր ստեղծված պաշտոնների հետեւց ընկնելու և կարյերիցի դեմ, նույնիսկ անկախ այն կաշկանդիչ մանդամներից ել, վորոնք, բացի դրանից, ստանում ելին իրենց բնորդողներից ներկայացուցչական հիմնարկների պատումավալորները կոմունայի կարգադրությամբ»...

Ենդելուն այստեղ մոտենում ե այն հետաքրքրական սահմանադին, վորանեղ հետեւողական գեմոկրատիան, մի կողմից, սոցիալիզմի յե փոխարկվում, իսկ մյուս կողմից, սոցիալիզմ և պահանջում: Վորովհետեւ պետությունը վո-չընչացնելու համար անհրաժեշտ է պետական ծառայության փուլական կողմության վորական կողմության ու հաշվառման այնպիսի պարզ ոսկերացիաների, վորոնք մատչելի յեն բնակչության վիթխարի մեծամասնությանը, և ապա նաև գլխովին ամբողջ բնակչությանը և նրա ուժեղ ապահովությանը ամբողջ կրկին կատարելապես վերացնելու դիրք վեր չեն: Իսկ կարյերիզմը կատարելապես վերացնելու համար անհրաժեշտ է, վոր «պատվավոր», թեկուղ և վոչ-

1 Անվանական արժեքով այդ անում ե 2400 ոռորդի, իսկ այժմյան կարսով՝ մոտ 6000 ոռորդի: Միանդամայն աններելի բան են անում այն բոլոր միանելիները, վորոնք առաջարկում են, որինակ, քաղաքային գումաներում 9000-ական ոռորդի ոռծիկ տալ, փոխանակ առաջարկելու, վոր ամբողջ պետության համար մաքսիմումը լինի 6000 ոռորդի, մի զումար, վոր բայքարար և՝ ծանրագործյան կենինի:

յեկամտաբեր պետական պաշտոնը չկարողանա կամուրջ ծառայել բանկերում ու բաժնեաթիրական ընկերություններում բարձր յեկամուտ բերող պաշտոնների անցնելու համար, ինչպես այդ շարունակ լինում ե բոլոր ամենաաղատ կապիտալիստական յերկրներում :

Բայց Ենգելսը չի անում այն սխալը, վոր անում են, որինակ, մարզսիստներից վոմանք աղղերի ինքնորոշման իրավունքի հարցի վերաբերմամբ, իբր, կապիտալիզմի ժամանակ այն անկարելի յէ, իսկ սոցիալիզմի ժամանակ ավելորդ ե : Այդպիսի, իբր թե սրամիս, բայց իւկապես սխալ դատողությունը կարելի յն կրկնել ամեն մի գեմոկրատական հիմնարկի, այդ թվում նաև պաշտոնյաների համեստ ոռօճկի վերաբերմամբ, վորովհետև մինչև վերջը դնացող հետեղողական դեմոկրատիզմը կապիտալիզմի ժամանակ անհնարին ե, իսկ սոցիալիզմի ժամանակ ամեն մի դեմոկրատիա մահանում ե :

Այդ սովորականություն ե, վոր նման ե այն հին կատակին, թե արդյոք մարդ կճաղատանա՞ , յեթե նրա դլիսի ժաղերից միմիայն մեկը պակասի:

Դեմոկրատիայի գարզացումը մինչև վերջը, այդպիսի դարձացման ձևերի հայտնագործումը, նրանց փորձարկումը գործնականում և այլն, այս բոլորը սոցիալական հեղափոխության համար մղվող կույի բաղկացուցիչ խնդիրներից մեկն ե : Առանձին վերցրած վոչ մի դեմոկրատիզմ սոցիալիզմ չի տա, բայց կյանքի մեջ դեմոկրատիզմը յերբեք չի «վերցվի առանձին», այլ «կվերցվի միասին»՝ իր աղղեցությունը դործելու համար նաև եկոնոմիկայի վրա, նրա կերպարանափոխությունն առաջ մղելու, անտեսական գարզացման աղղեցությանը յենթարկվելու համար և այլն : Այդ ե կենդանի պատմության դիալեկտիկան :

Ենգելսը շարունակում ե .

...«Հին պետական իշխանության այէ պայմանցումը (Sprengung) և նրա փոխարինումը մի նոր իսկապես դեմոկրատական իշխանությամբ, մանրամասն նկարագրված և «Քաղաքացիական պատերազմի» յերբորդ հատկանումը: Սակայն անհրաժեշտ եր այսեղ մի անդամ ել համերձ կերպով կանգ առնել այդ փոխարինման միքանի դժերի վրա,

վորովհետև հատկապես դերմանիայում սնահավատությունը գեպի պետությունը՝ փելիսոփայությունից անցել ե բուրժուազիայի և մինչն իսկ շատ բանկորների ընդհանուր գիտակցության մեջ: Փելիսոփաների ուսմունքի համաձայն, պետությունը «իդեալի իրականացումն ե» կամ, փելիսոփայական լեզվի վերածած՝ սատծու արքայությունը յերկրի վրա. պետությունն այն ասպարեզն ե, վորակ կենսադործվում ե կոմս պետք և կենսագործվի հավիտենական ճշմարտությունն ու արզարությունը: Իսկ այսեղից ըլլում և մի մահալատ ակնածանք գեպի պետությունն ու այն ամենը, ինչ վոր կապ ունի պետության հետ.— մի մահավատ ակնածանք, վորն ավելի ևս հեշտությամբ և արձատանում, քանի վոր մարդիկ յերեխայական հասակից սովորում են յերեակարել, թե ամբողջ հասարակության համար ընդհանուր գործերն ու շահերը չեն կարող այլ կերպ իրականացվել ու սպահանվել, բացի նախկին յեղանակից, այսինքն՝ պետության ու նրա յեկամտարեր պաշտոններով պարզեատարված չինովիկների միջոցով: Մարդիկ յերեակարում են, թե արտասովոր ուժեղ առաջնմիաց քայլ են անում, յեթե պատավում են ժառանգական միաբետության մասին ունեցած հավատից և անցնում են, դեմոկրատական հանրապետության կողմը: Բայց խսկապես, պետությունը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մի մեքնա, վորովի մի գայսակարգ ճնշումն և մյուսին, և այն ել դեմոկրատական հանրապետության մեջ ամեներին վոչ պակաս, քան միապետության մեջ: Յեւլալագույն դեպքում՝ պետությունը մի չարիք ե, վոր իբրև ժառանգություն անցնում ե գասակարգային տիրապետության համար մղպող կրպի մեջ հաղթանակող պլոտեստարիատին, հաղթող պլոտեստարիատն ել, կոմունայի նման, հարկադրված կլինի ամսիջապես կարելու-ղեն գցելու այդ չարիքի վատթարագույն կողմերը, մինչև վոր մի նոր, ազատ հասարակական պայմաններում մեծացած ուրունգ ի վիճակի կլինի դուրս շղթականության այդ ամբողջը պետությունը:

Ենգելսը նախադպուշացնում եր գերմանացիներին, վոր նրանք միապետությունը հանրապետությամբ փոխարինելու առթիվ չմոռանան սոցիալիզմի հիմունքները պետության հարցի մասին ընդհանրապես: Նրա նախադպուշացնությունը այժմ կարդացվում են իբրև ուղղակի դաս պարունայք Ծերեթելիներին ու Զերնովներին, վորոնք իրենց «կոռալիցիոն» պրակտիկայում սնուտի հավատ ու սնուտի ակնածանք են ցուցաբերում դեպի պետությունը:

Յերկու դիտողություն ես: 1) Յեթե Ենգելսն ասում ե, թե դեմոկրատական հանրապետության ժամանակ պետությունն ամենենին վոչ պակաս» չափով, քան միապետության ժամանակ, մնում ե «մի մեքնա, վորով մի դատակարգ ճնշում և մյուսին», ապա այդ բոլորովին չի նշա-

նակում, թե ճնշման ձևը պրոլետարիատի համար անշանակ մի բան ե, ինչպես «ուսուցանում են» անարխիստներից վոմաք: Դասակարգային կոմիտ ու դասակարգային ճնշման ավելի լայն, ավելի տարատ, ավելի բացահայտ ձևը վերիստարի չափով թեթևացնում ե պրոլետարիատի գործը՝ դասակարգերի լիակատար վոչչացման համար մղվող կոմուն:

2) Թե ինչու միմիայն նոր սերունդն ե ի վիճակի լինելու բոլորովին դուրս չպատելու պետականության այդ ամբողջ հնոտին, —այս հարցը կապ ունի դեմոկրատիայի հաղթարման հարցի հետ, վորին և անցնում ենք մենք:

6. ԵՆԴԵԼՍԲ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ենդելսն առիթ ունեցավ այս մասին արտահայտվելու «սոցիալ-դեմոկրատ» անվան գիտական անձտության հարցի կատակցությամբ:

1870-ական թվականների զանազան, գլխավորապես «միջազգային» բովանդակություն ունեցող թերական նվիրված իր հողվածների հրատարակության առաջարտում («Internationales aus dem «Volksstaat»»¹⁾), վոր թվադրված ե 1894 թվի հունվարի 3, այսինքն՝ գրված ե ենդելսի մահից տարի ու կես առաջ, նա գրում ե, վոր բոլոր հողվածներում գործ ե ածվում «կոմունիստ», այլ վոչ թե «սոցիալ-դեմոկրատ» բառերը, վորովհետև այն ժամանակ իրենց սոցիալ-դեմոկրատ եյին անվանում պրուենիստները ֆրանսիայում, լասուալականները՝ Գերմանիայում:

...«Մարքսի ու ինձ համար—շարունակում ե Ենդելսը—այդ պատճառով միանդամայն անկարելի յեր այդքան առաձգական մի արտահայտություն դորձածել հատկապես մեր տեսակետը նշելու համար: Ներկայումս իրերի գրությունն այլ ե, և այդ բառը («սոցիալ-դեմոկրատ») կարող ե, թերեւս, համապատասխան լինել (mag passieren), թե այն անձգրիտ (unpassend—անհարմար, անհամապատասխան) է մնում այնպիսի մի կուսակցության համար, վորի անտեսական ծրադիր պարզապես սոցիալիստական չի հանդիսանում ընդհանրապես, այլ ուղղակի կոմունիստական ե, —մի կուսակցության համար, վորի վերջնական քաղաքական նպատակն ամբողջ պետության, հետևաբար, նաև

դեմոկրատիայի հաղթահարումն ե: Սակայն իսկական (ընդգծումը Ենդելսին ե) քաղաքական կուսակցությունների անունը յերբեք լիովին չի համապատասխանում նրանց. կուսակցությունը զարդանում ե, անունը՝ մնում»:

Դիալեկտիկ Ենդելսն իր կյանքի վերջալույսին համապարիմ ե մնում դիալեկտիկային: Յես ու Մարքսն, ասում են նա, ունեցինք կուսակցության համար դեղեցիկ, գիտականորեն—չդրիտ անուն, բայց իսկական, այսինքն՝ մասսայական պրոլետարական կուսակցություն չկար: Այժմ (XIX դարի վերջին) իսկական կուսակցություն կա, բայց նրա անունը գիտականորեն ճիշտ չէ: Վենաս չունի՛, «անց կկենա՛», միայն թե կուսակցությունը զարգանա, միայն թե նրա անվան գիտական անձգրառությունը չթաղցվի նրանից և չիանդարի նրան ճիշտ ուղղությամբ զարգանաւու:

Թերեւս, վորեւե մի կատակախոս մեղ, բոլեկիկներիս, ել սկսի Ենդելսի նման միիթարել—մենք իսկական կուսակցություն ունենք, նա հրաշալի կերպով զարգանում ե, «անց կկենա»¹ նաև «բոլեկիկ» բառի նման անիմաստ ու այլանուակ բառը, վոր բացարձակական վոչինչ չի նշանակում, բայց այն զուտ պատահական հանդամանքից, վոր բլյուսել—կոնդոնի համապումարում 1903 թվին մենք մեծամասնություն ենքինք կազմում... Գուցե այժմ, յերբ հանրապետականների և «Կեղափոխական» քաղաքանիական զեմոկրատիայի կողմից մեր կուսակցության դեմ ուղղված դեմոկրատիայի կոմիտե մասին: Գուցե յես կը կուսակցության անունը փոխելու մասին: Գուցե յես կը կուսակցության անունը կուսակցություն կոչել, բայց փակադի մեջ թողնել «բոլեկիկներ» բառը...

1 Զեռադրում՝ «անց կկենա» նույնիսկ:

Բայց կուսակցության անվան հարցն անհամեմատ ավելի պակաս կարևորություն ունի, քան հեղափոխական պրոլետարիատի դեպի պետությունն ունենալիք վերաբերմունքի հարցը:

Պետության վերաբերյալ սովորական դատողությունների մեջ չարունակ այն սխալն է արվում, վորից այստեղ նպաստուշացնում է Ենգելսը, և վորը մենք հարևանցի կերպով նշեցինք նախընթաց շարադրանքի մեջ։ Այդ այն է, վոր շարունակ մոռացության են տալիս, թե պետության վոչչացումը նաև դեմոկրատիայի վոչչացումն է, ինչ պետության մահացումը դեմոկրատիայի մահացումն է։

Առաջին հայացքից այդպիսի պնդումը չափազանց տարրինակ ու անհասկանալի յե թվում։ Թերեւս, մեկնումեկի մեջ մինչև անդամ յերկյուղ ծագի, թե մենք արդյոք այնպիսի մի հասարակական կառուցվածք չենք ակնկալում, վորի մեջ չի սպահալվելու փոքրամասնության՝ մեծամասնությանը հպատակվելու սկզբունքը, վորովհետեւ չե՞ վոր դեմոկրատիան ել հենց այդ սկզբունքն ընդունելն է։

Վո՛չ։ Դեմոկրատիան չի նույնանում փոքրամասնության՝ մեծամասնությանը հպատակվելու հետ։ Դեմոկրատիան փոքրամասնությունը մեծամասնությանը հպատակվելու սկզբունքն ընդունող պետությունն է, այսինքն՝ մի կազմակերպություն է, վորի միջոցով մի դասակարգ սխտեմատիկ կերպով բռնություն է գործ դնում մյուսի վրա, բնակչության մի մասը բռնություն է գործ դնում մյուսի վրա։

Մենք մեղ համար վերջնական նպատակ ենք դնում վոչչացնել պետությունը, այսինքն՝ ամեն տեսակ կազմակերպված ու սխտեմատիկ բռնություն, ընդհանրապես մարդկանց վրա գործադրվող ամեն մի բռնություն։ Մենք չենք սպասում, վոր այնպիսի մի հասարակակարգ գա, յերբ չի սպահանվելու փոքրամասնության՝ մեծամասնությանը հպատակվելու սկզբունքը։ Բայց ձգտելով դեպի սոցիալիզմ, մենք համոզված ենք, վոր այն պետք է վերաճելով կոմոնիզմ գառնա, իսկ այդ կապակցությամբ՝ պետք ե անհետանա ընդհանրապես մարդկանց վրա բռնություն գործ դնելու ամեն մի կարիք, մի մարդու՝ մի ուրիշին,

բնակչության մի մասի՝ նրա մյուս մասին հպատակվելու կարիքը, վորովհետեւ մարդիկ կընտելանան առանց բռնության ու առանց հպատակման՝ կատարելու հասարակայնության տարրական պայմանները։

Ընտելացման այս տարրն ընդգծելու համար ե, վոր Ենգելսը խոսում է նոր սերնդի մասին, «վոր մեծացած պիտի լինի նոր, աղասի, հասարակական պայմաններում։ մի սերունդ, վոր ի վիճակի կլինի բոլորովին դուրս չպըրտելու պետականության այդ ամբողջ հնոտին»—ամեն մի պետականության, այդ թվում նաև դեմոկրատական-հանրապետական պետականության հնոտին։

Այս բանը պարզաբանելու համար պետք է վերլուծել պետության մահացման տնտեսական հիմունքների հարցը։

չի յեղել: Մինչդեռ Մարքսը խոսում է նույնիսկ «կոմունիստական հասարակության ապագա պետականության» մասին, այսինքն՝ կարծես ընդունում է պետության անհրաժեշտությունը նույնիսկ կոմունիզմի ժամանակ:

Բայց այդպիսի կարծիքն արմատավես սխալ կլիներ: Ավելի մոտիկ քննարկումը ցույց է տալիս, վոր Մարքսի ու Ենդելսի հայացքները պետության ու նրա մահացման մասին միանդամայն համապատասխանում են միմյանց, իսկ Մարքսի վերեւում առաջ բերված արտահայտությունը հենց այս մահացող պետականության և վերաբերում:

Պարզ է, վոր խոսք անդամ չի կարող լինել ապագա «մահացման» մոմենտը վորոշելու մասին, մանավանդ վոր այն ակնհայտ կերպով տեսական մի պրոցես և հանդիսանում: Մարքսի ու Ենդելսի միջև յեղած կարծեցյալ տարրերությունը բացատրվում է այն թեմաների տարրերությամբ, վոր վերցրել են նրանք, այն ինդիբների տարրերությամբ, վոր հետապնդում ելին նրանք: Ենդելսն իր առաջ խնդիր եր դրել ակնբախ, կտրուկ կերպով, խոչոր զներով ցույց տալ Բերելին պետության մասին տարածված սովորական նախապաշտունքների (վորոնց վոչ վորը չափով յենթակա յեր նաև Լասալը) ամբողջ անհեթեթությունը: Մարքսը միմիայն անցողակի յե չոշափում այդ հարցը, հետաքրքրվելով մի ուրիշ թեմայով, այն և կոմունիստական հասարակության զարգացմամբ:

Մարքսի ամբողջ թեորիան զարգացման թեորիայի կիրառումն է արդի կապիտալիզմի վերաբերմամբ—այդ թեորիայի ամենահետեւղական, ամենալիակատար, մտածված ու բովանդակությամբ հարուստ ձևով: Բնականաբար, Մարքսի առաջ ծառացավ այդ թեորիայի կիրառման հարցը թե՛ կապիտալիզմի առաջիկա խորտակման և թե՛ ապագա կոմունիզմի ապագա զարգացման վերաբերմամբ:

Իսկ ի՞նչպիսի տվյալների հիման վրա կարելի յե առաջարկել ապագա կոմունիզմի ապագա զարգացման հարցը:

Այն հիման վրա, վոր այն ծագում է կապիտալիզմից, սուսականորեն զարգանում և կապիտալիզմից, հետևանք

Դ ԳԼՈՒԽ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Այս հարցի ամենամանրամասն պարզաբանումը Մարքսը ավել է իր «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ (Բրակիեյին ուղղված 1875 թ. մայիսի 5 թվակիր նամակով), վոր տպագրվել է միմիայն 1891 թ. «Neue Zeit»-ում, IX, 1 և ուստերեն լույս է տեսել առանձին հրատարակությամբ): Այս նշանավոր աշխատության բանավիճական մասը, վոր լասարականության քննադատությունն է պարունակում, ստվերի մեջ և պահել, այսպես ասած, նրա դրական մասը, այն ե՛ կոմունիզմի զարդացման ու պետության մահացման փոխադարձ կապակցության վերլուծությունը:

1. ՄԱՐՔՍԻ ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ

Մարքսի 1875 թվի մայիսի 5-ին Բրակիեյին ուղղած նամակն ու վերը քննարկված՝ Ենդելսի 1875 թվի մարտի 28-ին Բերելին ուղղված նամակը մակերեսորեն համեմատելիս կարող է այնպես թվալ, թե Մարքսը շատ ավելի մեծ չափով է «պետականության» կողմնակից, քան Ենդելսը, և թե պետության մասին այդ յերկու հեղինակների ունեցած կարծիքների տարրերությունը շատ զգալի յե:

Ենդելսն առաջարկում է Բերելին բոլորովին դեն գցել շաղակրատանքը պետության մասին, ծրագրից միանդամայն վտարել պետություն բառը, փոխարինել այն «Համայնք» բառով. Ենդելսը մինչեւ անդամ հայտարարում է, վոր կոմունան արգեն բառի բուն խմաստով պետություն

և այնպիսի հասարակական ուժի գործողությունների, վորը կապիտալիզմն է ծննդը: Մարքսի մոտ փորձերի հետք անգամ չկա՝ ուստապիաներ հորինելու, դատարկ գուշակություններ անելու այնպիսի բաների մասին, ինչ վոր չի կարելի գիտենալ: Մարքսը դնում է կոմունիզմի հարցն այնպես, ինչպես ընագետը կդներ մի նոր, առենք, կենսարանական տեսակի զարգացման հարցը, յերբ մենք գիտենք, վոր այն հենց այս կերպ է ծագել ու այս-ինչ վորոշ ուղղությամբ և կերպարանափոխում:

Մարքսն ամենից առաջ գեն և շպրտում այն խառնաշփոթությունը, վոր մատցնում և Գոթայի ծրագիրը պետության ու հասարակության փոխհարաբերության հարցի մեջ:

...«Արդի հասարակությունը, —կրում է նա, —կապիտալիստական հասարակություն է, վոր գոյսություն ունի բոլոր քաղաքակիրթ յերկրագույն քիչ թե շատ ազատ և միջնադարյան խառնուրդից, քիչ թե շատ կերպարանափոխած և յուրաքանչյուր յերկրի պատմական զարգացման առանձնահատկությունների չնորհիվ, քիչ թե շատ զարգացած է: Դրան հակառակ, «արդի պետությունը» փոխում և ամեն մի պետական սահմանի փոփոխության հետ: Պրուս-պերմանական կայսրության մեջ այն բոլորսկին այլ և, քան թե Շվեյցարիայում: Անգլիայում՝ բոլորսկին այլ, քան թե Միացյալ նահանգներում: Հետեարար, «արդի պետությունը» մի փեկցիա յէ:

«Սակայն, չայած նրանց ձեւերի խայտարկետ բազմազանությանը՝ առքեր քաղաքակիրթ յերկրների առքեր պետություններն այն ընդհանուր գիծն ունեն միշտանց հետ, վոր նրանք կանգնած են կապիտալիստուրեն քիչ թե շատ զարգացած արդի բուրժուատկան հասարակության հողի վրա: Այդ պատճառով եւ նրանք միշտանի ընդհանուր եյտեան հատկանիշներ ունեն: Այդ իմաստով կարելի յէ խոսել «արդի որեականության» մասին, հակադրելով վերջինս այն առագային, յերբ կժամանա նրա այժմյան արժանությունը, բուրժուատկան հասարակությունը:

«Այսուհետեւ հարցն այսպես և գրվում: Ի՞նչպիսի կերպարության կենթարկի պետականությունը կոմունիստական հասարակության մեջ: Այլ խոսքով, այն ժամանակ ի՞նչպիսի հասարակական փունկցիան կմնան, վոր նման կլինեն այժմյան պետական Փունկցիաներին: Այս հարցին կարելի յէ միմիայն գիտականորեն պատասխանել: և քանի հազար անգամ եւ զուգորդեն «Ժողովուրդ» բառը «պետություն» բառի հետ, այդ բանը մաղաչափ անդամ առաջ չի մղի չարցի լուծութը»...

Այս ձեռվ ծաղըի յենթարկելով «ժողովրդական պետության» մասին յեղած բոլոր խոսակցությունները, Մարքսը դնում է հարցը և կարծես նախազգուշացնում է, թե այդ հարցին դիտական պատասխան տալու համար կարելի յէ գործադրել միմիայն ամրապես հաստատված գիտական տվյալներ:

Առաջինն, ինչ վոր միանդամայն ճշգրիտ կերպով սահմանել և զարգացման ամբողջ թեորիան, ամբողջ գիտությունն ընդհանրապես, —և ինչ վոր մոռացել են ուստապիսաները, ինչ վոր մոռանում են սոցիալիստական հեղափոխությունից վախեցող այժմյան պարտաւոնիստները, —այն հանդամանքն է, վոր պատմականորեն անկասկած գոյություն պիտի ունենա կապիտալիզմից դեպի կոմունիզմ տանող անցման մի հատուկ ստագիա կամ մի հատուկ ետապ:

2. ԱՆՑՈՒՄՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻՑ ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԻԶՄ

...«Կապիտալիստական և կոմունիստական հասարակության միջև, —շարունակում է Մարքսը, —ընկնում է մի շրջան, յերբ առաջնը հեղափոխականորեն փոխակերպվում է վերջնին: Այդ շրջանին համապատասխանում է նաև անցման մի քաղաքական շրջան, և այդ շրջանի պետությունն ուրիշ վոչնչ չի կարող լինել, բացի պրոլետարիատի հեղափոխական դիկտուրայից»...

Մարքսի այս յեղակացությունը հիմնված է այն գերի վերլուծության վրա, վոր խաղում և պրոլետարիատն արդի կապիտալիստական հասարակության մեջ, հիմնված է այդ հասարակության զարգացման և պրոլետարիատի ու բուրժուազիայի հակադիր շահերի անհաշտելիության տվյալների վրա:

Առաջ հարցը գրվում էր այսպես: Իր պատապրությունը ձեռք բերելու համար պրոլետարիատը պետք է տապալի բուրժուազիային, նվաճի քաղաքական իշխանությունը, հաստատի իր հեղափոխական դիկտուրան:

Այժմ հարցը մի փոքր այլ կերպ է գրվում: Դեպի կոմունիզմ զարգացող կապիտալիստական հասարակությունից կոմունիստական հասարակությանն անցնելն անկարելի յէ առանց «քաղաքական անցման շրջանի», և այդ շրջանի պե-

տությունը կարող ե միմիայն պրոլետարիատի հեղափոխական գիտատուրան լինել:

Իսկ ի՞նչպիսի հարաբերություն ունի այս դիկտատուրան դեպի դեմոկրատիան:

Մենք տեսանք, վոր «Կոմունիստական մանիֆեստը» պարզապես իրար կողքի յե դնում յերկու հասկացողություն՝ «Արուետարիատի փոխարկվելը տիրող դասակարգի» ու «դեմոկրատիայի նվաճումը»: Ամբողջ վերեւում շարադրվածի հիման վրա կարելի յե ավելի ճշգրիտ վորոշել, թե ինչպես ե փոխվում դեմոկրատիան՝ կապիտալիզմից դեպի կոմունիզմ անցնելիս:

Կապիտալիստական հասարակության մեջ, նրա զարգացման ամենաբարենպաստ պայմաններում, մենք քիչ թե շատ լիակատար դեմոկրատիզմ տեսնում ենք դեմոկրատական հանրապետության մեջ: Բայց այդ դեմոկրատիզմը միշտ սեղմված ե կապիտալիստական շահագործման նեղ շրջանակների մեջ, և այդ պատճառով ել, ըստ եյության, միշտ մնում ե դեմոկրատիզմ փոքրամասնության համար, միմիայն ունենոր դասակարգերի համար, միմիայն հարուստների համար: Կապիտալիստական հասարակության աղատությունը միշտ մնում է մոտավորապես մի այնպիսի աղատություն, ինչպիսին հին հունական հանրապետություններում յեղած աղատությունն եր, այն ե՝ աղատություն ստրկատերերի համար: Արդի վարձու ստրուկները, կապիտալիստական շահագործման պայմանների չնորհիվ, այն աստիճան ճզմված են մնում կարիքի ու աղքատության մեջ, վոր «Դլուխ չունեն դեմոկրատիայի», «Քաղաքականության» մասին մտածելու, վոր դեպքերի սովորական, խաղաղ ընթացքի ժամանակ բնակչության մեծամասնությունը հեռացված ե հասարակական-քաղաքական կյանքի մասնակցությունից:

Այս պնդման ճշտությունը, թերևս, ամենից ավելի ակներև կերպով հաստատում ե Գերմանիան հատկապես այն պատճառով, վոր այդ պետության մեջ սահմանադրատիան լեզարությունը զարմանալիութեն յերկար ու կայտն պահպանից դրեթե կես դար (1871—1914), իսկ սոցիալ-դեմո-

կրատիան այդ ժամանակամիջոցում շատ ավելի բան կարողացավ անել, քան ուրիշ յերկրներում՝ «Երգալությունն ոգտագործելու» համար, ինչպես և բանվորների մի այնպիսի խոչոր թիվ իրեւ քաղաքական կուսակցություն կազմակերպելու համար, ինչպես վոչ մի այլ տեղ աշխարհում:

Իսկ վորքա՞ն ե կապիտալիստական հասարակության մեջ քաղաքականորեն գիտակից ու գործունյա վարձու ստրուկների յերմակցե տեսնված այդ ամենաբարձր բաժինը: Սոցիալ-դեմոկրատների կուսակցության մի միլիոն անդամ—15 միլիոն վարձու բանվորներից: Արհեստակցականորեն կազմակերպված յերեք միլիոն—15 միլիոնից:

Դեմոկրատիա չնչին փոքրամասնության համար, դեմոկրատիա հարուստների համար, ահա թե վորն ե կապիտալիստական հասարակության դեմոկրատիզմը: Յեթե ավելի մոտիկից զննենք կապիտալիստական դեմոկրատիայի մեխանիզմը, ապա ամենուրեք ու ամեն տեղ,—թե ընտրական իրավունքի «մանր», իրք թե մանր, մանրամասնությունների մեջ (նստակեցության ցենզ, կանանց զրկումն ընտրական իրավունքից և այլն), թե՛ ներկայացուցչական հիմնարկների տեխնիկայի մեջ, թե՛ ժողովների իրավունքի դեմ հարուցված փաստական խոչընդուների մեջ (հասարակական չենքերն «աղքատների» համար չեն), թե՛ ամենորյա մամուլի գուտ կապիտալիստական կազմակերպության մեջ և այլն, և այլն,—մենք կտեսնենք դեմոկրատիզմի անվերջու անվերջ սահմանափակումներ: Այդ սահմանափակումները, բացհանումները, խոչընդուները, վոր հարուցվում են աղքատների դեմ, մանր են թվում մասնավանդ այն մարդկանց աչքում, վորոնք յերեք կարիք չեն տեսնել և ճնշված դասակարգերի հետ նրանց մասսայական կյանքում մոտիկ չեն յեղել (իսկ այդպիսի մարդիկ են բուրժուական հարավարականուների ու քաղաքակետների իներ տասերորդը, յեթե վոչ իննսունինը հարյուրերորդը), —բայց այդ սահմանափակումները ամբողջությամբ վերցրած, վտարում, գուրս են մղում չքավորությանը քաղաքականությունից, դեմոկրատիայի մեջ ակտիվ մասնակցություն ունենալուց:

Մարքսն սքանչելիորեն ըմբռնել եր կապիտալիստական դեմոկրատիայի այս ե յ ու թ յ ու ն ը, յերբ կոմունացի փորձը վերլուծելիս ասում եր. ճնշվածներին միքանիտարին մի անդամ թույլ են տալիս վորոշելու, թե ճնշող դասակարգի ներկայացուցիչներից վորը պետք ե պառլամենտում ներկայացնի ու ճնշի նրանց:

Բայց այդ կապիտալիստական դեմոկրատիայից, վորանիուսափելիորեն նեղ է, գաղտնաբար հեռու յեւ վանում չքավորությանը, ուստի և մինչեւ ուղն ու ծուծը յերեսպաշտ է և կեղծ, այդ կապիտալիստական դեմոկրատիայից առաջընթաց զարգացումը պարզ, ուղիղ ու հարթ չի ընթանում «դեպի մի ավելի ու ավելի լայն դեմոկրատիա», ինչպես պատկերացնում են ազատամիտ պրոֆեսորներն ու մանր-բուրժուական ոպղորտունիտները։ Վո՛չ։ Առաջընթաց զարգացումը, այսինքն՝ զարգացումը դեպի կոմունիզմ, կատարվում է պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով, և այլ կերպ ընթանալ չի կարող, վորովհետև շահագործող կապիտալիստների դիմադրությունը խորտակելու համար ել ուրիշ վոչ վոք չկա և այն այլ ճանապարհով խորտակել չի կարելի։

Իսկ պրոլետարիատի դիկտատուրան, այսինքն՝ ճընշավածների ավանդաբարի կազմակերպությունն իրեւ տիրող դասակարգ, ճնշողներին ճնշելու համար, չի կարող պարզապես միմիայն դեմոկրատիայի ընդարձակում առաջացնել: Դեմոկրատիզմի հսկայական ընդլայնման հետ միասին, վորն առաջին առաջ մ դեմոկրատիզմ են դառնում չքայլորների համար, դեմոկրատիզմ՝ ժողովրդի համար և վոչ թե դեմոկրատիզմ հարուստների համար,— պրոլետարիատի դիկտատուրան ազատությունից մի շարք բացառումներ են անում ճնշողների, շահագործողների, կապիտալիստների վերաբերմամբ: Մենք պետք են նրանց ճընշենք, վորպեսզի մարդկությունն ազատագրենք վարձուստրկությունից: Նրանց դիմադրությունը պետք է ուժով խորտակել,—պարզ են, վորայնանք, վորտեղ կա ճնշում, վորտեղ կա բռնություն, այնտեղ չկա ազատություն, չկա դեմոկրատիա:

Ենդելսը գեղեցիկ կերպով արտահայտել ե այս բանը թերելին ուղղած իր նամակում, ասելով, ինչպես ընթերցողը հիշում է, թե «պրոլետարիատը պետության կարիք ունի վո՞չ թե ազատության համար, այլ իր հակառակորդ-ներին ճնշելու համար, իսկ յերբ կարելի կլինի խոսել ա-զատության մասին, պետություն չի լինի այլևս»:

Դեմոկրատիա ժողովրդի հսկայական մեծամասնության համար և ժողովրդին շահագործողների, ճնշողների բոլոր ձեռշում, այսինքն՝ դեմոկրատիայից վտարում, —ահա թե ինչպիսի կերպարանափոխություն ե կրելու դեմոկրատիան կապիտալիզմից դեպի կոմունիզմ անցնելիս :

Միմիայն կրմունիստական հասարակության մեջ, յերպ
արդեն վերջնականապես ջախջախված է կապիտալիստների
դիմագրությունը, յերբ կապիտալիստներն անհետացել են,
յերբ չկան դասակարգեր (այսինքն՝ հասարակության ան-
դամների միջև արտադրության հասարակական միջոցների
նկատմամբ տարբերություն չկա), այն ժամանակ միայն
«անհետանում է պետությունը և կարելի յն խոսել ազա-
տության մասին»։ Միմիայն այն ժամանակ հնարավոր է
և, կիրականացվի իսկապես լիակատար, իսկապես առանց
վորեե բացառման գեմոկրատիան։ Յեվ միմիայն այն ժամա-
նակ գեմոկրատիան կսկսի մահանալ այն հասարակ հան-
գամանքի չնորհիվ, վոր մարդիկ, աղաստիլով կապիտալիս-
տական ստրկությունից, կապիտալիստական շահագործման
անթիվ սարսափներից, վայրագություններից, անհեթե-
թություններից, գարշելիություններից, աստիճանաբար
կ ս ո վ ո ր ե ն պահպանել համակեցության տարրական,
գարերից ի վեր հայտնի, բոլոր այլբենարաններում հազա-
րավոր տարիներ կրկնված կանոնները, կառվորեն այդ կա-
նոնները կատարել առանց բռնության, առանց հարկադրան-
քի, առանց հպատակման, առանց հարկադրանքի
ա յ ն հ ա տ ո ւ կ ա պ ա ր ա տ ի, վորը պետություն
ե կոչվում։

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀԱՆՈՒՄ Ե» արտահայտությունը շատ հաջող է ընտրված, վորովհետեւ այն մատնանշում է պրոցեսի թե՛ աստիճանականությունը, թե՛ նրա տարերայնու-

թյունը։ Միմիայն սովորությունն է, վոր կարող է այդպիսի ազգեցություն գործել և անկասկած կգործի, վորովհետեւ մենք միլիոնավոր անդամներ տեսնում ենք մեր շուրջը, թե վորքան հեշտությամբ են սովորում մարդիկ համակեցության իրենց համար անհրաժեշտ կանոնները պահեռն, յեթե չկա շահագործում, յեթե չկա վոչ մի այսպիսի բան, վոր վրդովում է, բողոք ու ապատամբություն առաջացնում, նեշման անհրաժեշտություն ստեղծում։

Այդպես ուրեմն՝ կապիտալիստական հանրակության մեջ մենք խուզված, խղճուկ, կեղծ դեմոկրատիա յենք տեսնում, դեմոկրատիա միմիայն հարուստների համար, փոքրամասնության համար։ Պրոլետարիատի դիկտատուրան, դեպի կոմունիզմ անցնելու շրջանը, առաջին անդամ դեմոկրատիա կտա ժողովրդի համար, մեծամասնության համար, միենույն ժամանակ անհրաժեշտորեն ճնշելով փոքրամասնությանը, շահագործողներին։ Միմիայն կոմունիզմը կարող է խոկապես լիսկատար դեմոկրատիա տալ, և վորքան այլի լիսկատար լինի այդ դեմոկրատիան, այնքան այլի շուտով անպետք կդառնա նա, ինքն իրեն կմահանա։

Աւրիշ խոսքով՝ կապիտալիզմի ժամանակ մենք ունենք բառի բուն իմաստով պետություն, մի հատուկ մեքենա, վորով մի դասակարգ ճնշում և մյուսին, և այն ել՝ փոքրամասնությունը ճնշում և մեծամասնությանը։ Հասկանալի յե, վոր մի այդպիսի գործի հաջողության համար, ինչպիսին մեծամասնություն կազմող շահագործվողների սխալմատիկ ճնշումն և փոքրամասնություն կազմող շահագործողների կողմից, հարկավոր ե ճնշման ծայրահեղ վայրագություն, գաղանություն, հարկավոր են արյան ծովեր, վորոնց միջով ել մարդկությունն ընթանում ե իր ուղին՝ ստրկության, ճորտության, վարձկանության միհակում։

Այսուհետեւ, կապիտալիզմից կոմունիզմին անցնելիս՝ ճնշումը դեռևս անհրաժեշտ է, բայց արդեն փոքրամասնություն կազմող շահագործողների ճնշումը՝ մեծամասնություն կազմող շահագործմադուրը կողմից։ Ճնշման հա-

տուկ ապարատը, հատուկ մեքենան, «պետությունը» դեռ անհրաժեշտ է, բայց այդ արդեն անցման պետություն է, այդ այլևս պետություն չե խսկական իմաստով, վորովհետեւ փոքրամասնություն կազմող շահագործողների ճնշումը՝ մեծամասնություն կազմող յերեկվա վարձու ստրուկների կողմից՝ համեմատաբար այնքան հեշտ, հասարակ ու բնական գործ է, վոր նրա համար շատ ավելի քիչ արյուն կթափի, քան թե ստրուկների, ճորտերի, վարձու բանվորների ապատամբությունները ճնշելիս, վոր այն շատ ավելի եժան կնատի մարդկությանը։ Յեկ այդ բանը համատեղելի յե դեմոկրատիայի տարածման հետ բնակչության այնպիսի վիթխարի մեծամասնության վրա, վոր ճնշման հասուլ մեքենայի անհրաժեշտությունն սկսում է չքանալ։ Բնական բան է, վոր շահագործողներն ի վիճակի չեն ժողովրդին ճնշելու առանց ամենաբարդ մեքենայի, վորը պետք է այդ խնդիրն իրականացնելու համար, իսկ ծովովուրդը կարող է շահագործողներին ճնշել նաև մի շատ պարզ «մեքենայի» միջոցով, գրեթե առանց «մեքենայի», առանց հատուկ ապարատի, զինված մասսաների պարզ կազմակերպությամբ (ինչպես, առաջ ընկնելով նկատենք, բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդներն էլին)։

Վերջապես, միմիայն կոմունիզմն է, վոր ստեղծում է պետության լիսկատար ավելորդությունը, վորովհետեւ նրա ժամանակ վոչ վոյք չկա, վորին հարկավոր լինելը ճնշել, «վոչ վոք»՝ դասակարգի իմաստով, բնակչության մի վորոշ հատվածի գեմ սխալմատիկ պայքար մզելու իմաստով։ Մենք ուտոպիստներ չենք և ամենեին չենք ժխտում եքսցեների հնարավորությունն ու անխուսափելիությունն առանձին անհատների կողմից, ինչպես նաև այդպիսի եքսցեները ճնշելու անհրաժեշտությունը։ Բայց, նախ և առաջ, դրա համար պետք չե հատուկ մեքենա, ճնշման հատուկ ապարատ, այդ բանը կանի հենց ինքը զինված ժողովուրդն այնպիսի պարզությամբ ու հեշտությամբ, ինչպես քաղաքակիրթ մարդկանց վորեւե բազմություն նույնիսկ արդի հասարակության մեջ բաժանում է կազմողներին կամ թույլ

չի տալիս բռնություն կանանց վերաբերմամբ։ Իսկ, յերկ-
ըորդ, մենք գիտենք, վոր համակեցության կանոնները
խախող եքսցեների արմատական սոցիալական պատճառը
մասսաների շահագործումն է, նրանց կարիքն ու աղքատու-
թյունը։ Այդ գլխավոր պատճառի վերացումով, եքսցեներն
անփուսափելիորեն կտկնեն «մահանալ»։ Մենք չգիտենք, թե
վորքան արագ և ինչ հաջորդականությամբ, բայց գիտենք,
վոր նրանք կմահանան։ Նրանց մահացման հետ միասին
կմեռնի նաև պետությունը։

Առանց ուստաղիաների մեջ ընկնելու, Մարքսն ավելի մանրամասն կերպով բնորոշել ե այն, ինչ վոր այժմ կարելի յե բնորոշել այդ արագայի վերաբերմամբ, այն ե՝ կոմունիստական հասարակության ամենացածր ու ամենաբարձր փուլի (աստիճանի, ետապի) տարրերությունը:

3. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԵՋԻՆ ՓՈԽՀԸ

«Գոթայի ծրադրի քննադատության» մեջ Մարքսը մտնաբաժանաբար հերքում է լասուալյան այն գաղափարը, թե իր բանվորը սոցիալիզմի ժամանակ ստանալու յև «աշխատանքի անկրծառ» կամ «լրիվ արդյունքը»: Մարքսը ցույց է տալիս, վոր ամբողջ հասարակության ամբողջ հանրային աշխատանքից անհրաժեշտ ե հանել թե՛ պահեստի Փոնդը, թե՛ արտադրության ընդարձակման Փոնդը, թե՛ «մաշված» մեքենաների փոխհատուցումը և այլն, և ապա սպառման առարկաներից՝ վարչության, դպրոցների, Հիվանդանոցների, անկելանոցների և այլ ծախսերի Փոնդը:

Հասսալի մշուշապատ, աղոտ, ընդհանուր Փրազի գու-
խարեն («աշխատանքի լրիվ արդյունքը՝ բանվորին»),
Մարքսն զգաստ հաշվառում է կատարում այն բանի, թե
ինչպես պետք է ստիպված լինի տնտեսավարելու սոցիալիս-
տական հասարակությունը: Մարքսը կոնկրետ կերպով վեր-
լուծում է այդպիսի հասարակության կենսապայմանները,
վորի մեջ կապիտալիզմ չի լինի, և այդ առթիվ ասում է.

«Մենք այսուել դործ ունենք» (բանվորական կուսակցության ծրագիրը Քիմարէկելին) «Քո՞չ թե այնպիսի մի կոմունիստական հասացակիրը Քիմարէկելին»

մի հասրակության հետ, վորը նոր-նոր և ծագում հենց կապիտալիստական հասրակությունից և փոքր այդ պատճառով բոլոր տեսակ-էամբերից—թէ՛ անտեսական, թէ՛ սարոյական, թէ՛ ժագախը—գունզը և իրավում և իր վրա այն հին հասրակության դրոշը, վորի խորքերից նա յելել ե»:

ԱՀա հենց այս կոմունիտական հասարակությունը, վոր նոր-նոր և լույս աշխարհ յեկել կապիտալիզմի ընդերքից, վոր ամեն տեսակետից հին հասարակության գրոշմն և կրում, Մարքսն անվանում է կոմունիտական հասարակության «առաջին» կամ ամենաստորին փուլ:

Արտադրության միջոցներն արգեն դադարել են առանձին անձերի մասնավոր սեփականությունը լինելուց։ Արտադրության միջոցները պատկանում են ամբողջ հասարակությանը։ Հասարակության ամեն մի անդամ, կատարելով հանրության-անհրաժեշտ աշխատանքի մի վորոշ մասը, հասարակությունից վկայագիր ե ստանում այն մասին, թե նա այս-ինչ չափով աշխատանք է կատարել։ Այդ վկայագրի հիման վրա նա սպառման առարկաների հասարակական պահեստներից ստանում ե համապատասխան քանակությամբ պրոդուկտներ։ Հանած աշխատանքի այն քանակությունը, վորը հասարակական ֆոնդի մեջ ե մտնում, յուրաքանչյուր բանվոր, հետեւարար, ստանում է հասարակությունից ճիշտ այնքան, վորքան ինքն է տվել նրան։

Կարծես թէ «Հավասարություն» և թագավորում:

Բայց յերբ Լասալն, աչքի առաջ ունենալով այդպիսի
Հասարակական կարգերը (վորոնք սովորաբար սոցիալիզմ
են կոչվում, իսկ Մարքսի մոտ կրում են կոմունիզմի առա-
ջին փուլ անունը՝ առում ե, թէ այդ «արդարացի բաշխում
ե», թէ այդ «ամեն մեկի հավասար իրավունքն ե աշխա-
տանքի հավասար արդյունքի վրա», ապա Լասալը սիստ-
մում ե, և Մարքսը պարզաբանում ե նրա սիստը:

««Հայվասար իրավունք»»—ասում է Մարքսը—այստեղ իրոք կա, բայց այդ դեռևս «բուրժուական իրավունք» է, վորք, ինչպես և ամեն մի իրավունք, անհավանական պարունակություն է յենքը: Ամեն մի իրավունք միանալու մասնաբի գործադրություն և տարր եր մարդկանց վերաբերմամբ, զորոնք իսկապես

միանման չեն, միմյանց հավասար չեն, այդ պատճառով ել «Հավասար իրավունքը» հավասարության խախտում և անարգարություն ե»: Հիրավի, ամեն վոք, մյուսների հետ հասարակական աշխատանքի հավասար բաժին կատարելով, ստանում է հասարակական արտադրության¹ հավասար բաժինը (վերևում հիշված հանուրդները կատարելուց հետո):

Մինչեւ առանձին մարդիկ հավասար չեն, մեկն ավելի ուժեղ ե, մյուսն՝ ավելի թույլ մեկն ամուսնացած ե, մյուսը՝ վոչ. մեկն ավելի շատ յերեխա ունի, մյուսն՝ ավելի քիչ և այլն:

...«Հետեաբար, հավասար աշխատանք կատարելիս, —յեզրափակում է Մարքսը, —հասարակական սպառման ֆոնդի մեջ հավասար մասնակցության ունենալիս, մեկն իրոք ավելի շատ կտանա, քան մյուսը, մեկը մյուսից ավելի հարուստ կլինի և այլն: Այդ բոլորից խուսափելու համար իրավունքը հավասար լինելու փոխարեն պետք է անհավասար լիներ»...

Հետեաբար, կոմունիզմի առաջին փուլը դեռ չի կարող արդարություն ու հավասարություն տալ. Հարստության վերաբերյալ տարբերություններ կմնան, այն ել՝ անարդար տարբերություններ, բայց անկարելի կլինի մարդու շահագործումը մարդու ձեռքով, վորովհետեւ չի կարելի արտադրության միջոցները՝ գործարանները, մեքենանները, հողը և այլն խել և մասնավոր սեփականություն դարձնել: Զախարիանով Լասսալի մանր-բուրժուականորեն մութ Փրազը «Հավասարության» ու «արդարացիության» մասին ընդհանրապես, Մարքսը ցույց է տալիս կոմունիստական հասարակության զարգացման ընթացքը, հասարակություն, վորն ստիպված է նախ վոչնչացնել միմիայն այն «անարդարությունը», վոր արտադրության միջոցները հափշտակել են առանձին մարդիկ, և վորն անկարող է միանդամից վոչնչացնել նաև հետագա անարդարությունը, ըստ վորի սպառման առարկանները բաշխվում են «ըստ աշխատանքի» (և վոչ թե ըստ պահանջմունքների):

Վուլգար տնտեսագետները, դրանց թվում նաև բուրժուական պրոֆեսորները, նրանց թվում «մեր» Տուղանը,

շարունակ կշտամբում են սոցիալիստներին, թե իրք սրանք մուանում են մարդկանց անհավասարության մասին և «յերազում են» վոչնչացնել այդ անհավասարությունը: Ինչպես տեսնում ենք, այդպիսի կշտամբանքն ապացուցում է միմիայն պարագաների ծայրահեղ տղիսությունը:

Մարքսը վո՛չ միայն ամենաճշգրիտ կերպով հաշվի յետնում մարդկանց անխուսափելի անհավասարությունը, այլ նա հաշվի յետնում նաև այն, վոր միմիայն արտադրության միջոցների ամբողջ հասարակության ընդհանուր սեփականություն դառնալը («սոցիալիզմն» այդ բառի սովորական գործածությամբ) դեռ չ ի վերացնում բաշխման թերություններն ու «բուրժուական իրավունքի» անհավասարությունը, իրավունքի, վոր շարունակում է իշխել, քանի դեռ պրոդուկտներն «ըստ աշխատանքի» յեն բաժանվում:

...«Բայց այդ թերությունները, —շարունակում է Մարքսը, —անխուսափելի յեն կոմունիստական հասարակության առաջն փուլում, նրա այն տեսքով, յերբ նա յերկարած յերկունքից հետո ծնվում է կապիտալիստական հասարակությունից: Իրավունքը յերբեք չի կարող ավելի բարձր լինել, քան տնաեսական կարգն ու հասարակության նրանով պայմանավորված կուլտուրական զարգացումը»...

Այսպիսով, կոմունիստական հասարակության առաջին փուլում (վորը սովորաբար սոցիալիզմ են անվանում) «բուրժուական իրավունքը» լիովին չի վերացվում, այլ միմիայն մասամբ, միմիայն արդեն ձեռք բերված տնտեսական հեղաշրջման չափով, այսինքն՝ միմիայն արտադրության միջոցների վերաբերմամբ: «Բուրժուական իրավունքը» դրանք առանձին մարդկանց մասնավոր սեփականություն և ճանաչում: Սոցիալիզմը դրանք ընդհանուր սեփականություն և դարձնում: Այդ չափով—և միմիայն այդ չափով—«բուրժուական իրավունքը» վերանում է:

Բայց այսուամենայնիվ նա մնում է իր մյուս մասով, մնում է իրքեւ պրոդուկտակաների բաշխման և հասարակության անդամների միջն աշխատանքի բաշխման կարգավորիչ (վորոշող): «Ով չի աշխատում, նա չպետք է ուտի»: այս սո-

1 Զետագրում՝ «պրոդուկտի»:

ցլալիստական սկզբունքն արդեն իրականացված է. «աշխատանքի հավասար քանակության համար՝ պլոտուկտի հավասար քանակություն»—սոցիալիստական այս սկզբունքն ել իրականացված է արդեն: Սակայն, այս գեռ կոմունիզմը, չե, և այս գեռ չի վերացնում «բուրժուական իրավունքը», վորն անհավասար մարդկանց աշխատանքի անհավասար (փաստորեն անհավասար) քանակության համար հավասար քանակությամբ պլոտուկտ և տալիս:

Այդ—«թերություն ե», ասում ե Մարքոս, բայց անխուսափելի յե կոմունիզմի առաջին փուլում, վորովհետև առանց ուտոպիզմի մեջ ընկնելու չի կարելի կարծել, թե տապալելով կապիտալիզմը, մարդկեկ միանդամից կոսվորեն աշխատել հասարակության համար առանց իրավունքի վրա և նորմայի. բացի դրանից՝ կապիտալիզմի վերացումը միանգամից տնտեսական նախադրյալներ չի տալիս այդպիսի սի փոփոխման համար:

իսկ այլ նորմաներ, բացի «քուրժուական իրավունքեց», չկան։ Յեվ այդ չափով դեռ անհրաժեշտ է մնում պետությունը, զորը, պաշտպանելով արտադրության միջոցների հանրային սեփականությունը, կպաշտպաներ աշխատանքի հավասարությունն ու պրոդուկտի բաշխման հավասարությունը։

Պետովթյունը մահանում է, վորչափով այլս կապիտալիստներ չկան, այլս դասակարգեր չկան, այդ պատճառով եւ վորեւ դասակարգի նեցն չի կարելի:

Բայց պետությունը դեռևս բոլորովին չի մահացել,
վորովհետեւ զեր մնում է «բուրժուական իրավունքի» պաշտ-
պահությունը, վորը սրբագրծում է իրական անհավասա-
րությունը: Գետության լիակատար մահացման համար հար-
կամոր է լիակատար կոմունիզմ:

4. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՓՈՒԼԸ

Մարզուր շարունակում է.

քի բաժանմանը, յերբ դրա հետ միասին կանցետանա մտավոր ու Փիզի-կական աշխատանքի հակադրությունը, յերբ աշխատանքը կդադարի լոկ ապրուստի միջոց լինելուց, այլ ինքը կդառնա կանքի առաջին պահանջը, յերբ անհատների համակողմանի զարգացման հետ միասին կածեն նաև արտադրողական ուժերը և լիառատ հեղեղի նման կհոսեն հասարակական հարստության բոլոր աղբյուրները, —այն ժամանակ միայն կարելի կլնի բոլորովին հաղթահարել բուրժուական իրավունքի նեղ հորիզոնը, և հասարակությունը կկարողանա իր գրոշակի վրա գրե՛՝ «Ամեն մեկն ըստ իր ընդունակությունների, ամեն մեկն ըստ իր պահանջմունքների»:

Միմլայն այժմ մենք կարող ենք գնահատել Ենդեւսի պիտողությունների ամբողջ ճշտությունը, յերբ նա անխնակերպվ ծաղրուժանակի յեր յենթարկում «ազատություն» ու «պետություն» բառերի միացման անհեթեթությունը: Քանի կա պետություն, չկա ազատություն: Յերբ ազատություն լինի, պետություն չի լինի:

Պետության լիակատար մահացման տնտեսական հիմքը
կումունիզմի այնպիսի բարձր գարգացումն է, վորի ժամա-
նակ անհետանում և մտավոր ու Փիզիկական աշխատանքի
հակադրությունը, հետեւապես՝ անհետանում և արգել հասա-
րակական անհավասարության կարևորագույն աղբյուրներից
մեկը, այն ել՝ այնպիսի աղբյուր, վորը միանգամից վոչ մի
կերպ չի կարելի վերացնել լոկ արտադրության միջոցները
հասարակական սեփականություն գարձնելով, միմիայն կա-
պիտայիստներին սեփականազրկելով:

Այս սեփականազրկումը արտադրողական ուժերի հսկա-
յական գարգացման հնարավորություն կընձեռի։ Յել,
տեսնելով, թէ ինչպէս այժմ արդեն կապիտալիզմն անհա-
վատավի շախով կասեցնում է այդ գարգացումը, թէ ինչքան
շատ բան կարելի կլիներ առաջ շարժել արդեն ձեռք բեր-
ված արդի տեխնիկայի հիման վրա, մենք իրավունք ունենք
ամենալիակատար վստահությամբ ասելու, վոր կապիտա-
լիստների սեփականազրկումն անխուսափելիորեն մարդկա-
յին հասարակության արտադրողական ուժերի հսկայական
ընթանալու այդ գարգացումը, թէ վորքան շուտ և հասնելու

իր կապերն աշխատանքի բաժանման հետ կտրելուն, մտավոր ու փիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունը վոչչացնելուն, աշխատանքը «կենսական առաջին պահանջը» դարձնելուն, այդ մենք չդիտենք և չենք կարող դիտենալ:

Այդ պատճառով ել մենք իրավունք ունենք խոռելու միմիայն պետության անխուսափելի մահացման մասին, ընդդեմ այդ պրոցեսի յերկարատևությունը, նրա կախումը կոմունիզմի ամենաբարձր փուլի զարգացման արագությունից, և թողնելով բոլորովին բաց՝ մահացման ժամկետների ու կոնկրետ ձևերի հարցը, վորովհետեւ այդպիսի հարցեր լուծելու համար նյութ չկա:

Պետությունը լիովին մահանակ կիարողանա այն ժամանակ, յերբ հասարակությունը կիրականացնի՝ «ամեն մեկն ըստ իր ընդունակությունների, ամեն մեկին ըստ իր պահանջմունքների» կանոնը, այսինքն՝ յերբ մարդիկ այն աստիճան կոսկորեն համակեցության հիմնական կանոնները պահպանել և յերբ նրանց աշխատանքն այնքան արտադրողական կլինի, վոր նրանք հոգարակամ կոկուն աշխատել ըստ ընդունակությունների: «Բուրժուական իրավունքի նեղ հորիզոնը», վոր հարկադրում ե Շեյլոկի¹ խոտասրությամբ հաշիվ անել, թե չինի ուրիշից մի կես ժամ ավելի շինի ուրիշից մի քիչ ավելի պակաս վճար ստացիւնաս, այդ նեղ հորիզոնն այն ժամանակ մարդիկ անցած կլինեն: Այն ժամանակ պրոդուկտների բաշխումը հասարակության կողմից նորմաֆորում չի պահանջի, թե յուրաքանչյուրն ինչ քանակությամբ պրոդուկտ պետք ե ստանամենքը մեկն ազատորեն կիրացնի «ըստ իր պահանջմունքի»:

Բուրժուական տեսակետից հեշտ ե այդպիսի հասարակական կառուցվածքը «զուտ ուտոպիա» հայտարել ու կական կառուցվածքը «զուտ ուտոպիա» հայտարել ու հոգուալ այն բանի վրա, թե սոցիալիստները խոստանում են ամեն մեկին հասարակությունից ուզած քանակությամբ

¹ Շեյլոկ—վաշխառուի մի տիպ Շեքսպիրի «Վենետիկի վաճառական» դրամայում, վորը, ի հատուցումն պարտքի, պահանջում է մի փունտ միու պարտապանի մարմնից:

տրյուֆել, ավտոմոբիլ, գաշնամուր և այլն ստանալու իրավունք, առանց վորեւե վերահսկողության՝ առանձին քաղաքացու աշխատանքի վրա: Մինչև այժմ ել այդպիսի հոգուով են գլուխն ազատում բուրժուական «գիտնականների» մեծամասնությունը, վորոնք դրանով ցույց են տալիս թի' իրենց տղիտությունը և թի' կապիտալիզմի շահագիտական պաշտպանությունն իրենց կողմից:

Տղիտություն ե, վորովհետև վոչ մի սոցիալիստի մըտքով ել չի անցել «խոստանալ», վոր կոմունիզմի զարդացման բարձրագույն փուլը վրա յե հասնելու, իսկ մեծ սոցիալիստների կանխատեսությունը, թե այն գալու յե, յնթադրում ե վոչ աշխատանքի այժմյան արտադրողականությունը, վո՛չ ել այժմյան քաղքենուն, վորը Պոմյալովիկու մոնթերի նման ընդունակ և «զուր տեղը» փշտղնելու հասարակական հարստության պահևստները և անկարելի բաներ պահանջելու:

Մինչև այն ժամանակ, յերբ կոմունիզմի «բարձրագույն» փուլը, սոցիալիստներն ամենալաւ վերահսկողություն են պահանջում հասարակության ու պետության կողմից աշխատանքի չափի ու սպառման չափի վրա, միայն թէ՝ այդ վերահսկողությունը պետք ե սկսվի կապիտալիստների սեփականագրկումից, բանվորների վերահսկողությունից կապիտալիստների վրա և այն պետք ե իրականացնի վո՛չ թե չնորվիկների պետությունը, այլ զինված բանվորների պետությունը:

Բուրժուական իդեոլոգների (ու նրանց՝ ոլու ծերեթելիների, Զերնովների ու Ծնկ. նման պոչերի) կողմից կապիտալիզմի շահագիտական պաշտպանության եյությունը հենց այն ե, վոր նրանք հեռավոր ասպարայի մասին կատարավոր վեճերով ու զրույցներով նենգափնխում են այսորվածքը քաղաքականության կինսական ու հրատապ հարցը, այն վաքագականության կինսական ու հրատապ հարցը, թե կապիտալիստների սեփականագրկումը, բոլոր քաղաքացիներին մել խոշոր «սինդիկատի», այսինքն՝ ամբողջ պետության աշխատողներ ու ծառայողներ դարձնելը, և այդ ամբողջ սինդիկատի ամբողջ աշխատանքն իսկապես ղեմուկատական պետության, բանվորների ու զինվորների պատ

գամավորների խորհուրդների պետությանը լիովին հպատակեցնելը:

Իստ եյության՝ յերբ գիտնական պրոֆեսորը, իսկ նրա հետեւց քաղքենին, իսկ սրա հետեւց պարոնայք Ծերեթելիներն ու Զերնովները խոսում են բոլելիկների անխոհեմ ու տոպիաների, դեմագոգիական խոստումների մասին, սոցիալիզմ «մտցնելու» անկարելիության մասին, նրանք նկատի ունեն կոմունիզմի հենց բարձրագույն ստագիան կամ փուլը, վորը «մտցնել» վո՛չ միայն վոչ վոք չի խոստացել, այլ մտքովն ել չի անցկացրել, վորովհետև «մտցնել» այն առհասարակ չի կարելի:

Յեկ այստեղ մենք հասել ենք սոցիալիզմի ու կոմունիզմի միջև յեղած գիտական տարբերության այն հարցին, վոր շոշափել ե Ենդելսն իր վերը բերված դատողության մեջ «սոցիալ-դեմոկրատներ» անվան անձիշտ լինելու մասին: Տարբերությունը կոմունիզմի առաջին կամ ստորին և բարձրագույն փուլերի միջև ամազայում քաղաքականորեն, հավանաբար, վիթխարի կլինի, բայց հիմա, կապիտալիզմի ժամանակ, ծիծաղելի կլինին ընդունել այն, և այդ տարբերությունն առաջին պլանը մղել կարող ելին գուցե միմիայն առանձին անարխիստներ (յեթե անարխիստների շարքերում գեռ մնացել են այնպիսի մարդեկ, վորոնք վոռչինչ չեն սովորել Կրոպոտկինների, Գրավի, Կորնելիսենի ու անարխիզմի մյուս «աստղերի» «պլեխանովյան» փոխակերպությունից հետո, յերբ նրանք սոցիալ-շովիճնետներ դարձան կամ անարխո-խրամատականներ, ինչպես ասել ե պատիվն ու խիղճը պահպանած սակալաթիվ անարխիստներից մեկը՝ Գեն):

Բայց սոցիալիզմի և կոմունիզմի միջև յեղած գիտական տարբերությունը պարզ է: Այն, ինչ վոր սովորաբար սոցիալիզմ են անվանում, Մարքսն անվանել է կոմունիստական հասարակության «առաջին» կամ ստորին փուլը: Վորչափով լինդհանուր սեփականություն են դառնում արտադրության միջոցները, այդ չափով այստեղ ել կարելի յե «կոմունիզմ» բառը գործածել, յեթե չմոռանանք, վոր այդ իւրակատար կոմունիզմ չէ: Մարքսի պարզաբանումների խո-

չոր նշանակությունն այն է, վոր նա այստեղ ել հետեւղականորեն կիրառում ե մատերիալիստական դիալեկտիկան, դարձացման ուամունքը, կոմունիզմը դիտելով իբրև կապիտալիզմից զարդացող մի բան: Փոխանակ սխոլաստիկ-մտացածին, «Հնարովի» բնորոշումների և բառերի շուրջը (ի՞նչ ե սոցիալիզմը, ի՞նչ ե կոմունիզմը) անպատճ վիճաբանություններ անելու՝ Մարքսը տալիս ե այն բանի վերջնաժողովունը, թե ինչը կարելի յե կոմունիզմի տնտեսական հասունության աստիճաններ անվանել:

Իր առաջին փուլում, իր առաջին աստիճանի ժամանակ, կոմունիզմը գեռ չի կարող տնտեսապես լիովին հասուն լինել, լիովին ազատ լինել կապիտալիզմի ավանդություններից կամ հետքերից: Այստեղից ե բղիսում այն հետաքրքրական յերկույթը, ինչպիսին ե «բուրժուական իրավունքի ներ հորիզոն» պահպանումը կոմունիզմի ժամանակ, նրա առաջին փուլում: Բուրժուական իրավունքը սպառման պրոդուկտների բաշխման վերաբերմամբ, իհարկե, անխուսափելիութեան նաև բուրժուական պետություն և առանց այն ապարատի, վորովհետև իրավունքը վոչինչ ե առանց այն ապարատի, վորը կարող ե հարկադրել այդ իրավունքի նորմաները կատարելու:

Դուրս ե գալիս, վոր կոմունիզմի շրջանում վորոշ ժամանակի ընթացքում վո՛չ միայն բուրժուական իրավունքն ե մնում, այլ մինչև իսկ նաև բուրժուական պետությունն առանց բուրժուակիայի:

Այդ կարող ե պարագոքս կամ պարզապես մտքի դիալեկտիկական խաղ թվական վորի մեջ հաճախ մեղադրում են մարքսիզմն այն մարդեկ, ովքեր ամենաչին ջանք անդամ չեն թափել ուսումնասիրելու նրա չափազանց խոր բովանդակությունը:

Իսկ իրոք, չնի մնացորդները նորի մեջ՝ կյանքը ցույց ե տալիս մեղ ամեն քայլափոխում, թե՛ ընության և թե՛ հասարակության մեջ: Յեկ Մարքսը վո՛չ թե քմահաճորեն մի կտոր «բուրժուական» իրավունք և մացրել կոմունիզմի մեջ, այլ վերցրել ե այն, ինչ վոր տնտեսապես ու քաղա-

քականապես անխուսափելի յե կապիտալիզմի ընդերֆից յելած հասարակության մեջ:

Դեմոկրատիան ահազին նշանակություն ունի այն կըռվում, վորը մղում և բանվոր դասակարգը հանուն իր ազատագրության կապիտալիստների դեմ: Բայց դեմոկրատիան ամենեին այնպիսի մի սահման չե, վորը չի կարելի անցնել, այլ միմիայն ֆեոդալիզմից դեպի կապիտալիզմ և կապիտալիզմից գեպի կոմունիզմ տանող ճանապարհի ետապներից մեկն ե:

Դեմոկրատիան նշանակում է հավասարություն: Հասկանալի յե, թե վորքան մեծ նշանակություն ունի պրոլետարիատի պայքարը հավասարության համար և հավասարության լոգունդը, յեթե ճիշտ հասկանանք այն՝ դասակարգի վոչչացման իմաստով: Բայց դեմոկրատիան նշանակում և միմիայն ֆորմալ հավասարություն: Յեվ հենց վոր իրականանա հասարակության բոլոր անդամների հավասարությունն արտադրության միջոցներին տիրելու վերաբերմամբ, այսինքն՝ իրականանա աշխատանքի հավասարությունը, աշխատավարձի հավասարությունը, մարդկության առաջ անխուսափելիորեն կանդնելու յե ավելի առաջ գնալու հարցը, ձեական հավասարությունից իրական հավասարության անցնելու, այսինքն՝ իրականացնելու «ամեն մեկն ըստ իր ընդունակությունների, ամեն մեկին ըստ իր պահանջմունքների» կանոնը: Թե մարդկությունն ինչպիսի ետապներով, ինչպիսի գործնական միջոցառումներով կընթանա դեպի այդ բարձրադրույն նպատակը, մենք չդիտենք և չենք կարող գիտենալ: Բայց կարեոր և պարզել մեզ համար, թե վորքան անսահման կեղծ է այն սովորական բուժությական պատկերացումը, իրը թե սոցիալիզմն ինչ-վոր մի մեռած, քարացած, միանգամ ընդմիշտ տրված բան և, այնինչ իսկապես միմիայն սոցիալիզմից և սկսվելու արագ իրական, իսկապես մասսայական, բնակչության մեծամասնության, ապա նաև ամբողջ բնակչության մասնակցությամբ տեղի ունեցող առաջընթաց շարժումը հասարակական ու անձնական կյանքի բոլոր ասպարեզներում:

Դեմոկրատիան պետության ձե և, նրա այլատեսակու-

թյուններից մեկը: Յեվ, հետեւաբար, նա հանդիսանում է, ինչպես և ամեն մի պետություն, բոնության կազմակերպված, սիստեմատիկ կիրառումը մարդկանց վերաբերմամբ: Այս մի կողմից: Բայց, մյուս կողմից, այն նշանակում է քաղաքացիների հավասարության ֆորմալ ճանաչումը, ճանաչում այն բանի, վոր բոլորը հավասար իրավունք ունեն սեփական կառուցվածքը վորոշելու և այն կառավարելու: Իսկ դա, իր հերթին, կապված է նրա հետ, վոր դեմոկրատիան, իր զարգացման վորոշ աստիճանի ժամանակ, նախ, համախմբում և կապիտալիզմի դեմ հեղափոխական դասակարգին՝ պրոլետարիատին, և նրան հնարավորություն ետալիս՝ կոտրել, ջարդուիչուր անել, յերկրի յերեսից ջնջել բուժության, թեկող և հանրապետական-բուժության, պետական մեքենան, մշտական բանակը, վոստիկանությունը, չինունիկությունը, փոխարինել նրանց ավելի դեմոկրատական, բայց այնուամենայնիվ դեռ պետական մեքենայով՝ զինված բանվորական մասսաների ձևով, վորոնք հանդում են ժողովրդի միահամուռ մասնակցությանը միլիցիային:

Այստեղ «քանակը վորակի յե փոխվում»: Դեմոկրատիզմի այդպիսի աստիճանը կապված է բուժության հասարակության շրջանակներից գուրս դալու, նրա սոցիալիստական վերակառուցումն սկսելու հետ: Յեթե իսկապես բոլորը մասնակցում են պետության կառավարմանը, այդտեղ կապիտալիզմն արգեն չի կարող դիմանալ: Յեվ կապիտալիզմի զարգացումն, իր հերթին, նախադրյալներ և ստեղծում այն բանի համար, վորպեսզի իսկապես «բոլորը» կարողանան մասնակցել պետության կառավարմանը: Այդպիսի նախադրյալներից են ընդհանուր գրադիտությունը, վորն արդեն իրականացված են մի շարք ամենից ավելի առաջավոր կապիտալիստական յերկրներում, ապա՝ միլիոնավոր բանվորների «վարժեցումն ու կարդապահ դարձնելը» փոստի, յերկաթուղիների, խոշոր գործարանների, խոշոր առևտրի, բանկային գործի և այլն և այլն խոշոր, բարդ, հանրայնացված ապարատի միջոցով:

Այդպիսի տնտեսական նախադրյալներ ունենալով՝ մի-

անդամայն հնարավոր ե անմիջապես, այսորվանից մինչեւ վաղը, անցնել այն գործին, վոր տապալելով կապիտալիստներին ու չինովնիկներին՝ արտադրության ու բաշխման վերահսկողության գործում, աշխատանքի ու արդյունքների հաշվառման գործում նրանց փոխարինենք զինված բանվորներով, ամբողջովին զինված ժողովրդով։ (Վերահսկողության ու հաշվառման հարցը չպետք է շփոթել ինժեներների, գյուղատնտեսների և այլ գիտականորեն ոլատրաստված անձնակազմի հարցի հետ։ այդ պարուններն այսոր աշխատում են՝ հպատակվելով կապիտալիստներին, վաղն ել ավելի լավ կաշխատեն՝ հպատակվելով զինված բանվորներին)։

Հաշվառում ու վերահսկողություն—ահա այն գլխավոր բանը, վորը պահանջվում է կոմունիստական հասարակության առաջին փուլը «կարգի գցելու» համար, նրա կանոնավոր գործունեյության համար։ Այստեղ բոլոր քաղաքացիները դառնում են պետության վարձու ծառայողները, պետություն, վորպիսին հանդիսանում են զինված բանվորները։ Բոլոր քաղաքացիները դառնում են մեկ համաժողովրդական, պետական «սինդիկատի» ծառայողներ ու բանվորներ։ Ամբողջ խնդիրն այն է, վոր նրանք հավասարապես աշխատեն, ճշտիվ պահպանելով աշխատանքի չափը, և հպատակ վարձատրություն ստանան։ Այս բանի հաշվառումը, որա վերահսկողությունը կապիտալիզմը ծայրահեղ չափով պարզ է և դարձրել է հսկողության ու գրանցման թվաքանական չորս գործողությունները գիտենալու և համապատասխան անդորրագրեր տալու արտավոր պարզ, ամեն մի գրագետ մարդու համար մատչելի գործառնություններ¹։

¹ Յերբ պետությունն իր Փունկցիաների ամենագլխավոր մասով վեր և ածվում այսպիսի հաշվառման ու վերահսկողության հենց բանվորների կողմից, այն ժամանակ նա դաշտարում է «քաղաքական պետություն» լինելուց, այն ժամանակ «հասարակական փունկցիաները քաղաքական փունկցիաներից հասարակ վարչական փունկցիաների յեն փոխարկվում» (հմտ. վերը, IV գլ. § 2, Ենդելսի բանավեճն անարիստների հետ)։ Մանոքարություն կենինի։

Յերբ ժողովրդի մեծամասնությունը կսկսի ինքնուրույնաբար և ամենուրեք այդպիսի հաշվառում, այդպիսի վերահսկողություն անել կապիտալիստների (վորոնք հիմա ծառայողներ են դարձել) ու պարոն ինտելիգենտների վերաբերմամբ, վորոնք դեռ կապիտալիստական հակումներ են պահպանում, այն ժամանակ այդ վերահսկողությունն իսկապես ունիվերսալ, ընդհանրական, համաժողովրդական կղառնա, այն ժամանակ վոչ մի կերպ հնարավոր չի լինի նրանից խուսափել, «թագնվելու տեղ չի լինի»։

Ամբողջ հասարակությունը մի գրասենյակ ու մի գործարան կլինի, աշխատանքի հպատարությամբ ու վարձի հավասարությամբ։

Բայց այդ «գործարանային» կարգապահությունը, վոր կապիտալիստներին հաղթահարած, շահագործողներին տապալած պրոլետարիատը կտարածի ամբողջ հասարակության վրա, վո՛չ մի կերպ չի հանդիսանում վո՛չ մեր իդեալը, վո՛չ մեր վերջնական նպատակը, այլ միմիայն մի աշտինան է, վորն անհրաժեշտ է հասարակությունը կապիտալիստական շահագործման գարշություններից ու նողկալիություններից արմատապես մաքրելու և հետագա առաջնապահման համար։

Այն մոմենտից սկսած, յերբ հասարակության բոլոր անդամները կամ գոնե նրանց ահապին մեծամասնությունն ինքը կսովորի կառավարել պետությունը, այդ գործն իր ձեռքը կառնի, «կարգի կցցի» վերահսկողությունը չնչին փոքրամասնություն կազմող կապիտալիստների վերաբերմամբ, այն պարոնիկների վերաբերմամբ, վորոնք ուղղում են կապիտալիստական հակումներ պահպանել, այն բանվորների վերաբերմամբ, վորոնց խորապես այլասերել և կապիտալիզմը, —այդ մոմենտից սկսում ե անհետանալ առաջսարակ ամեն մի կառավարչության կարիքը։ Վորքան ալելի լիակատար և դեմոկրատիան, այնքան ալելի մոտ ե այն մոմենտը, յերբ նա ավելորդ է դառնում։ Վորքան ալելի դեմոկրատական և այն «պետությունը», վորը բաղկացած և զինված բանվորներից և «բառի բուն իմաստով»

այլեւս պետություն չի» Հանդիսանում, այնքան ավելի ա-
բար ե սկսում մահանալ ամեն մի պետություն:

Վորովհետև, յերբ բոլորը կսովորեն կառավարել և
խսկապես կսկսեն ինքնուրույնաբար կառավարել հասարակա-
կան արտադրությունը, ինքնուրույնաբար կենսագործել
ձրիակերների, աղաների, սրբիաների ու «կապիտալիզմի»
տրագիցիաները պահպանող» ուրիշ նմանների հաշվառումն
ու վերահսկողությունը, այն ժամանակ այդ համաժողո-
վըրդական հաշվառումից ու վերահսկողությունից դուրս
մնալն անխուսափելիորեն այնքան անսասելի դժվար կլինի,
այնպիսի ամենահազվադյուտ բացառություն կդառնա, հա-
վանորեն այնքան արագ ու լուրջ պատժի կենթարկվի (վո-
րովհետև զինված բանվորները դործնական կյանքի մար-
դիկ են և վոչ թե սենտիմենտալ ինտելիգենտիկներ, և հա-
զիվ թե թույլ տան կատակ անել իրենց հետ), վոր ամեն
չի մարդկային համակեցության վոչ-բարդ, հիմնական
կանոնները կատարելու անհրաժեշտությունը :

Յեվ այն ժամանակ լայնորեն կրացվի դուռը կոմունիստական հասարակության առաջին փուլից նրա բարձրագույն փուլին անցնելու համար, իսկ դրա հետ միասին նաև պետության լիակատար մահացման համար:

VI զԼՈՒՅ

ՄԱՐՔԻԶՄԻ ԳՈԵԿԱՑՈՒՄՆ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Պետության հարաբերության հարցը դեպի սոցիալական հեղափոխությունը և սոցիալական հեղափոխության հարաբերության հարցը դեպի պետությունը, ինչպես նաև ընդհանրապես հեղափոխության հարցը շատ քիչ է զբաղեցրել Անտելինացիոնալի (1889—1914) ամենաականալոր տեսաբաններին ու հրապարակախոսներին: Բայց ոպորտունիղմի աստիճանական աճման այն պրոցեսի մեջ, վորը 1914 թվին հասցրեց Անտելինացիոնալի կործանմանը, ամենից ավելի բնորոշն այն է, վոր նույնիսկ այն ժամանակ, յերբ կիս մոռեցել ելին այդ հարցին, աշխատում ելին շրջանցել այն, կամ չելին նկատում այն:

Հնդկանուր առմամբ կարելի յե ասել, վոր պրոլետա-
րական հեղափոխության դեպի պետությունն ունենալիք
հարաբերության հարցից խուսափելուց,—մի խուսափում,
վորը ձեռնաու յեր ոպորտունիզմի համար ու սնում եր
նրան, —բղիսեց մարքսիզմի աղավաղումն ու նրա կատարյալ
գուեհկացումը:

Այդ տիտուր պըսցեսը զոնե համառոտակի բնորոշելու համար, վերցնենք մարքուրմի ամենականավոր տեսաբաններին՝ Պիլիսանովին ու Կառուցկուն:

1. ՊԱԵԽԱՆՈՎԻ ԲԱՆԱԿՈՒԻՎՆ ԱՆԱՐՔԵԼՈՒՏՆԵՐԻ ՀԵՏ

Պլեխանովն անարխիզմի ու սոցիալիզմի հարաբերության հարցին մի հատուկ բրոցյուր և նվիրել՝ «Անարխիզմ ու սոցիալիզմ» վեճնադրով, վորը լույս և տեսել գերմանեցն 1894 թվական:

Պլեխանովը ճարպկությամբ կարողացել է այդ հարցու այնպես քննել, վոր անարխիզմի դեմ մղվող պայքարի մեջ ըրլորդին շրջանցել ե ամենաայժմեյականը, հրատապն ու քաղաքականորեն ամենից ավելի եյականը, այն ե՝ հեղափոխության հարաբերությունը դեպի պետությունը և պետության հարցն ընդհանրապես։ Նրա բրոցյուրը յերկու մասի յերաժանվում մեկը—պատմական-դրական մասն և, վորտեղ արժեքավոր նյութ կա Շատրների, Պրուդոնի և ուրիշների իդեաների պատմության մասին։ Մյուս մասը Փիլիսոփերականն ե՝ գուշիկ դատողություններով այն թեմայի մասին, թե անարխիստին բանդիտից տարբերելն անկարելի յե։

Թեմաների այս զուդադրումը չափազանց դլարձալի ու չափազանց բնորոշ ե Պլեխանովի ամբողջ գործունեյության համար Ծուսաստանի հեղափոխության նախորյակին ու հեղափոխության շրջանի ընթացքում։ 1905—1917 թվականներին Պլեխանովը հենց այդպես ել ցույց տվեց իրեն՝ կիսադոկտորինյոր, կիսաֆիլիստիր, վորը քաղաքականության մեջ բուրժուազիայի պոչից եր ընթանում։

Մենք տեսանք, թե ինչպես Մարքսն ու Ենդելսը, բանկով մղելով անարխիստների հետ, ամենից ավելի խնամքով պարզեցին իրենց հայցքները հեղափոխության հարաբերության մասին դեպի պետությունը։ Ենդելսը, 1891 թվին հրատարակելով Մարքսի «Գոթայի ծրագրի քննադատությունը», գրում ե, թե «մենք (այսինքն՝ Ենդելսն ու Մարքսը) այն ժամանակ ամենայեռուն պայքարի մեջ եյինք գտնվում Բակունինի ու անարխիստների դեմ—(Առաջին) Բնտերնացիոնալի Հասդի կոնդրեսից հետո հազիվ յերկու տարի յեր անցել»։

Անարխիստները փորձում եյին հենց Փարիզի կոմունան այսպես ասած՝ «իրենցը» հայտարարել, վորն իրը թե հաստատում ե իրենց ուսմունքը, բայց նրանք ամենենին չեյին հասկացել կոմունայի դասերն ու այդ դասերի վերլուծությունը Մարքսի կողմից։ Այն կոնկրետ-քաղաքական հարցերի նկատմամբ, թե հարկավո՞ր ե, արդյոք, ջարդություր անել հին պետական մեքենան և ինչո՞վ պետք

ե փոխարինել այն—անարխիզմը վոչինչ չուվեց, վոր գոնեամությապես համապատասխաներ ճշմարտությանը։

Բայց խոսել «անարխիզմի ու սոցիալիզմի» մասին՝ աչքաթող անելով պետության ամբողջ հարցը, չնկատելով մարքսիզմի ամբողջ գարզացումը կոմունայից առաջ և հետո, այդ նշանակում եր անխուսափելիորեն դեպի ոպորտունիզմ գլորվել։ Վորովհետեւ ոպորտունիզմի համար հենց ամենից ավելի այն ե հարկավոր, վոր ամեններն չդըրվեն հենց այժմ մեր մատնանշած յերկու հարցերը։ Այդ արդեն ոպորտունիզմի հաղթությունն ե։

2. ԿԱՌԻՑԿՈՒ ԲԱՆԱԿՈՒԽՎՆ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՀԵՏ

Ռուսաց գրականության մեջ, անկատկած, անչափ ամելի մեծ քանակությամբ են թարգմանվել կառցկու յերկերը, քան վորեւ այլ գրականության մեջ։ Զուր չե, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատներից վոմանք կատակարանում են, թե Կառցկու գրվածքներն ամելի շատ Ռուսաստանում, քան թե Գերմանիայում (փակագծերի մեջ ասենք՝ այդ կատակի մեջ շատ ավելի խոր պատմական բովանդակություն կա, քան կարծում են նրանք, ովքեր հրապարակ են նետել այդ կատակը։ այդ այն ե, վոր ոռւս բանվորները 1905 թվին անորինակ ուժեղ, չտեսնված պահանջ առաջադրելով աշխարհում յեղած սոցիալ-դեմոկրատական լավագույն գրականության լավագույն յերկերի նկատմամբ և ստանալով այդ յերկերի՝ ուրիշ յերկըներում չտեսնված քանակությամբ թարգմանություններ ու հրատարակություններ, հենց զրանով, այսպես ասած, արագացրած յեղանակով փոխադրեցին մեր պրոլետարական շարժման յերիտասարդ հողի վրա հարեան, ավելի առաջավոր յերկը հսկայական փորձը։

Մեղ մոտ Կառցկին առանձնապես հայտնի յե, բացի մարքսիզմի իր հանրամատչելի շարադրանքից, իր բանակավով ոպորտունիստների ու նրանց պարագլուխ Բերնաշտայնի դեմ։ Բայց համարյա անհայտ ե այն փաստը, վորը չի կարելի գանց առնել, յեթե մեր առաջ խնդիր ենք դնում հետամտել, թե ինչպես Կառցկին վլորվելով հասել

և անհավատալիորեն—անսարդ գլխակորույս վիճակի և սոցիալ-շովիմիզմի պաշտպանության 1914—1915 թվականների ամենամեծ ճշնաժամի ժամանակի: Այդ հենց այն փաստըն է, վոր Կառուցկին, ոպորտունիզմի ամենաականավոր ներկայացուցիչների դեմ (Ֆրանսիայում՝ Միլյուան ու Փորես, Գերմանիայում՝ Բերնշտայն) ունեցած իր յելույթից առաջ, շատ խոշոր տատանումներ ցուցաբերեց: Մարքսիստական «Յարյ»-ն, վորը լույս եր տեսնում 1901—1902 թվականներին Շառուտղարտում և հեղափոխական-պրոլետարական հայացքներ եր պաշտպանում, պատպված յեղալ բանակուվ միել Կառուցկու դեմ, «կառուչուկային» անլանել այն կիսակատար, խուսափողական, ոպորտունիստների նկատմամբ հաշտեցուցիչ բանաձեռ, վորն առաջարկել եր նա 1900 թվին Փարիզի միջազգային սոցիալիստական կոնվենում: Գերմանական դրականության մեջ՝ տարկիցին Կառուցկու նոմակները, վորոնք յերեան հանեցին նրա ունեցած վոչնիվագ տատանումները Բերնշտայնի դեմ արշավանքի յելնելուց առաջ:

Սակայն, անհամեմատ ավելի մեծ նշանակությունը ունի այն հանդամանքը, վոր հենց ոպորտունիստների դեմ վարած իր բանակալում, վոր հենց նրա հարցադրման ու հարցը քննարկելու յեղանակի մեջ, մենք այժմ, յերբ ուսումնասիրում ենք մարքսիզմի դեմ Կառուցկու կատարած նորագույն դավաճանության պատմությունը, սիստեմատիկ թեքում ենք նկատում դեպի ոպորտունիզմը՝ հատկապես պետության հարցի վերաբերմամբ:

Վերցնենք Կառուցկու առաջին խոշոր յերկն ոպորտունիզմի դեմ, նրա «Բերնշտայնն ու սոցիալ-դեմոկրատական ծրագիրը» գիրքը: Կառուցկին մանրամասնորեն հերքում է Բերնշտայնին: Բայց ահա ինչն է բնորոշ:

Բերնշտայնը, իր հերոսարատորեն-հռչակալոր «Սոցիա-

1 Կառուցկին կոնքեսում մի բանաձեւ անցկացրեց, վորը թույլատրում եր, թեև վերապահություններով, սոցիալիստների մուտքը բուրժուական կառավարության մեջ:

«Յարյ»-ութամական հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի բերդիական որդանը, լույս եր տեսնում էնինի, Պետանովի, Ակաբլովի, Մարտիվի, Զառուլիչի և Պոտրեսովի խմբագրությամբ:

Ի՞զմի նախադրյաներում» մարքսիզմը մեղադրում է «քլամելիզմի» մեջ (մի մեղադրանք, վորն այն որվանից Հաղարալոր անդամ կը կնել են ոպորտունիստներն ու լիբերալ բուրժուաները Ռուսաստանում հեղափոխական մարքսիզմի ներկայացուցիչների՝ բուլևիկների դեմ): Այդ առթիվ Բերնշտայնը հատկապես կանգ է առնում Մարքսի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» աշխատության վրա և փորձում ե-ինչպես տեսանք՝ շատ անհաջող կերպով՝ Մարքսի հայեցակետը Կոմունայի դասերի նկատմամբ նույնացնել Պրուդոնի տեսակետի հետ: Բերնշտայնի հատուկ ուշադրությունն ե գրավում Մարքսի այն յեղակացությունը, վորն ընդդեմ ե Մարքսը «կոմունիստական մանիֆեստի» 1872 թվականի առաջաբանում և վորն ասում է. «բանվոր դասակարգը չի կարող պարզապես իր ձեռքն առնել պատրաստի պետական մեքենան և դործի գնել այն՝ իր սեփական նույնակաների համար»:

Այս ասույթն այնքան է «դուր յեկել» Բերնշտայնին, վոր նա վոչ պակաս քան յերեք անդամ կը կնում է իր դրքում, այն մեկնարանելով ամենաաղալաղված, ոպորտունիստական խմասով:

Ինչպես տեսանք, Մարքսն ուղում է առել, թե բանվոր դասակարգը պետք է ջարդի, փշրի, պայթեցնի (Sprengung, պայթեցում, — ենդելսի գործածած արտահայտությունը) ամբողջ պետական մեքենան: Իսկ Բերնշտայնի մոտ այնպես է դուրս գալիս, վոր իբր թե Մարքսն այդ խոսքերով նախադրչացրել ե բանվոր դասակարգին ծայրահեղ հեղափոխականությունից՝ իշխանությունը գրավելու ժամանակ:

Մարքսի մտքի ավելի կոպիտ ու այլանդակ աղավաղում յերեակայել անդամ չի կարելի:

Իսկ ի՞նչպես վարվեց Կառուցկին Բերնշտայնիադայի իր ամենամանրամասն հերքման մեջ:

Նա խուսափեց մարքսիզմի այդ կետում ոպորտունիզմի կատարած աղալաղման ամբողջ խորությունը քննարկելուց: Նա մեջ է բերել Մարքսի «Քաղաքացիական պատերազմի» առթիվ ենդելսի գրած առաջարանից վերելում հիշված հատվածը, ասելով թե, ըստ Մարքսի, բան-

վոր դասակարգը չի կարող պարզապես տիրանալ պատրաստի պէտական մէքենային, բայց առհասարակ կարող են ըստ տիրանալ, և ուրիշ վոչինչ։ Այն մասին, թե Բերն-շտայնը Մարքսին այնպիսի մի միտք եւ վերաբերել, վոր ուղղակի հակառակ եւ Մարքսի իսկական մտքին, թե Մարքսը 1852 թվականից սկսած առաջ եր մզում պըուլետարական հեղափոխության կողմից պէտական մեքենան «ջարդուփուր» անելու խնդիրը, այդ մասին կառուցկին վոչ մի խոսք չի ասում։

Հետևանքն այն յեղավ, վոր մարքսիզմի և ոպորտունիզմի միջև յեղած ամենաեյական տարրերությունը՝ պըուլետարական հեղափոխության խնդիրների վերաբերմամբ՝ կառուցկու մոտ ավաղված դուրս յեկալ։

«Պրոլետարական գիտատուրայի պըորեմի հարցի լուծումը, — զրում եր կառուցկին Բերնշտայնի «դեմ», — մէնք միանդամայն հանդիսա կերպով կարող ենք ապագային թողնել» (գերմ. հրատարակություն, էջ 172)։

Սա վո՞չ թե բանակուիլ եւ Բերնշտայնի դեմ, այլ, ըստ եյության, զիջումն են նրան, գիրքերի հանձնումն ոպորտունիզմին, վորովհետեւ ոպորտունիստներին առայժմ ավելի վոչ մի բան ել պետք չե, քան «միանդամայն հանդիսա կերպով ապագային թողնել» պրոլետարական հեղափոխության խնդիրների բոլոր արմատական հարցերը։

Մարքսն ու Ենդելսը 1852 թվականից մինչև 1891 թվականը, քառասուն տարի շարունակ, պրոլետարիատին ուսուցանում եյին, թե նա պետք եւ պետական մէքենան ջարդուփուր անիր։ Իսկ կառուցկին 1899 թվին, այն ժամանակ, յերբ ոպորտունիստներն այդ կետում բոլորովին դավաճանելին մարքսիզմին, նենգափոխում են այն հարցը, թե անհրաժեշտ եւ արդյոք այդ մէքենան ջարդուփչուր անել, ջարդուփչուր անելու կոնկրետ հարցով և փրկություն եւ վորոնում այն «անվիճելի» (և անստուդ) Փիլիստերական ճշմարտության հովանու ներքո, թե կոնկրետ ձեւերը մէնք առաջուց իմանալ չե՞նք կարող։

Մարքսի և կառուցկու միջև անդունդ եւ ընկած՝ նրանց վերաբերմունքի տեսակետից գեպի այն խնդիրը, թե պըու-

լետարական կուսակցությունը բանվոր դասակարգին ինչպես պետք եւ պատրաստի հեղափոխության համար։

Վերցնենք կառուցկու հետեւյալ, ավելի հասուն յերկը, վորը նույնպես խոչոր չափով ոպորտունիզմի սխալների հերքմանն են նվիրված։ Այդ—նրա «Սոցիալական հեղափոխություն» բրոցյուրն եւ Զեղինակն այստեղ իրեւ հատուկ թեմա վերցրել եւ «պրոլետարական հեղափոխության» ու «պրոլետարական ռեժիմի» հարցը։ Զեղինակը չափազանց շատ արժեքավոր բան եւ տվել, բայց հատկապես հենց պէտության հարցը զանց ե առել։ Բրոցյուրում ամենուրեք խոսվում եւ պետական իշխանությունը նվաճելու մասին, և ուրիշ վոչինչ, այսինքն՝ այնպիսի մի ձեակերպում եւ ընդունված, վորն ոպորտունիստներին զիջում ե անում, վորչափով ընդունում ե իշխանության նվաճումն առանց պէտական մէքենան խորտակելու։ Հենց այն, ինչ վոր Մարքսը 1872 թվին «Կոմունիստական մանիֆեստ» ծրագրում «Հնացած» եւ հայտարարել, կառուցկին 1902 թվին վերակենդանացնում ե։

Բրոցյուրում հատուկ պարագրաֆ են նվիրված «սոցիալական հեղափոխության ձեերին ու զենքին»։ Այստեղ խօսվում ե թե՛ մասսայական քաղաքական դործագուլի, թե՛ քաղաքացիական պատերազմի, թե՛ «արդի խոչոր պէտության ուժի» այնպիսի «զործիքների մասին, ինչպիսիներն են բյուրոկրատիան ու զորարանակը», բայց այն բանի մասին, ինչ վոր արդեն սովորեցրել եւ Կոմունան բանվորներին, — և վոչ մի խոսք։ Ակներեւ, վոր Ենդելսը զուր չեր նախագլուխացնում, առանձնապես գերմանական սոցիալիստներին, «սնահավատ հարգանքից» զեպի պետությունը։

Կառուցկին այդ խնդիրն այսպես եւ շարադրում։ Հաղթող պրոլետարիատը «կկենսագործի դեմոկրատական ծրագիրը», և շարադրում ե այդ ծրագրի պարագրաֆները։ Այն մասին, թե ինչ նոր բան ե տվել 1871 թվականը բուրժուական դեմոկրատիայով վորսարիներու հարցի վերաբերմամբ, և վոչ մի խոսք։ Կառուցկին իր դլուին աղատում եւ այսպիսի «սոլիդ» հնչող տափակարանություններով։

«Ինքնըստինքյան ակներեւ ե, վոր մենք այժմյան կարգերի ժամանակ տիբապէտության չենք հասնի: Հեղափոխությունն ինքը յենթադրում է յերկարատեւ ու խորապես հափշտակող մի պայքար, վորը կարսդանա արդեն փոխել մեր այժմյան քաղաքական ու սոցիալական կոռուցվածքը»:

Անկասկած ե, վոր այդ «ինքնըստինքյան ակներեւ ե», ինչպես և այն ճշմարտությունը, վոր ձիերը վարսակ են ուսում և վոլգան կասպից ծովն է թափվում: Ավտումիայն, վոր «խորապես հափշտակող» պայքարի վերաբերյալ սնամեջ ու փքուն ֆրազի միջոցով զանց է առնվում հեղափոխական պրոլետարիատի համար կենսական նշանակություն ունեցող այն հարցը, թե ապա ինչով է արտահայտվում նրա հեղափոխության «խորությունը» պետության վերաբերմամբ, դեմոկրատիայի վերաբերմամբ, ի տարբերություն նախկին, վոչ-պրոլետարական հեղափոխություններից:

Զանց առնելով այս հարցը, կառուցկին իրապես այդ ամենաեյտական կետում դիջում է անում ոպորտունիզմին, հայտարարելով նրան խօսքով ահեղ պատերազմ, ընդունովի «հեղափոխության իդեալի» նշանակությունը (շաբան արժե արգյոք այդ «իդեան», յեթե վախենում ես բանվորներին քարոզել հեղափոխության կոնկրետ դասերը), կամ առելով՝ «ամենից առաջ—հեղափոխական իդեալիզմ», կամ հայտարարելով, թե անդիմական բանվորներն այժմ «հազիվ թե ավելի շատ բան են, քան մանը բուրժուանելը»:

«Սոցիալիստական հասարակության մեջ,—զրում է կառուցկին,—կարող են կողք-կողքի զոյություն ունենալ... ամենատարեր ծիփ ձեռնարկություններ, բյարուկը պատահանն (??), տրեղ-յունիսին իստական, կոռուպտիվ, անհաստական»... «Փոյտթյուն ունեն, որինտի, այնպիսի ծեռարկություններ, վորոնք չեն կարող կառավարվել տառնց բյուրո-կրատիկան» (??) կազմակերպություն,—այդպես են յերկաթուղիները: Այդտեղ զեմովկրատական կազմակերպությունը կարող է այս կերպարանքն ընդունել բանվորներն ընտրում են պատվիրակներ, վորոնք պատահանի նման մի բան են կազմում, և այդ պատահանները ուսմանում են աշխատանքի կանոններն ու չսկում երբուրկրատական ազարտափ կառավարման վրա: Մյուս ձեռնարկությունները կարելի յեն հանձնել բանվորական միությունների իրավասությունը, այլ ձեռնարկություններ կա-

բելի յե կազմակերպել կոռուպտատիվ սկզբունքով» (ռուսերեն թարգմանություն, 1903 թվի Ժնևի հրատարակություն, եջ 148 ու 115):

Այս դատողությունը սխալ է և մի քայլ է դեպի հետ՝ համեմատած այն պարզաբանումների հետ, վորոնք տվել են 70-ական թվականներին Մարքսն ու Յնդելսը՝ կոմունական դասերի որինակով:

Իբր թե անհրաժեշտ «բյուրոկրատական» կազմակերպության տեսակետից, յերկաթուղիները վճռականորեն վոչչով չեն տարբերվում խոչոր մեքենական արդյունաբերության ընդհանրապես բոլոր ձեռնարկություններից, վորեւ գործարանց, մեծ վաճառանոցներից, խոչոր կապիտալիստական գյուղատնտեսական ձեռնարկություններից: Բոլոր այդպիսի ձեռնարկություններում տեխնիկան անպայման թեւագրում է ամենախիստ կարգապահություն, ամենամեծ ճշտապահություն՝ յուրաքանչյուրի կողմից աշխատանքի իրեն հանձնված բաժինը կատարելիս, նկատի առնելով ամրով գործը կանոնեցներու կամ մեխանիզմը վչացնելու, արդյունքը փչացնելու սպառնալիքը: Այդպիսի բոլոր ձեռնարկություններում բանվորներն, իհարկե, «պատվիրակներ կընտրեն, վորոնք պառլամենտի նման մի բան կկազմեն»:

Բայց հարցի ամբողջ Եյությունն ել հենց այն ե, վոր այդ «պառլամենտի նման բանը» պառլամենտ չի լինի բուրժուատիկան-պառլամենտական հիմնարկների իմաստով: Խընդուրի ամբողջ Եյությունն ել հենց այն ե, վոր այդ «պառլամենտի նման բանը» միմիայն «կանոններ սահմանելով և բյուրոկրատական ազարտափ կառավարման վրա հսկելով» չի պաշտվելու, ինչպես յերկակայում է կառուցկին, վորի միտքը բուրժուատիկան պառլամենտարիքի շրջանակներից զուրկ պատճեն: Սոցիալիստական հասարակության մեջ բանվորական պատղամամալորներից կազմված «պառլամենտի նման բանը», իհարկե, «կանոններ կսահմանի և կհսկի «ապարատի» կառավարման վրա», բայց այդ ապարատն ինքը «բյուրոկրատական» չի լինի: Քաղաքական իշխանությունը նվաճելով, բանվորները չարգուիչուր կանեն հին բյուրոկրատական ապարատը, կիսորտակներն այն հիմնովին, քարը քարի վրա չեն թողնի, կփոխարինեն այն նորով՝ կազմված նույն այդ բանվորներից ու ծառայողներից, վո-

բոնց բյուրոկրատ դառնալու դեմ անմիջապես ձեռք կառնը-վեն Մարքսի և Ենգելսի կողմից մանրամասնորեն մշակված միջոցները՝ 1) վո'չ միայն ընտրովիտություն, այլև միշտ ու ամեն ժամանակ վոփոխելիություն. 2) աշխատավարձը վոչ ավելի բանվորի աշխատավարձից. 3) անհապաղ անցումն այն բանին, վոր բոլորը վերահսկողության ու վերստուղման ֆունկցիաներ կատարեն, վոր բոլորն առժամանակ «բյուրոկրատ» դառնան, վորպեսդի հենց այդ պատճառով վոչ վոք չկարողանա «բյուրոկրատ» դառնալ:

Կառուցկին ամենելին չի մարսել Մարքսի հետևյալ խոսքերը. «Կոմունան վո'չ թե պառլամենտական, այլ աշխատող կորպորացիա յեր, վոր միննույն ժամանակ որենքներ եր հրատարակում և գործադրում այն»:

Կառուցկին ամենելին չի հասկացել այն տարբերությունը, վորը կա դեմոկրատիան (վ ո չ ծ ո դ ո վ ր դ ի հ ա մ ա ր) բյուրոկրատիզմի (ծ ո դ ո վ ր դ ի դ ե մ) հետ միացնող բուրժուական պառլամենտարիզմի և պրոլետարական դեմոկրատիզմի միջև, վորը միանդամից միջոցներ ձեռք կառնի՝ բյուրոկրատիզմն արժատախիլ անելու համար և վորն ի վիճակի կլինի այդ միջոցները մինչև վերջը հասցնելու, մինչև բյուրոկրատիզմի լիակատար վոչնչացումը, մինչև ժողովրդի համար լիակատար կերպով դեմոկրատիա մտցվելը:

Կառուցկին այստեղ ցուցաբերել ե դարձյալ նույն «սնահավատ հաբանքը» դեսի պետությունը, «սնապաշտ հավատը» դեսի բյուրոկրատիզմը:

Անցնենք Կառուցկու՝ ուղղութունիստների դեմ դրած վերջին ու լավագույն յերկին, նրա «Իշխանության ուղին» բրոցյուրին (կարծեմ՝ ուղարկեն հրատարակված չե, վորովհետեւ նա լույս ե տեսել 1909 թվին, յերբ մեզ մոտ բուռն ուեակցիան եր իշխում): Այդ բրոցյուրը մեծ առաջադիմություն ե, վորչափով նրա մեջ խոսվում ե վո'չ թե ընդհանրապես հեղափոխական ծրադրի մասին, ինչպես 1899 թվին Բերնշտայնի դեմ ուղղված բրոցյուրում, վո'չ թե սոցիալական հեղափոխության ինդիքների մասին՝ անկախ նրա հանդես գալու ժամանակից, ինչպես 1902 թվա-

կանի «Սոցիալական հեղափոխությունը» բրոցյուրում, այլ այն կոնկրետ պայմանների մասին, վորոնք ստիպում են մեղ ընդունելու, թե «հեղափոխությունների դարաշրջանը» վրա յե հասնում:

Հեղինակը պարզորոշ կերպով մատնանշում է դասակարգային հակասությունների սրումն ընդհանրապես ու խմբերիալիզմը, վորն այս տեսակետից առանձնապես մեծ նշանակություն ունի: Արևմտյան Յելրոպայի «1789—1871 թվերի հեղափոխական շրջանից» հետո, 1905 թվից համանաման մի շրջան ե սկսվում Արևելքի համար: Համաշխարհային պատերազմը վրա յե հասնում սպառնալից արագությամբ: «Պրոլետարիատն այլևս չի կարող արդեն խոսել վաղաժամ հեղափոխության մասին»: «Մենք մտել ենք հեղափոխական շրջանը»: «Հեղափոխական դարաշրջանն սկսավում ե»:

Այս հայտարարությունները միանդամայն պարզ են: Կառուցկու այս բրոցյուրը պետք ե չափանիչ ծառայի՝ համեմատելու համար այն, թե ինչ եր խոստանում լինել գերմանական սոցիալ-դեմոկրատիան խմբերիալիստական պատերազմից առաջ և վորքան մեծ եր նրա անկումը (Կառուցկունն ել այդ թվում) պատերազմի բռնկման ժամանակ: «Այժմյան սիտուացիան, —դրում ե Կառուցկին քննարկվող բրոցյուրում, —իր հետ այն վտանգն ե բերում, վոր մեզ (այսինքն՝ գերմանական սոցիալ-դեմոկրատիային) հետ ե ալելի չափավոր համարել, քան թե մենք իսկապես ենք»: Բանից գուրս յեկավ, վոր իսկապես գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն անհամեմատ ալելի չափավոր ու սպորտունիստական ե, քան թվում եր:

Առավել ես բնորոշ ե, վոր Կառուցկին, հեղափոխությունների արդեն սկսված դարաշրջանի մասին այդպիսի վորչափի հայտարարություններ անելուց հետո՝ այն դըրքույլի մեջ ել, վորը նրա սեփական խոսքերով՝ նվիրված ե հատկապես «Քաղաքական հեղափոխության» հարցի քննարկմանը, դարձյալ բոլորովին զանց ե առնում պետության հարցը:

Հարցի այս անտեսումների, լուսթյան մատնելու,

խուսափումների գումարից ել անխուսափելիորեն ստացվեց այն լիակատար անցումը դեպի ռազրտունիզմը, վորի մասին մենք այժմ հարկադրված ենք խոսելու:

Գերմանական սոցիալ-դեմոկրատիան, հանձին Կառլց կու, կարծես հայտարարում եր. յես մնում եմ հեղափոխական հայեցակետների վրա (1899 թ.): Առանձնապես յեսը դուռնում եմ պրոլետարիատի սոցիալական հեղափոխության անխուսափելիորթյունը (1902 թիվ): Յես ընդունում եմ հեղափոխությունների նոր դարաշրջանի գալուստը (1909 թ.): Բայց յես, այնուամենայնիվ, հետ եմ դնում այն ամենի համեմատությամբ, ինչ վոր առել ե Մարքսը գեռ 1852 թիվն, քանի վոր հարց ե դրվում պետության վերաբերմամբ պրոլետարական հեղափոխության ունեցած ննդիրների մասին (1912 թ.):

Հենց այսպես շեշտակի յեր դրված հարցն այն բանակովի մեջ, վոր մղում եր Կառլցին Պաննեկուկի դեմ:

3. ԿԱՌԻՑԿՈՒ ԲԱՆԱԿՈՒԻՎԸ ՊԱՆՆԵԿՈՒԿԻ ԴԵՄ

Պաննեկուկը հանդես յեկավ Կառլցիու դեմ, իրրե մեկն այն «Ճախ-արմատական» հոսանքի ներկայացուցիչներից, վորի շարքերում եյին գտնվում Ռոզա Լուքսեմբուրգը, Կարլ Մարտեկը և ուրիշները և վորը, հեղափոխական տակտիկան պաշտպանելով, մի միություն եր կազմում այն համոզմունքով, թե Կառլցին անցնում ե «կենտրոնի» դիրքին, վորն անսկզբունք կերպով տատանվում եր մարքսիզմի և ոպորտունիզմի միջև։ Այս հայցքի ճշությունը լիովին ապացուցեց պատերազմը, յերբ «կենտրոնի» (վորը սիստեմական մարքսիստական ե կոչվում) կամ «կառլցիականության» հոսանքը լիակատար կերպով իրեն ցույց տվեց իր ամբողջ գարշելի ինեղճությամբ։

Կետության հարցը շոշափող իր «Մասսայական գործողություններն ու հեղափոխությունը» («Neue Zeit», 1912, XXX, 2) հոդվածում Պաննեկուկը Կառլցիու դիրքը բնորոշեց իրեկ «պասսիկ ռազիկալիզմ» դիրք, իրրե «անգործունյա կերպով սպասելու թերիա»։ «Կառլցին չի ուզում տեսնել հեղափոխության պրոցեսը» (եջ 616)։ Հարցն այդ ձևով դնելով, Պաննեկուկը մոտեցավ մեղ հե-

ռազքրքրող թեմային, այն ե՝ թե ինչ խնդիրներ ունի պրոլետարական հեղափոխությունը պետության վերաբերմամբ։

«Պրոլետարիատի պայքարը, —զրում ե նա, —սոսկ մի պայքար չեղաւքուազիի գեմ պետական իշխանության համար, այլ մի պայքար է պետական իշխանության դեմ... Պրոլետարական հեղափոխության բովանդակությունը պետության ուժը ներկայացնող դործիքների վոքնչացումն ու գործադրումն ե (բասաց՝ արձակություն՝ Auflosung) պրոլետարիատի ուժը ներկայացնող գործիքների միջոցով... Պայքարը դադարում ե այն ժամանակ միայն, յերբ, իրեւ նրա վերջնական հետեւանքը, տեղի յե ունենում պետական կազմակերպության լիակատար կրծանումը։ Մեծամասնության կազմակերպությունն իր աւավելությունը նրանով ե ապացուցում, վոր վոչնչացնում ե տիրապետող վոքրամասության կազմակերպությունը» (եջ 548)։

Այն ձևակերպումը, վոր տվել ե իր մտքերին Պաննեկուկը, շատ խոշոր թերություններ ունի։ Բայց, այնուամենայնիվ, միտքը պարզ ե, և հետաքրքրականն այն ե, թե Կառլցիին ինչպես ե հերքում այն։

«Մինչև այժմ, —զրում ե նա, —սոցիալ-դեմոկրատների ու անարիխստների միջև յեղած հակազդությունն այն եր, վոր առաջիններն ուղարկում եյին նվաճել պետական իշխանությունը, իսկ վերջինները՝ խորտակել այն։ Պաննեկուկը թի՛ մեկն ե ուզում ե թի՛ մյուսը» (եջ 724)։

Յեթե Պաննեկուկի շարադրանքի թերությունը նրա անորոշությունն ու կոնկրետության պակասությունն ե (չխոսելով այսուեղ նրա հոդվածի մյաւս թերությունների մասին, վորոնք քննարկվող թեմային չեն վերաբերում), ասդա Կառլցիին վերցրեց հենց Պաննեկուկի նշած դործի նկզբունքային ելությունը և արմատական սկզբունքային հարցում ամբողջովին լրեց մարքսիզմի դիրքը, ամբողջապես անցավ ոպորտունիզմի կողմը։ Սոցիալ-դեմոկրատների և անարիխստների տարբերությունը նրա մոտ միանդամայն սիստեմիստների անարիխստների տարբերությունն այն է, վոր 1) առաջիններն, իրենց առաջ նպատակ դնելով պետության լիակատար վոչնչացնումը, այդ նպատակն իշապործելի յեն համարում միմիայն դասակարգերի վոչըն-

չացումից հետո սոցիալիստական հեղափոխության կողմից և իրեն սոցիալիզմի հաստատման հետևանք, վոր գեպի պետության մահացումն եւ տառում: Յերկրորդներն ուղղում էն պետության լիակատար վոչնչացումն այսորվանից մինչև վաղը, առանց ըմբռնելու այդպիսի վոչնչացման իրադրծելիության պայմանները: 2) Մարքսիստներն անհրաժեշտ են համարում, վորպեսզի պրոլետարիատը, նվաճելով քաղաքական իշխանությունը, ամբողջովին խորտակի հին պետական մեքենան, փոխարինելով այն զինված բանվորների կաղմակերպությունից բաղկացած նոր մեքենայով, ըստ կոմունայի տիպի. անարխիստները՝ պաշտպանելով պետական մեքենայի խորտակումը, բոլորովին պարզ կերպով չեն պատկերացնում, թե ինչով եւ փոխարինելու պրոլետարիատն այն և ինչպես պետք եւ ողտովի նա հեղափոխական իշխանությունից, անարխիստները մինչև անդամ ժխտում են, թե հեղափոխական պրոլետարիատը պետք եւ ողտադրծի պետական իշխանությունը, ժխտում են նրա հեղափոխական դիլտատուրան: 3) Մարքսիստները պահանջում են, վոր պրոլետարիատը հեղափոխության համար նախապատրաստվի արդի պետությունն ողտադրծելու միջոցով. անարխիստներն այդ ժխտում են:

Տվյալ վեճի մեջ հենց Պաննեկուկն եւ, վոր ներկայացնում եւ մարքսիզմը կառուցկու դեմ, վորովհետեւ հատկապես Մարքսն եր, վոր ուսուցանում եր, թե պրոլետարիատը չի կարող պարզապես նվաճել պետական իշխանությունը՝ հին պետական ապարատը նոր մարդկանց ձեռք անցնելու իմաստով, այլ պետք եւ խորտակի, ջարդուիչուր անի այդ ապարատը, փոխարինի այն նորով:

Կառուցկին մարքսիզմից հեռանում եւ դեպի ոպորտունիստները, վորովհետեւ նրա մոտ բոլորովին անհետանում եւ պետական մեքենայի հենց այդ խորտակումը, վոր միանգամայն անընդունելի յի ոպորտունիստներին, և նրանց համար մի սողանցք եւ մնում՝ «նվաճումն» իրեւ պարզապես մեծամասնության ձեռքբերում մեկնարանելու իմաստով:

Մարքսիզմի վերաբերմամբ իր կատարած աղավաղումը քողարկելու համար կառուցկին վարդում եւ վորպես մի

դպիկիր. նա «ցիտատ» եւ առաջ մղում հենց Մարքսից իրենից: 1850 թվին Մարքսը գրել է «ուժը վճռականորեն պետական իշխանության ձեռքում կենարոնացնելու» անհրաժեշտության մասին: Յել կառուցկին հաղթականորեն հարց եւ տալիս. չի՞ կամենում արդյոք Պաննեկուկը խորտակել ցենտրալիզմը»:

Այս արդեն պարզապես Փոկուս եւ, վոր նման եւ Բերնշտայնի կողմից մարքսիզմի ու պրոլետնիզմի հայեցակետները նույնացնելուն Փեղերացիայի վերաբերմամբ, փոխանակ ցենտրալիզմի:

Կառուցկու բերած «ցիտատը» վոչ մի առնչություն չունի հարցի հետ: Յենտրալիզմը հնարավոր եւ թե՛ հին և թե՛ նոր պետական մեքենայի նկատմամբ: Յեթե բանվորները հոժարակամ միավորեն իրենց զինված ուժերը, այդ կլինի պետական ցենտրալիզմը, բայց այդ հիմնված կլինի պետական ցենտրալիստական ապարատի՝ մշտական բանակի, վոստիկանության, բյուրոկրատիայի «լիակատար խորտակման» վրա: Կառուցկին միանդամայն սրիկայարար եւ վարվում, շրջանցելով Մարքսի ու Ենդելսի շատ լավ հայտնի դատողությունները կոմունայի մասին և դուրս քաշելով այնպիսի մի ցիտատ, վոր հարցին չի վերաբերում:

...«Դուցե Պաննեկուկն ուզում եւ վոչնչացնել չինովնիկների պետական Փունկցիաները, շարունակում եւ կառուցկին: Բայց մենք առանց չինովնիկների չենք կառավարվության մեջ, եւ չինովնով պետական վարչության մասին: Մեր ծրագիրը պահանջում է վո՛չ թե պետական չինովնիկների վոչնչացումը, այլ նրանց ընտրությունը ժողովրդի կողմից»... «Մեզ մոտ այժմ խոսքն այն մասին չե, թե ինչ կերպարանք կընդունի վարչության ապարատն «ապագա պետության» մեջ, այլ այն մասին ե, թե մեր քառական պայքարն արդյոք վոչնչացնում է (բառացի) որձակում ե, այլօք պետական իշխանությունը, նախանձ մենք նվաճած կլիմենթ այն (ընդգծումը կառուցկուն ե): Վո՞ր մինիստրությունն ե, վոր կարելի կլիներ իր չինովնիկների հետ միասին վոչնչացնելը»: Թվարկվում են լուսավորության, արդարադատության, ֆինանսների, ռազմական մինիստրությունները: «Վո՞չ, այժմյան մինիստրություններից վոչ մեկն եւ չի վերացի կառավարության դեմ մղած մեր քաղաքական պայքարով... Թյուրիմացություններից խուսափելու համար յետ կրկնում եմ. խոսքն այն մասին չե, թե հաղթական սոցիալ-դեմոկրա-

տիան ինչ ձեւ կտա «ապագայի պետությանը», այլ այն մասին եւ, թե մեր ուղղակիան ինչպես և փոփոխում այժմյան պետությունը» (էջ 725):

Այս մի բացահայտ քաշքոց եւ: Պահնեկուկը հատկապես հեղափոխության հարցն եւ դրել: Այդ բանն եւ պարզ կերպով ասված եւ թե՛ նրա հողվածի վերնադրում, թե՛ մեջ բերված հատվածներում: Յատկելով դեպի «ոպողիցիայի» հարցը, կառցկին հենց հեղափոխական տեսակետը նենդափոխում եւ ոպորտունիստական տեսակետի հետ: Նրա մոտ այսպես եւ զուրս գալիս. հիմա ոպողիցիա, իսկ իշխանությունը նվաճելուց հետո՝ առանձին կլոսսենք: Հեղափոխությունը չհանում եւ: Այս հենց այն եւ, ինչ վոր ուզում եյին ոպորտունիստները:

Խոսքը վո՛չ թե ոպողիցիայի և քաղաքական պայքարի մասին եւ ընդհանրապես, այլ հատկապես հեղափոխության մասին: Հեղափոխության եյությունն այն եւ, վոր պըոլետարիատը լոռ տակում եւ «վարչության ապարատն» ու ամբողջ պետական ապարատը, փոխարինելով այն գինված բանվորներից բաղկացած նոր ապարատով: Կառցկին «սնահավատ հարգանք» և ցուցաբերում «մինիստրությունների» նկատմամբ, բայց ինչո՞ւ նրանք չեն կարող փոխարինվել, ասենք, մասնագետների հանձնաժողովներով՝ լիակատար և ամենազոր իշխանություն ունեցող Բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդներին կից:

Գործի եյությունն ամենեին այն չեւ, թե կմնա՞ն արդյոք «մինիստրությունները», կլինե՞ն արդյոք «մասնագետների հանձնաժողովները», թե վորեւ այլ հիմնարկներ. այդ ամենեին կարեւը չեւ: Գործի եյությունն այն եւ, թե պահանջո՞ւմ եւ արդյոք հին պետական մեքենան (վոր հազարավոր թելերով կապված եւ բուրժուազիայի հետ և մինչեւ ուղնուծուծը տողորված եւ հնամոլությունը ու անշարժությամբ), թե՞ այդ մեքենան խորտակվում եւ ուրով փոխարինվում: Հեղափոխությունն ա'յն չպետք եւ լինի, վոր նոր դասակարգը հրամայի, կառավարի իին պետական մեքենայի ողնությամբ, այլ այն, վոր նա ջարդուփշուրանի այդ մեքենան և հրամայի, կառավարի նոր մեքենա-

չի ողնությամբ, —մարքսիզմի այս հիմնական միտքը կառուցնեն ովաղում եւ, կամ բոլորովին չի հասկացել այն:

Նրա հարցը չինովնիկների մասին ակնբախ կերպով ցույց եւ տալիս, վոր նա չի հասկացել կոմունայի դասերն ու Մարքսի ուժունքը: «Մենք առանց չինովնիկների չենք կառավարվում թե՛ կուսակցական և թե՛ արհեստակցական կազմակերպության մեջ»...

Մենք առանց չինովնիկների չենք կառավարվում կապիտալիզմի ժամանակ, բուրժուազիայի տիրապետության շրջանում: Պրոլետարիատը ճնշված եւ, աշխատավոր մասներն ստրկացված են կապիտալիզմի կողմից: Կապիտալիզմի ժամանակ դեմոկրատիզմը սեղմված եւ, ճղմված, խուզված, այլանդակված՝ մասսաների վարձու ստրկության, կարիքի ու աղքատության ամբողջ իրադրությամբ: Այդ պատճառով, և միմիայն այդ պատճառով եւ, մեր քաղաքական ու արհեստակցական կազմակերպություններում պաշտոնատար անձերը այլասերվում են (կամ ավելի ճիշտ ասած՝ այլասերվելու տենդենց ունեն) կապիտալիզմի իրադրության չնորհիվ և հակում են ցուցաբերում բյուրոկրատ, այսինքն՝ մասսաներից կորված, մասսաներից վեր կանգնած, արտօնյալ անձեր զանալու:

Սրա մեջ եւ բյուրոկրատիզմի եյությունը, և քանի զեռսեփականազրկված չեն կապիտալիստները, քանի զեռ չի տապալված բուրժուազիան, անխուսափելի յեւ մինչև անգամ պրոլետարական պաշտոնատար անձերի վորոշ «բյուրոկրատացումը»:

Կառցկու մոտ այսպես եւ զուրս գալիս. քանի վոր մնում են ընտրովի պաշտոնատար անձերը, նշանակում եւ սոցիալիզմի ժամանակ կմնան նաև չինովնիկները, կմնաբյուրոկրատիան: Հատկապես հենց այս եւ, վոր սխալ եւ: Հենց կոմունայի որինակով Մարքսը ցույց եւ տվել, վոր սոցիալիզմի ժամանակ պաշտոնատար անձերը դադարում են «բյուրոկրատներ», «չինովնիկներ» լինելուց, դադարում են, վորչափով, բացի ընտրականությունից, մացվում եւ նաև նրանց փոփոխելիությունը ուղած ժամանակ, այլի աշխատավարձը հավասարեցվում եւ միջին բանմորական մակար-

դակին, ապա նաև պառլամենտական հիմնարկները «աշխատող, այսինքն՝ որենքներ հրատարակող և այդ որենքներն իրականացնող» հիմնարկներով են փոխարինվում:

Հստ եյության, կառուցկու ամբողջ փաստարկումը Պահնեկուկի դեմ, և առանձնապես կառուցկու այն հոյակառապացուցյը, թե մենք առանց չինովնիկների չենք կառավարվում թե՛ արհեստակցական, թե՛ կուսակցական կազմակերպություններում, ցույց ե տալիս, վոր կառուցկին կրկնում ե ընդհանրապես Բերնշտայնի հին «պատճառարանությունները» մարքարդի դեմ: Բերնշտայնն իր «Սոցիալիզմի նախադրյաները» ռենեգատական դրքում մարտնչում ե «պրիմտիվ» դեմոկրատիայի դադարաների դեմ, այն բանի դեմ, ինչ վոր նա «գոկտրինյորական դեմոկրատիզմ» և անվանում, այն ե՝ խմբերատիվ մանդատները, վարձատրություն չոտացող պաշտոնատար անձերը, անդոր կենտրոնական ներկայացուցչությունը և այն: Իրրև այս «պրիմտիվ» դեմոկրատիզմի անանկության ապացույց, Բերնշտայնը մատնանշում ե անզլիական տրեղ-յունիոնների փորձը, ըստ Վեբբ ամուսինների մեկնաբանության: Իրը թե իրենց յոթանասնամյա զարդացման ընթացքում տրեղ-յունիոնները, վորոնք զարդանում եյին իրը թե «լիակատար պատության մեջ» (գերմ. հրատ. էջ 137), այն համոզմունքին յեկան, վոր հենց պրիմտիվի դեմոկրատիզմն անպետք ե, և այն փոխարինեցին բյուրոկրատիզմի հետ միացած սովորական պառլամենտարիզմով:

Իրոք տրեղ-յունիոնները զարդացել են վո՛չ թե «լիակատար պատության», այլ լիակատար կապիտալիստական սորկության մեջ, վորի ժամանակ, հասկանալի յե, «չերկարելի գլուխ պրծացնել» առանց մի շարք զիջումներ անելու տիրող չարիքին, բոնությանը, անարդարությանը, չքայլորներին «քարճըրագույն» վարչության գործերից հեռացնելուն: Սոցիալիզմի ժամանակ «պրիմտիվ» դեմոկրատիայից չափայից շատ բան անխուսափելիորեն կվերակենդանանա, վորովհետև քաղաքակրթված հասարակությունների պատմության մեջ առաջին անգամ բնակչության մասսան կրաքարանա այն աստիճանին, վոր նա կարողանա ինք-

նուրույնորեն մասնակցել վո՛չ միայն քվեարկություններին ու ընտրություններին, այլև ամենորյա կառավարմանը: Սոցիալիզմի ժամանակ ի ու ու թե կկառավարեն հերթով և արագորեն կընտելանան այն բանին, վոր վոչ վոք չկառավարի:

Մարքոն իր հանճարեղ քննադատական-անալիստիկ մըտքով կոմունայի դորձնական միջոցառումների մեջ տեսալ այն քեկումը, վորից վախենում են և վորը չեն ուզում ընդունել ուղղությունները յերկչուությունից, չկամենալով անդարձ կերպով կապերը խղել բուրժուազիայից, և վորը չեն ուզում տեսնել անարխիստները կամ իրենց հաղձեսության, կամ' առհասարակ մասսայական սոցիալական փոխակերպումների պայմանները չըմբռնելու պատճառով: «Մինչև իսկ մտածել ել հարկավոր չե հին պետական մեջենան խորտակելու մասին. ի՞նչպես կարող ենք մենք առանց մինիստրությունների և առանց չինովնիկների կառավարմել»—դատում ե մինչեւ ուղնուծուծը Փիլիստերությամբ ուղղորդված ուղղությունները, վորն, ըստ եյության, վո՛չ միայն հավատ չունի հեղափոխության վրա, հեղափոխության ստեղծագործության վրա, այլ մահացու կերպով վախենում ե նրանից (ինչպես մեր մենչեմիկներն ու եսերներն են վախենում նրանից):

«Պետք ե մտածել միմիայն հին պետական մեքենան խորտակելու մասին, կարիք չկա թափանցելու նախկին պրոլետարական հեղափոխությունների կոնկրետ դասերի խորքը և վերլուծելու, թե ինչով և ինչպես պետք ե փոխարինել խորտակելին»—դատում ե անարխիստը (իհարկե, անարխիստներից լավագույնը, և վոչ թե այնպիսին, վորը պ. պ. Կրոպոտկինների ու Բնկ. հետ քարշ և գալիս բուրդ. ժամանակի հետևից). այդ պատճառով ել՝ անարխիստի ժուղիայի հետևից). այդ պատճառով ել՝ անարխիստի մոտ ևս ստացվում ե հուսահատության տակտիկա, և վոչ թե անխամ-համարձակ և միենույն ժամանակ մասսաների մեջ անխամ-համարձական պայմանները հաշվի առնող և կոնկրետ ինդիբրերի վրա հեղափոխական աշխատանք թափության տակտիկա:

Մարքոն մեջ ուսուցանում ե խուսափել այդ յերկու սխալներից ել, ուսուցանում ե անձնվեր համարձակություն

ամբողջ հին պետական մեքենան խորտակելու գործում և միևնույն ժամանակ սովորեցնում ե հարցը կոնկրետ կերպով դնել. Կոմունան միքանի շարաթվա ընթացքում կարողացավ նոր պլրուետարական, պետական մեքենայի կառուցումն սկսել, ահա այս կերպով կիրառելով մատնանըշված միջոցներ՝ ավելի լայն դեմոկրատիզմ ձեռք բերելու և բյուրոկրատիզմն արմատախիլ անելու համար: Հեղափոխական համարձակություն սովորենք կոմունարներից, նրանց գործնական միջոցառումների մեջ տեսնենք գործնականորեն կենսական ու անմիջապես հնարավոր միջոցների մատնանըշումը և այն ժամանակ, այդ ուղիով ընթանալով, մենք կհասնենք բյուրոկրատիզմի կատարյալ խորտակմանը:

Այդպիսի խորտակման հնարավորությունն ապահոված և նրանով, վոր սոցիալիզմը կերճատի աշխատանքային որը, մասսաներին վեր կրարձացնի նոր կյանքի համար, ընակչության մեծամասնության այնպիսի պայմանների մեջ կդնի, վոր բոլոր անխափը հնարավորություն կունենան «պետական Փունկցիաներ» կատարելու, իսկ այդ կտանի դեպի առհասարակ ամեն մի պետության լիակատար մահացումը:

...«Մասսայական գործառությունը, — շարունակում ե կառույցին, — յերբեք չե կարող այն լինել, վոր խորտակի պետական իշխանությունը, այլ միմիայն այն, վոր կառավարությունը հարկադրի դիմում անել վորեւ վորոշ հարցում, կամ սրուետարիատին թշնամի կառավարությունը փոխարինվի նրան ընդուածող (ուստեղում ա) կառավարությամբ... Բայց յերեք ու վոչ մի պայմանով այդ» (այսինքն՝ սրուետարիատի հաղթությունը թշնամի կառավարության դեմ) «չի կտրող դեպի պետական իշխանության խորտակում տանել, այլ կտանի միմիայն դեպի ուժերի հարաբերության վորոշ տեղաշարժում (V raschienbung) պետական իշխանության ներսում... Յեկ այդ դեպուատ՝ մեր քաղաքական պայքարի նպատակը մնում ե, ինչպես մինչև այժմ եր, պետական իշխանության նվաճումը՝ պարագանառում մեծամասնություն ձեռք բերելու միջոցով և պառամենաթ կառավարության դլիքն առը դարձնելով» (եջ 726, 727, 732):

Այս արդեն ամենազուտ և ամենազռեհիկ ոպորտունիզմ՝ եղանակով՝ հրաժարումն հեղափոխությունից, խոսքով՝ նրա ճանաչում : Կառուցկու միտքը «պլրուետարիատին ըն-

դառաջող կառավարությունից» հեռու չի գնում, վորը միքայլ և դեպի հետ, դեպի ֆիլիստերություն, 1847 թվի համամատությամբ, յերբ «Կոմունիստական մանիֆեստը» հռչակեց «պլրուետարիատի կազմակերպությունն իրեւ տիրող դասակարգ»:

Կառուցկին ստիպված կլինի իր սրտի ուղած «միությունն» իրականացնել Շայդեմանների, Պլեխանովների, Վանդերվելլեների հետ, վորոնք բոլորն ել համաձայն են պայքար մղելու այնպիսի մի կառավարության համար, «վորն ընդառաջում և պրոլետարիատին»:

Իսկ մենք, պառակտվելով, կանչատվենք սոցիալիզմի այդ գալաճաններից և պայքար կմղենք ամբողջ հին պետական մեքենայի խորտակման համար, այնպես, վոր զինված պրոլետարիատն ինքը կառավարություն լինի: Սրանք «յերկու խոչոր տարբերություններ են» :

Կառուցկին ստիպված կլիներ կեցինների ու Դավիդների, Պլեխանովների, Պոտրեսովների, Շերեթելլեների, Զերնովների հաճելի ընկերության մեջ լինել, վորոնք միանգամայն համաձայն են պայքար մղելու հանուն «ուժի հարաբերությունների տեղաշարժման՝ պետական իշխանության ներսում», հանուն «պառակտենառում մեծամասնություն ձեռք բերելու և պառակտենառը կառավարության գըլիննազորը դարձնելու», — աղնվազույն մի նպատակ, վորի մեջ ամեն ինչ ընդունելի յե ոպորտունիստների համար, ամեն ինչ մնում և բուրժուական սրամենառում հանրապետության շրջանակներում:

Իսկ մենք, պառակտվելով կանչատվենք ոպորտունիստներից և ամբողջ գիտակից պրոլետարիատը մեղ հետ կլինի վո՞չ թե «ուժի հարաբերությունների տեղաշարժման» համար մղվող, այլ բուրժուազիային տապալելու համար, բուրժուական սրամենառում կառավարիզմը խորտակելու համար մըլլվող պայքարում, Կոմունայի տիպի գեմուլը պատական հանրապետություն կամ Բանվորների և զինվորների պատգամալորների խորհուրդների հանրապետություն հաստատելու համար, պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայի համար մղվող պայքարում:

Միջազգային սոցիալիզմի մեջ կառւցկուց ավելի աջ են կանգնած այնպիսի հուանքներ, ինչպիսին «Սոցիալիստական Ամսագլուխ» և Գերմանիայում (Լեգին, Դալմիդ, Կոլբ և շատ ուրիշներ, սկանդինավյալի Ստաունինգն ու Բրանտինգն ել ներառյալ), ժորեսիստներն ու Վանդերվելլեն՝ Ֆրանսիայում ու Ֆրանսիայում, Տուրատին, Տրեվեսը և իտալական կուսակցության աջ թերի այլ ներկայացուցիչները, Փարիսիականներն ու «անկախականները» («անկախ բանվորական կուսակցությունը»), վորն իրականության մեջ միշտ կախման մեջ և յեղել լիբերալներից՝ Անդլիայում և այլն։ Այս բոլոր պարոնները, վիթխարի, շատ հաճախ գերիշտող դեր կատարելով պարագանետական աշխատանքի և կուսակցության հրապարակախոսության մեջ, ուղղակի ժխտում են պրոլետարիատի դիկտատուրան, անսքող ոպորտունիզմ են առաջ մղում։ Այդ պարոնների համար՝ պրոլետարիատի «դիկտատուրան» «հակասո՞ւմ ե» դեմոկրատիային։ Նրանք, ըստ եյության, մանր-բուրժուական դեմոկրատներից լրջորեն վոչնչով չեն տարբերվում։

Նկատի առնելով այս հանդամանքը, մենք իրավունք ունենք յեզրակացնելու, վոր Յերկրորդ Ինտերնացիոնալն՝ ի դեմու իր պաշտոնական ներկայացուցիչների ճնշող մեծամասնության՝ լիովին դլորվել ե դեսլի ոսկրառունիզմ։ Կոմունայի փորձը վո՛չ միայն մոռացված ե, այլև աղավաղված։ Բանվորական մասսաներին բավական չէ, վոր չեր ներշնչվում, թե մոտենում ե այն ժամանակը, յերբ նրանք պետք ե հանդես գան ու խորտակեն հին պետական մեքենան, փոխարինելով այն նորով, և այդպիսով իրենց քաղաքական տիրապետությունը փոխարիեն հասարակության սոցիալիստական վերակառուցման բազիսի, մասսաներին հակառակն եր ներշնչվում, և «իշխանության նվաճումն» այնպիս եր պատկերացվում, վոր ոպորտունիզմի համար հաղարավոր սողանցքներ ելին մնում։

Պրոլետարական հեղափոխության դեսլի պետությունն ունեցած հարաբերական հարցության առաջնային դեմք այսպիս է համարներ գրել։ Ներկա բրոցյուրում ստիլված ենք սահմանափակվել, հասկանալի յե, փորձի այն ամենազլամագոր դասերով միայն, վորոնք անմիջականորեն վերաբերում են հեղափոխության մեջ պետական իշխանության նկատմամբ պրոլետարիատի ունեցած ինտիրներին։ (Այսուղ ձեռագիրն ընդհանում ե) ։—Խմբ։

տալը չեր կարող վիթխարի դեր չկատարել այն ժամանակ, յերբ պետությունները, իմպերիալիստական մրցման հետեւանքով ուժեղացած ռազմական առարկատի չնորհիպ, ռազմական հրեշներ են դարձել, վորոնք միլիոնավոր մարդիկ են բնաջնջում նրա համար, վորպեսզի լուծեն այն վեճը, թե ով պիտի տիրի աշխարհին—Անդլիան, թե Գերմանիան, այսու, թե այն Փինանսական կապիտալը¹։

1 Այնուհետև ձեռագրում հետևում է.

Այս գլխի վերնագրում մատնաշված թեման այնքան անընդուրկելիութեն մեծ ե, վոր նրա մասին կարելի յե և պետք ե հատորներ գրել։ Ներկա բրոցյուրում ստիլված ենք սահմանափակվել, հասկանալի յե, փորձի այն ամենազլամագոր դասերով միայն, վորոնք անմիջականորեն վերաբերում են հեղափոխության մեջ պետական իշխանության նկատմամբ պրոլետարիատի ունեցած ինտիրներին։ (Այսուղ ձեռագիրն ընդհանում ե) ։—Խմբ։

ԱՐԱՋԻՆ ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԱԲԱՆ

Այս բրոշյուրը գրված է 1917 թվի սկսուստին ու սեպտեմբերին։ Յես արդեն կազմել եյի հետեւյալ, յոթերորդ, չիվա պլանը—«1905 ու 1917 թվականների ռուսական հեղափոխությունների փորձը»։ Բայց, բացի վերնադրից, յես չկարողացա այդ գլուխց վոչ մի տող գրել։ «իսանդարեց» քաղաքական ճշնաժամը, 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխության նախորյակը։ Այդպիսի «խանդարման» համար կարելի յե միմիայն ուրախանալ։ Բայց բրոշյուրի յերկրորդ պլանը («1905 ու 1917 թվականների ռուսական հեղափոխությունների փորձին» նվիրված), թերևս, չարկ լինի խությունների փորձին։ ավելի հաճելի և ոգտակար է «հեյերկար հետաձգելու» ավելի հաճելի և ոգտակար «հեյերկար հետաձգելու» կատարել, քան թե նրա մասին դափնիության փորձը»։ կատարել, քան թե նրա մասին դրել։

Գետբագրադ

30 նոյեմբերի 1917 թ.։

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	62
Առաջին Հրատարակության առաջարանը	3
Առաջարան յերկրորդ Հրատարակության	5
I գլուխ ԳԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ	
1. Պետությունը դասակարգային հակասությունների անհաջականության արդյունք և	7
2. Զինված մարզկանց հատուկ ջոկատներ բանակը և այլն	11
3. Պետությունը ճնշված դասակարգի շահագործման դորձիք և	15
4. Պետության «մահացումը» և րոնի հեղափոխություն	19
I գլուխ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ։ 1848—	
1851 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՐՁՔ	
1. Հեղափոխության նախորյակը	27
2. Հեղափոխության հանրապետությունները	32
3. Մարքսն ինչպես և զնում հարցը 1852 թվականը	39
III գլուխ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ։ 1871 ԹՎԻ ՓՈՐՁՔ ։ ԿՈՄՊՈՆԱՑԻ ՓՈՐՁՔ ։ ՄԱՐՔՍԻ ԱՆԱԼԻԶԸ	
1. Վորոն և կոմունարների փորձի ՏԵՐՈՍՈՒԹՅՈՒՆԸ	43
2. Ինչո՞վ փոխարինել ջարդություրը արված պետական ժեռնան	48
3. Պատլամենտարիզմի վահացումը	53
4. Ազգի միասնության կազմակերպումը	61
IV գլուխ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ։ ԵՎՔԵՍԻ ԼՐՈՅՈՒՅԻ ՊԱՐԱԳԱԿԱՆ ԶԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
1. «Բնակարանային» հարցը	68
2. Բանապեճ անարիխանների հետ	71
3. Նամակ թերելին	76
4. Երթուրակ ծրապը նախազծի քննադատությունը	79
5. Մարքսի «Քաղաքացիական պատերազմի» առթիվ 1891 թ. դրած առաջարանը	87
6. Ենդելու գեմոկրատական հաղթահարման մասին	94


V գլուխ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀԱՅՄԱՆ ՏԵՏԵՍԱԳԱՆ ՀԻՄՈՒԽԻՑ-
ՆԵՐԸ

1. Մարքսի հարցադրումը	98
2. Անցումն կապիտալիզմից դեպի կոմունիզմ	101
3. Կոմունիստական հասարակության առաջին փուլը	108
4. Կոմունիստական հասարակության ամենաբարձր փուլը	112

VI գլուխ. ՄԱՐՔՍԻ ԳՐԵՀԱՎԱՐՈՒՄՆ ՈՊՈՐՏՈԽԵՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՂ.-

ՄԻՑ

1. Գլեխանովի բանակուլին անարխիստների հետ	123
2. Կառւցկու բանակուլին ոպորտունիստների հետ	125
3. Կառւցկու բանակուլվը Պաննեկուլի հետ	134
Առաջին հրատարակության վերջաբանը	146



Խմբագրեց Պ. Վարդապետյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սբբագրիչ՝ Մանվելյան
Կոնսորտ սրբագրիչ Լ. Արուլյան

Խմբագրեց Խ. Հրամանական հրաման և համար 585,

Պատվեր՝ № 108, ամբաժ 15.000

Հանձնվել է արտադրության 14/VII 1938 թ.

Ստորագրվել է տպագրելու 25/VIII 1938 թ.

Գինը 80 կ., կազմը՝ կալենկորից 1 ս. 20 կ., լեզերինից 1 ս. 70 կ.

Գետհրամ—Բաղաքական գրականության

հրատարակության տպարան, Յերևան, Արավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0928219

11

28449